

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 3
M A R S
1928
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂՈՓՈՒԸԿԱՆ ԳՈՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Սոցիալիստ-յեղափոխական « Դնի » թերթի խմբագրութիւնը, Փարիզում, կազմակերպեց վերջերս ազգային հարցին ներկած մի շարք ասուլիսներ, որոնց ներկայ էին ո՛չ միայն ոռու ականաւոր գործիչներից շատերը, այլև ուկրայիցի, հայ, հրէա, վրացի, ազրբէջանցի, Կովկասի լեռնական ու թուրքեստանցի ծանօթ հանրային դէմքեր: Ինչպէս եւ պէտք էր սպասել, ասուլիսները սուր հետաքրքրութիւն առաջ բերին Փարիզի բազմազգի տարագրութեան մէջ եւ պատճառ դարձան, որ մի անգամ եւս քննութեան առնեն ապագայ Ռուսաստանի ազգային փոխարարութիւնը:

«Դնի» թերթի ձեռնարկը ուշադրաւ է երկու տեսակէտից. նախ՝ իբրեւ երեւոյթ, երկրորդ՝ բառ էութեան:

Իբրեւ երեւոյթ, նա ցոյց է տալիս մտքերի ու տրամադրութիւնների զգալի փոփոխութիւն թէ՛ ոչ-ոռու եւ թէ՛ ոռու զաղաքական խաւերի մէջ: «Ողումից» յետոյ, դեռ մի քանի տարիներ առաջ աներեւակայելի էր, որ, օրինակի համար, Քերեսսիին կամ Ալեկսանտիււրը վրացի Գեգեչկորին, ազրբէջանցի թոփչեբաշւը կամ ուկրայիցի Շապովալը հանդիպէին իրար մի յարկի տակ, իսկ այսօր նրանք հաւաքում են մի ժողովում, խօսում միմեանց հետ, աշխատում են համողել իրար, ամենքի համար ընդունելի քաղաքական ուղիներ գրտնել: Այս փաստը ինքնին արդէն յատկանշական է. անտարբերութեան ու թշնամանքի սառոյցը կտորել է, կարծես. կոր կրքին եւ անհաշիւ ստեղծութեան զգացումին սկսում է յաջորդել ողջամտութիւնը: Մի երեւոյթ, որ, անկասկած, դրական է թէ՛ ոռու դեմոկրատիայի եւ թէ՛, մանաւանդ, ինքնորոշող ժողովուրդների համար:

Երեւոյթի մէջ կայ եւ մի ուրիշ յատկանշական կողմ. ոռուական ընկերակարութեան սոցիալիստ-յեղափոխական հոսանքն է, որ իր

վրա է դարձնում ինքնորոշող ժողովուրդների ընկերակարականների ուշադրութիւնն ու յոյսերը: Եւ, օրինակի համար, վրաց սոց.-դեմոկրատների պէս դաւանամուլ մի կուսակցութիւն հրաժարի՞ք է կարգում իր կուսակից ոռու մենչեւիկներին, նոյնիսկ կուում է նրանց դէմ եւ սոցիալիստ-յեղափոխականների մօտ է փնտում իր բաղձանքների իրականացումը: Մի բան, որ, անշուշտ, պատահական չէ. նա մի աւելորդ անգամ հաստատում է սոց.-յեղափոխական գաղափարախօսութեան — որ միաժամանակ եւ Հ. Յ. Գաշակցութեան գաղափարախօսութիւնն է — կատարելութիւնը ու կենսունակութիւնը ո՛չ միայն անհատների, այլ եւ հասարակական մարմինների՝ ազգերի համակցութեան կարգաւորման խնդրում:

Իհայց, ներկայ դէպքում, էականը այս չէ: Կարեւորն այն տրամադրութիւններն ու գաղափարներն են, որոնք արտայայտեցին ասուլիսների ժամանակ: Եւ այս տեսակէտից էլ յատաշղիմութիւնը անվիճելի է: Ճիշտ է, կողմերը դեռ հին դիրքերից չեն շարժւած, բայց այդ դիրքերում նստելով հանդերձ՝ արդէն երեւան են բերում հաշտասէր ոգի, միմեանց հասկանալու, իրար շահերն ըմբռնելու եւ ծագող վէճերը իրաւախոհութեամբ հարթելու ցանկութիւն: Մի բան, որ, այսօրայ պայմաններում, ինքնին արդէն նւաճում է:

Ըստ էութեան, եթէ մի քանի հրէաների յայտնած կարծիքը մի կողմ դնենք, «Դնի»-ի ասուլիսների միջոցին ազգային հարցի լուծման համար ներկայացած ձեւերը կարելի է բաժանել երկու խմբի. ոռու բոլոր ճառախօսները, որոնց հետ եւ հրէաների մի մասը, պաշտպանում էին Ռուսաստանի ամբողջութեան գաղափարը. ուկրայիցի, վրացի, հայ, ազրբէջանցի, հրէա սիօնիստներ եւ այլն պընդում էին ազգերի ազատ ինքնորոշման իրաւունքի վրա:

Յայտնած կարծիքներին ու փաստերին առարկայօրէն մօտենալիս՝ դժար է, ի հարկէ, շնորոշեն, որ երկու կողմերն էլ ունեն շատ լուրջ հիմքեր պաշտպանելու համար իրենց տեսակէտը: Անշուշտ, իրաւունք ունեն ռուս գործիչները պահանջելու, որ ինքնորոշման իրաւունքից բխող հետեւանքները կարգաւորելիս՝ ի նկատի առնեն ո՛չ միայն ինքնորոշող ազգերի, այլ եւ ռուս ազգի շահերը: Հասկանալի է նոյնպէս եւ նրանց այն մտահոգութիւնը, որ Ռուսաստանից անջատող ժողովուրդները գործիք չբաժանն հակառուս ուժերի ձեռքին, ինչպէս նաեւ ապահովեն Ռուսաստանի տնտեսական անհրաժեշտ կարիքները: Պարզ է, որ ռուս մարդը, ինչ հոսանքի եւ պատկանի, չի կարող հաշտուել այն մտքի հետ, որ, օրինակի համար, Կովկասում հաստատի անգլիացու կամ Թիւրքի ազգեցութիւնը, կամ Իսպանի նաւթը խլի ռուսական արդիւնաբերութիւնից, կամ Անգլիոյ վրասի ու Թուրքեստանի բամբակը ծառայի, ասենք, անգլիական ճարտարաւեստին, իսկ ռուսական գործարանները մնան ստանց հոսմ նիւթի: Սրանք բոլորը պարզ եւ անվիճելի բաներ են:

Իայց այստեղից դեռ չի հետեւում այն, ինչ ռուս դեմոկրատներն ու ընկերվարականներին ցամաք ստալ էն քաշում. կամ ոչ-ռուս ազգերը պէտք է դաշնակցական կապերով միանան Ռուսաստանին, կամ՝ պատերազմ, արիւն ու երկաթ: Այսպէս մտածել՝ նշանակում է հիմքից ժխտել ազգային ինքնորոշման սկզբունքը: Որովհետեւ՝ ի՞նչ է այդ սկզբունքի էությունը, եթէ ոչ, նայի եւ առաջ, յարգանքը դէպի իւրաքանչիւր ազգի զերիշխանութեան իրաւունքը: Ամէն մի ազգ ի՛նքն է տէրը իր ճակատագրի, ի՛նքն է որոշողը, թէ ի՛նչն է լաւագոյնը իրեն համար. անկախութիւնը, դաշնակցութիւնը, ինքնավարութիւնը, թէ՞ ուրիշ մի ձեւ: Պետական-քաղաքական եւ ո՛չ մի ձեւ ինքնանպատակ չէ: Նպատակը ժողովուրդն է, նրա գոյութեան ապահովումը, բոլոր ընդունակութիւնների անկաշկանդ զարգացումն ու բարգաւաճումը: Չեւերը յարափոփոխ են. նպատակը՝ յաւիտենական: Եւ ժողովուրդը ինքն է որոշողը, թէ, տւեալ պայմաններում, քաղաքական ձեւերից ո՞րն է ամենայարմար իրեն համար: Այս իրաւունքը հանդիսանում է ազգային զերիշխանութեան հիմնական տարրը: Մերժել այն՝ նշանակում է հանգնած մնալ ազգային անհաւասարութեան եւ իմպերիալիզմի գետնի վրա:

Իաշնակցութիւնը՝ ֆեդերացիան, անկասկած, ազգային ինքնորոշման ձեւերից մէկն է — եւ մէկը լաւ ձեւերից: Իայց նրա հիմքն էլ կազմում է ազգային զերիշխանութեան սկզբունքը: Իւրաքանչիւր ժողովուրդ ի՛նքը պէտք է որոշէ յօժաբանկամ՝ դաշնակցութիւն է հարկաւոր իրեն, թէ՞ ուրիշ բան: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ ժողովուրդը լինի ազատ, կարողանայ անկաշկանդ կերպով երե-

ւան հանել իր կամքը. «ինքնորոշւել»: Հետեւաբար, եթէ նոյնիսկ դաշնակցութիւնը համարենք ազգերի համակեցութեան լաւագոյն ձեւը, ստիպւած ենք ընդունելու, որ անկախութիւնը նրա նախապայմանն է: Զրկել մի ժողովուրդ անկախութեան իրաւունքից՝ ասել է՝ զրկել նրան ազատ համաձայնութեան եւ դաշնակցութեան իրաւունքից, այսինքն՝ անհնար դարձնել դաշնակցական պետութեան գոյութիւնը: Վերից տրւած հրամանով դաշնակցական պետութեան օրինակը մեր աչքի առջեւ է — Սորոչը. Միութիւնը: Ի՞նչ տարբերութիւն նման դաշնակցութեան եւ բռնապետութեան ու կենտրոնացման միջեւ:

Որ կողմից էլ մօտենալու լինենք խնդրին, եթէ ընդունենք ազգային ինքնորոշման դադարը, պարտաւոր ենք ընդունել եւ նրանից տրամաբանօրէն բխող բոլոր հետեւանքները: Իսկ այդ հետեւանքները յանգում են մինչեւ անկախութիւն: Հակառութեան մէջ են ռուս գործիչները, որոնք յայտարարում են, թէ իրենք ընդունում են ազգային ինքնորոշման իրաւունքը միայն դաշնակցութեան սահմաններում: Այդ իրաւունքը սահմաններ չի ճանաչում: Սահման կարող է դնել միայն ինքը՝ ինքնորոշող ազգը:

Այլ է դրութիւնը, երբ հարցը դրւում է զուտ գործնական հողի վրա, այսինքն, երբ ռուս ընկերվարականներին ցամաք՝ ընդունելով հանդերձ ազգային ինքնորոշման սկզբունքը իր բովանդակ ծաւալով, գտնում են, որ այդ ինքնորոշումը՝ պէտք է կատարուի այնպէ՛ս, որ ապահովեն ո՛չ միայն ինքնորոշողը, այլ եւ մնացող ազգի իրաւունքներն ու շահերը: Այս պահանջը միանգամայն հիմնաւոր է եւ արդար: Ընդհանուր կեանքը Ռուսաստանի մէկ յարկի տակ, տարիների ու դարերի ընթացքում, առաջ է բերել բազմաթիւ կապեր, որոնք չեն կարող խզել միայն մի կողմի իրաւունքների ու շահերի երաշխաւորումով ու եթէ խզեն, անխուսափելիօրէն լայն դուռ կը բանան բախումների համար: Ընկերային վարիվորները ժամանակ կոչը տարբեր կարող է ստեղծել այս կամ այն միակողմանի դրութիւնը, բայց երբ տարբերը հանդարտում է, վրա է հասնում բնականոն կեանքը, նման դրութիւնները չեն կարող զոհացնել մարդկանց, եւ երբ այդ միակողմանի դրութիւնները իտաղադութեամբ բարեփոխելու ձիւղերը դրական արդիւնքի չեն յանդուժ, հանդէս է դալիս բիրտ ոյժը: Հետու չգնալու համար, ահա հայ-վրացական վէճն ու հակամարտութիւնը, որ պատճառ դարձաւ արիւնահեղ ընդհարումների եւ որ այժօր էլ դեռ յուզում է երկու զբից ժողովուրդներին:

Թէ՛ Ռուսաստանի, թէ՛ մանաւանդ, ինքնորոշող ժողովուրդների համար կը լինի մեծ աղէտ, եթէ, ի վերջոյ, գէնքի ուժին թողնուի լուծումը ազգային այն խնդիրների, որոնք

հրապարակ են դրած յեղափոխական տարերքի զօրութեամբ: Ընդհակառակը, փոխադարձ իրաւունքների յարգանքը աղաչյին ինքնորոշման սկզբունքի շրջանում, համաձայնութեան ու շահերի ներդաշնակութեան ճանապարհը երկու կողմի համար էլ կը բանայ զարգացման նոր, փայլուն դարադրուխ: Եւ միայն ա՛յդ ճանապարհով կարելի էր լինի հասնել այն իդէալներին, որոնք նւիրական են հաւասարա-

պէս ե՛ւ ռուս, ե՛ւ ոչ-ռուս ընկերվարականների ու ռամկավարների համար: Այս տեսակէտից, մենք ողջունում ենք ամէն մի փորձ, որի նպատակն է համաձայնութեան բերել ժողովուրդներին եւ խաղաղ ու եղբայրաբար լուծել մէճ ու բախում առաջ բերող հարցերը: Իսկական ընկերվարականների ու ռամկավարների համար ուրիշ ճանապարհ գոյութիւն չունի:

ՄԵՐՁԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԿՆՃԻՌՆԵՐԸ

(Ընդհանուր ակնարկ)

Քառամեայ մեծ պատերազմը, ձեւափոխելով Փոքր Ասիոյ աշխարհագրական և ազատագրական պատկերը, հիմնովին կերպարանափոխեց նաեւ անոր բնակչութեան և իշխանութեան փոխյարաբերութիւններու վիճակը, որ գոյութիւն ունէր նախապատերազմեան շրջանին:

Պատերազմի նախօրէին Թիւրքիան, թէեւ անդամատուած եւրոպական իր հողամասերէն, այնուամենայնիւ ամբողջութիւն մըն էր իր «բուն հայրենիքէն» մէջ և ազգայնական տարամբժ կրքէն կուրացած ու յափշտակուած համխալածական ցնորքներով՝ կը խորհէր պատերազմի կրակէն շագանակներ հանել ի հաշիւ Կովկասի և Եգիպտոսի: Այս նպատակին հասնելու համար, նախ՝ ծրարեց միատարր և իւրամ թիւրքերու մը ստեղծել՝ մաքրելով հայերը, յոյները և ասորիները, որմէ յետոյ իր արբւնտտ մագիլները ուղղեց դէպի Կովկաս...

Պարկաստանը, շնորհիւ իր ներքին երկպառակութիւններու և պալատական դաւադրութիւններու, զրեթէ կորսնցուցած էր իր քաղաքական և, մասնաւոր տնտեսական անկախութիւնը՝ իրապէս բաժնուած Անգլիոյ և Ռուսաստանի միջև: Առաջինը հարաւային մասէն ճամբայ հարթած էր դէպի իր խոշոր գաղութները, իսկ Ռուսաստանը տէր էր դարձած հիւսիսային մասին՝ ապագային դէպի Պարսից ծոց իջնելու երազով և Անգլիոյ դէմ պատնէշ մը կանգնեցնելու օրւան քաղաքականութեամբ:

Անգլիան, ստեղծ ցատ, նախապէս ապահոված էր իրեն նաեւ Պարսից Ծոցի արեւմտեան անկիւնը՝ հովտանաւորելով Բոփլսթի Եէլիւ և օգտուելով անոր նաւահանգիստէն:

Ճրանասն դեռ 60-ական թւականներէն թեւաքիած էր Լիբանանը՝ յարմար աւելի սպասելով բարձրանալու դէպի Կիլիկիա, որուն հասաւ օր մը, բայց չկրցաւ բաւ արժանւոյն դնահատել զայն ու պահել:

«Տաք ծովը» իջնելու երազներու իրականացումը մօտեցած էր նաև Ռուսաստանի համար, բայց ներքին յեղաշրջումները ժամանակաւորապէս կասեցուցին անոր արշաւը:

Առով հանգերձ, Թիւրքիան անտեսապէս բաժնելու

ահարկու պայքարը կը մղէր մեծ պետութիւններու մէջ: Ասոնց մէջ Գերմանիան էր միայն, որ զբահապատ իր դէմքը Բիւրլին-Բաղդադ երկաթուղագծին ստուերին մէջ պահած, կը սպառնար իրական տէրը դառնալ Փոքր Ասիոյ ամբողջ տարածութեան: Եւ, ո՞վ գիտէ, եթէ պատերազմը քանի մը տարի վերջ ծագելու ըլլար, թերեւս, ան պարտադէր յաղթականի պայմանները...

Պատերազմի ելքը, խորտակելով շատ մը պատահութիւններ, հիմն ի վեր տապալեց նաև շատերու երազները, և իրազորմեցան անյայտ համարած քաղաքական իդէալ:

Կենտրոնական պետութիւններու և Թիւրքիոյ պարտութեամբ հրապարակ բերեցան (մեծ պետութիւններու քաղաքական հաշիւներու բերձամբ) նոր ազգեր իրենց նոր հողամասերով և տարբեր քաղաքական ուղիներով, որոնք նոր բարդութիւններ և նոր կնճիռներ ստեղծեցին համաշխարհային քաղաքականութեան և միջազգային յարաբերութիւններու մէջ:

Ներկայ պարագային ես կուզէի ընդհանուր ակնարկ նետել միայն Թիւրքիոյ և, ընդհանրապէս, Արեւելքի հետ առնչութիւն ունեցող քաղաքական կնճիռներու վրա:

Թիւրքիան պատերազմի մէջ կորսնցուց իր հողամասերէն, ի միջի այլոց, Արաբիան, Միջագետքը, Պաղեստինը և Սիւրիան — ծայրամասերը իր հարաւային ափրապետութեան: Մուսուսի գլխաւորաբար փաստօրէն անոր թողուց Հայաստանը, իսկ, որ զլիաւորն է, Թիւրքիան չգինաթափեցաւ: Իսկ Մէվլըր աշխարհ բնակիւր, դիւանադիտօրէն պարտութեան մասնեց յաղթականները՝ կորցնելով Լոզանի դաշնագիրը:

Անգլիան էր զլիաւոր ժառանգը անխառնուած Արաբիոյ, Միջագետքի, Պաղեստինի և ժամանակ մը Սիւրիոյ:

Սկիզբէն Անգլիան ջանաց վերածնցնել արաբական մեծ կայսրութիւնը՝ Մէքքի Եւլի շիւսէյնի դայիստիլ նաև համաձայնեցնելով Կարմիր և Պարսից ծոցերուն միջև տարածուող հողամասերը: Հոն կուզէր փոխադրել նաև իւրամական իսլամաբանական կնճորոնը: Այս նպատակով

Շէյխ Հիւսէյնի ջովը զբաւ գնդապետ Լօւրնիւր՝ ճարպիկ և յանդուգն թաղաքազէտ մը, որ հոսեցուց ստերկինգներու հեղեղը... 1917-ին Բալֆօրը կը յայտարարէր Պաղեստինի անջատումը Արաբիայէն և միայն 1920ին էր, որ Ասն-Ռէժօի մէջ, Ֆրանսայի կը թողուր Սիրիան:

Անգլիան սկզբի տարիներուն մէջ կատարեալ տէր կը ճանչնար իրեն այդ երկիրներուն մէջ և իր բերտ վարչաձևը այնքան դայացուցց Իրաքի արբանքը, որ անոնք 1920 թւին բարձրացուցին ապստամբութեան դրօշը. ապա ճամակերպական անգլիացիներու այն սպաննալիքին առջև, թէ Իրաքի հիւսիսային մասերէն իրենց ուժերը պիտի քաշեն և սահմանները պիտի բանան թիւրքերուն առջև... 1921 թւին Չըրչիլի նախագահութեամբ եղիցանումը մէջ դումարեամբ անգլիական բարձրատեսիճան պաշտօնականը Բոլովի մէջ կորուչի Արաբիան, Իրաքը և Անգլոյորդանանը վերածել առանձին պետութիւններու... Անգլիական հսկողութեան կերպացման համար, անշուշտ: Նոր պետութիւնները կը կազմուին, և Շէյխ Հիւսէյնի մէջ որդին՝ Ֆէյսալը Իրաքի, իսկ Ապալըսը՝ Անգլոյորդանանի թագաւոր կը հռչակուին: 1922 թւին Անգլիան դաշնագրի մը օրինակը կը ներկայացնէ Շէյխ Հիւսէյնին, որուն մէջ անգլիական հովանաւորութիւն տեսնական անաշորհներու լիակատար տէր կը ճանչնէր ինքզինքը: Հիւսէյն կը մերժէ այդ և կը յայտարարէ Պաղեստինի կցումը Արաբիոյ: Ի պատասխան անգլիացիները կը կազմակերպեն վաճառքներու արշաւանքը Հիթլարի վրա, որ կը նստած էրկիրը և Իսլիմաուտ տէր կը հռչակուի: Շէյխ Հիւսէյնը կը քաշի Եճմէն և կը յայտարարէ, թէ՛ «տուրխ է, որ պարտուած է արաբէ մը և ոչ անգլիացիներէն»:

Եւ այսօր հոն իւրդային աշխատանք կը կատարէ թիւրքին բոլշևիկ ուսուցիչը աշակցութեամբ, իսկ Անգլիան կը ջանայ ամբողջել իր տիրապետութիւնը՝ այսպէս հասնել կամենալով իր նպատակին՝ Միջերկրականէն-Հնդկաստան տանող հողամասերը ենթարկելով իր վերահսկողութեան:

Միևնոյն ժամանակ Մուսուլ սանջակի վէճի լուծումը զիւրացնելով Լոդանի խորհրդաժողովին մէջ՝ ամենաճարակի իսղիկով յաջողեցաւ ամբանալ հան, որպէսզի պատեճ առիթով մը (օրինակ, իտալո-թիւրք պատերազմի մը պարագային) սողայ դէպքի վանայ ծովը և տիրէ այն նրբանցքին, որ կը սկսի Սղեբզէն և կը յանգի պարսկական սահմանը:

Պէտք չէ մոռնալ, որ այս բոլոր թաղաքական մեղանյութիւնները աշխարհապարսկական հիմեր պարունակելով հանդերձ, գերազանցապէս կը ձգտին անտեսական և ռազմական շահեր ապահովել: Երկիրորդական դժի վրա են ձգած ներկայիս տեղական արտադրութիւններու և համ քերթերու արտահանման շահագրգռութիւնը: Նախկին անհաշուելի հարստութեան աղբիւրներն են, որ հանդիսա ջուռն շեն տար դրամատիրական պետութիւններուն:

Տէր դառնալով Միջագետքի նախային հարստութեան, Անգլիան կը ձգտի ձեռք ձգել նաև Հարաւային Պարսկաստանի՝ Մօհամմարայի և նոյն դժի վրա դառնող խոտոմնայի հողային շերտերը: Այս նպատակով քանի տարիէ ի վեր թաղաքական գործիք դարձուցած են նոյն վայրերու գլխաւոր Շէյխը, իւրտոմնիք հանել կուսայ անոր և կը ձգտի յեշտալ չըջանը միացնել

Իրաքին: Անցեալ ամսուն մէջ Ռուսիստանի շարժումը պարսիկ կառավարութեան դէմ այս աստան ունէր:

Ռիպա շահի ինքնիշխան դառնալու որոշումը և Պարսկաստանը անկախ դարձնելու իր ձգտումները, որոնք երևութեամբ կը քաջալուրին բուլշևիկեան Ռուսիայէն շեն կրնար երբեք հանկու ըլլար Անգլիոյ:

Պարսկական Կածար հարստութեան պաշտպանութիւնը միապետական Ռուսիայէն փոխանցած էր Անգլիոյ, անոր անկումէն վերջ փորձեցաւ դաշն ևս կաշկանդել անտեսական-Ֆրիանտական հարկադրանքներով, բայց զինուոր-շահը կանոնաւորելով հարկային սխտեմ մը, ոչնչացնելով աւատականութիւնը, կեղծունացնելով պետական իշխանութիւնը և երկաթուղային և այլ մենաշնորհներ տալով՝ կը յաջողի խուսափել անայտմ իր հայրենիքը վաճառելու և յանձնելու վտանգէն:

Այն օրէն, սակայն, Լըր ստորագրեցաւ ռուս-պարսկական ստեւարական դաշնագրից, որու հետևանքով ռուսերը ապա մուտք դուռն Պարսկաստանի մէջ, հանգամանք մը, որ կը զիւրացնէ բուլշևիկեան կազմակերպական գործունէութիւնը թէ՛ Իրաքի և թէ՛ մանաւանդ, Պարսկաստանի հարաւային և Արևելեան սահմաններուն վրա, ասիկ զատ խաղաղ ճամբայ կը բանայ անտեսական մարքերուն մէջ՝ տարածելով անոնց թաղաքական աղբջութիւնն ևս, այն օրէն Անգլիան կարուկ շարժումով մը իր երեսը դարձուց Պարսկաստանէն և ամէն քայլափոխին կը ջանայ գզգզնել տայ, թէ ինքը որքան օգտակար բարեկամ է՝ նոյնքան վնասակար թշնամի: Կրաւականաւորով Ռուսիստանի խուսժութիւններով, կը կարծի, որ Փէ՛հլէ՛վիի հարստութեան դէմ դաւադրութիւններն ևս անկէ կը քաջալուրին և պարբերական խուսժութիւնները կը կազմակերպուին պարսկական Բիւրոխտանի մէջ, հաւանաբար անկախ կամ ինքնուրոյն Բիւրոխտանի խոտոմններով: Արդիւնքը, սակայն, այն եղաւ, որ շահը խոտօրէն զսպելով շարժումները՝ գերեմարեց անոնց պարագլուխները, որոնք այժմ կը ստապակեն Թէհրանի և Թուրքիի բանտերուն մէջ:

Բուլշևիկեան Ռուսաստանի վերը յիշածս յաջողութեան, Անգլիան, կը թւի թէ, կը հակադրէ պարսկական Ատրպատականի դէմ Բէ՛մայի կողմէ կազմակերպւած դաւադրութիւնը:

Պարսկական Ատրպատականը, ջեմալական թիւրքերոյ համար այն հարթ և վստահելի ճամբան է, որ կը սանի դէպքի կողմաւան Ատրպատական և անդրկասպեան երկիրներ: Պարսկական, այսպէս ըսած, յեղափոխական ներկայ իշխանութեան օրով, երբ ներքին պետական կըցերը և հակամարտութիւնները դադրած շեն, Երբ նոր շահը կհանքի և մահան գերմարդկային պայքար կը մղէ թշնամիներու դէմ, պետութեան կազմակերպումն և ամբայցման ու ազգային վերածնութեան համար, երբ սկզբնէ միայն դրամ կանոնաւոր բանակի մը, որուն թիւը (30-50,000) շատ շնչին է, անշուշտ, ներքինի հետ նաև արտաքին թշնամի մը զիմարբաւելու համար, — Թերեւս, յարմար վայրկեանը համարելի աւելի ու աւելի խճճել Պարսկաստանի ներքին և արտաքին կհանքը ու հարկադրել գայն ծուկի դալու:

Բէ՛մայական թիւրքեան պարսկական Ատրպատականի թիւրք զպզպանակութեան մէջ աւելի վստահելի պատար մըն է ներկայ թէ՛ ապագայ ռուսական յառաջ-

խաղաղման դէմ, քան յարեւելանայէս թոյլ Պրակտատանը իր յարաբերութիւնը քաղաքականութեամբ. մինչդէռ թիւրքերէն չի կրնար բարեկամ մնալ Ռուսաստանին: Անգլիոյ այս կրաւորական քաղաքականները Բէմալին, թերևս, իսող մըն է վտանգի տակը ղինը շահը և ապա հարկադրել զայն իր զօնութեանը ղիմելու...

Պարսկաստանը այսպիսով կը գտնուի այժմ ամենածանր և փափուկ քաղաքական երկրներէն առջև. լինել Անգլիոյ, թէ՛ Ռուսաստանի հետ: Այսպէս է, որովհետև Մերձաւոր Արևելքի բնականոն կեանքը կենդանոտող ուժերը զլիսաւորապէս այդ երկուքն են, որոնք վաղ թէ ուշ պիտի ճակատեն...

Բոլոր կամ մեծ պետութիւնները, որոնք ստանձնեցին այս կամ այն արևելեան երկրի հնոցատարութիւնը, անշուշտ, խոշոր շահեր կ'ապահովեն իրենց: Անգլիան այն պետութիւններէն է, ներկայ պարագային, որ ամենէն շատ քաղաքական ակնկալութեամբ ստանձնեց ռուսաւորի դերը: Իր երազն է՝ աչքը դառնալ Միջերկրականի արևելեան արևի ամբողջութեամբ՝ լայնածաւալ անապատները դարձնելով իր բնական պատարհները նաւթային անբաւ հարստութեան և Հնդկաստանի պաշտպանութեան համար: Պաղեստինը իրամասը մըն է մէկ կողմէ Սուէզի ջրանցքը և Եգիպտոսը պաշտպանելու, միւս կողմէ խորթոս մը՝ սեղմելու Փրանսացիները Սիւրիայէն... Աստուք, հարկաւ, էշխողի տեսչանքներու ձգտումներն են, որոնք կրնան օր մը անյադժեխի խոչընդոտելու Նադիպէլ:

Անոնունչ չեն հանդուստեր նաև ներկայիս Հովանաւորող ազգերը՝ Հովանաւորողներու վարած քաղաքականութիւնը: Իրարի և Արաբիոյ մէջ քաղաքակրթական ձեռնարկներ կը կատարեն այն շափով, որքան հարկաւոր են տիրողներուն. ժողովուրդը գիտակցօրէն կը պահել տգիտութեան մէջ, տնտեսական խոշոր ձեռնարկներ կը կատարին, ուր հօտերու պէս կը լեցան... պարսիկ քաղաքները: Եւ, վերջապէս, Անգլիան ոչինչ չիւնայեց, որպէսզի Իրաքը չունենայ իր սեփական բանակը: Ծրամտացիները զօրքով կը կատարեն Սիւրիան, իսկ անգլիացիները միայն սակաւաթիւ սպաներով, որոնցմէ մէկ-մէկ հատ կը գտնէք բոլոր հիմնարկութիւններու մէջ. անոնք են իրական էշխողները: Սակայն, այն գիտակցութիւնը, որ անկախ պետութիւն է տրեւձ իրենց, արևելեան այդ ազգութիւնները քաղաքականօրէն ի վիճակի կը դարձնէ ռմբաստանայու հովանաւորողներու՝ դէմ է իրական տէր գառնալու իրենց երկրին՝ մեծ ցնցումներով չպիտի կատարեն այս շարժումները, որովհետև կենսաբի տրամաբանական ընթացքը պէտք է արդարացնէ և Անգլիոյ կամ միւս Հովանաւորողներու ժողովուրդներու նման պոռթկումները: Արաբիոյ և Սիւրիոյ արևտալանօրէն բաժնուած պետութիւնները վաղ կամ ուշ, բայց անխուսափելիօրէն պիտի ձգտին ձուլելու կամ համադաշնակցութիւն կազմելու: Եւ պատմութիւնը պիտի կրկնուի՝ կենսից կոչելով արաբական միացեալ կայսրութիւնը, որուն վերապահած կրկնա գործնական մեծ դեր մը Մերձաւոր Արևելքի քաղաքական հորիզոնի վրա:

Ռուս-անգլիական ճակատամարտին մարքը բնականօրէն, իբր չիման անմիջական կէտ, Պարսկաստանն է ներկայիս: Անգլիան Իրաքը կը դործածէ, յաճախ, անոր շահերու պաշտպանութեան անունով, իսկ Ռուսաստանը՝ թիւրքերէն այն շահերու նոյնութեամբ

հանդէս գալով: Պարսկաստանը, իր աշխարհադրական դիրքի շնորհիւ հարկադրեւած է կամ քաղաքական ու ռազմական զօրեղ ոյժ մը դառնալ այնքան, որ ի վիճակի ըլլայ չնգմելու յիշածս երկու վիթխարի ուժերու բունցեամբարին մէջ և անխախտ պահելու չէջօք տարածութեան իր դիրքը, կամ ժամանակ վատակելու համար՝ խաղալ երկու պարաններու վրա որոշ քաղաքական և տնտեսական զոհողութիւններով: Պարսկաստանը երկու պայմանները մատճամանակ, բայց Ֆինանսապէս խիստ թոյլ ըլլալով՝ անկարող են իրենց բանակը մեծցնելու և պատրաստելու այնքան, որ յարգանք ստեղծեն դռնէ թիւրքերէն, որ 5-700,000 զօրք կրնայ ունենալ... Պարսկաստանը կըբար, հարկաւ, դաշնակցներ փնտռել, ինչպէս Իրաքը, որ դեռ անկախ չէ, Աւղանիստանը, որ վրաս ազդելու շափ դեռ ոյժ չունի, և, մասնաւոր, կրնար իրեն նիւրած ներքին դաշնակցներ վաստկել, որոնք, թէ և ոչ այնքան ուժեղ, պիտի աջակցին անոր ստանց յետին մտքի:

Իսկ բոլշևիկ Ռուսաստանը մէկ նպատակ ունի միայն — կարմրեցնել Պարսկաստանը և կարմիր համադաշնակցութեան այդ նոր մասի միջոցով երթալ ցըբելու Անգլիոյ ճամբուն վրա և հաստատուել ճտաք ծովերու» արեւորն:

Միւս կողմէ բէմալական թիւրքերէն, փոխելով իր համաթուրանական ցնորքներու ուղեգիրը, կը ճգնի Պարսկական Ատրպատականը դարձնել իրեն յետարան և բոլշևիկներու պատրաստած Զուլֆա-Ալէաթ երկաթ թուղազրէր Իզդիբէն և Քաւրիզէն միւսժամանակ օգտագործելով՝ Կովկասեան Լեւոնաչկային հասնել: Այս նպատակով երկու տարի է ի վեր Պարսկաստանի Ատրպատականը, որ թիւրք ազգարանկութիւն ունի, հեղեղներ է իր գործակալներով, գինումներէ քաղտնի միջերանոցներ է հաստատել, անուղակի ազդեցութեամբ թրքական պաշտօնեաներ նշանակել կուստայ սահմանամերձ վայրերուն մէջ, պրոպագանդի սահմարան միոջնեքէն Կոզտէի և բոլշևիկներուն հետ կը ջնայնայ հողեւհ բորբերի տեղակայն ազգարանկութեան մէջ: Թիւրք բոլշևիկ գաղտնի գործակալները նոյնիսկ ամէն միջոց գործ կը դնեն գրաւելու Հարաւային Պարսկաստանի շրջերը՝ խոստանալով ազատ և անկախ Գիւրջիպտան... Ի հաշիւ Պարսկաստանի: Այսպիսով, Բէմալը կը կարծէ, շրջերը ուժերը ըլլատել զատ, անոնց ուշադրութիւնը և ազատազրական գործունէութեան կեդրոնը թրքական երկրէն Պարսկաստան փոխադրելու, ձեռնարկ մը, որ բոստանային կը քաղաքակրթ. բոլշևիկներու կողմէ թէ և, բայց չի մոռնար այդ հում կոպիտ ուժը իրեն գրաւելու՝ ի հարկին գործածելու համար, թիւրքերէն դէմ ևս:

Թիւրքերէն լայնօրէն կօզտուի բոլշևիկեան Ռուսաստանին՝ մաղթելով անոր երկար կեանք, որովհետև գիտի, թէ անոր անկումովը իր օրն ևս կը սեւնայ: Բոլշևիկ Ռուսաստանին պէտք է զօրեղ թիւրքեան՝ գործածելու համար բոլշևիկեան պետութիւններու դէմ, միաժամանակ ոչինչ կը ինչպէս զայն ևս թախտելու ճարմիրներու համադաշնակցութեան» մէջ:

Պարսկաստանն է այն խոշոր և կարեւոր ռազմադաշնոր, որտեղ հաւանաբար բախւեն ռուս-թրքական և անգլիական ճակատները, ուրկէ կը խորհի շահել

Քիւրքեան, որ կը կարծէ յաջողութիւն ունենալ, քանի որ Ատրպատականի իր քաղաքականութեան մէջ, կը թել թէ ան հօգուտի թէ՛ բոլորէիկներէն և թէ՛ Անգլիոյ ժամանակաւոր հասութիւնէն:

Սակայն, Քիւրքեան ճիշտ նոյն ճամբով կերթայ, որով պարզած է պատմութեան մէջ՝ արիւն նոր երկիրներու՝ տարածողական նպատակներով... քամելու, սպասելու և քայքայելու համար:

Մեծ պատերազմէն ի վեր ահաւոր անպատի վերածած իր երկիրը դեռ նոյն վիճակին կը մնայ, իր էշխանութիւնը կը պահպանէ ահարկովով. քիւրքեան ժողովրդի քաղաքակրթական բարձրացման համար ոչինչ չընելէ գատ, օրինակակ կողոպուտով կապոր, ստեստութեան և արդիւնաբերութեան բացարձակ ըտլքայում, ստեղծագործման ոչ մէկ արտայայտութիւն և փոքրամասնութիւններու անխտիր ոչնչացման քաղաքականութիւն՝ բիրտ և բռնապարտիկ միջոցներով: Ահա այս է անոր շարժած դէմքի իրական պատկերը:

Պատերազմին յաջորդող տարիները Մերձուոր Արեւելքի քաղաքական կեանքի մէջ երկու նոր գործօններ հրապարակ բերաւ. կովկասեան պետութիւնները և քրդական հարցը:

Կովկասեան պետութիւններու գոյութիւնը նոր կնիքներ բարդէն Արեւելքի երկնքի վրայ, որ մօտ ապագային շատ աւելի դժուարալոյծ պիտի դարձնէ, գանտնք: Յիշեալ պետութիւններու միեանց տիրելու տեղիք, անոնց կեդրոնախոյո ձգտումները և ճօրիջնտարիները», անկասկած, ի վնաս իրենց, բայց մեծաոյն չաճեր պիտի պահճովն այն ուժերուն, որոնք իրենց ձեռքը կուզեն պահել Եւրոպայն ու Ասիան միացնող այդ կամուրջի բանասխինքը:

Քիւրքեան, յանձնի կովկասեան Աղբէջնանի, ապահոված է արդէն իր համբան դէպի կովկասեան լեռները, Վրաստանի դիրքը ապահոված է, շնորհիւ իր քաղաքականութեան՝ իրմէ զօրեղներու վերաբերմամբ, Հայաստանն է միայն, որուն քաղաքական արդար իղձերը չիրականանալէ գատ մեծապէս տուժեր է անոնց համար, ուստի, պէտք է որ որոնէ բախտակից և շահակից ուժեր, կամ ստեղծէ ընդհանուր շահեր իր անմիջական դրացիներուն հետ՝ կուլ չերթալու համար պատրաստող ահաւոր փոթորիկներուն և իրագործելու իր ազգային ամբողջութիւնը և ինքնուրոյնութիւնը պահելու նպատակը:

Վեց-եօթ միլիոնի հասնող կովկասեան ազգաբնակչութիւնը և հարկին կէս միլիոնի ուժ կրնայ հանել իր ընդհանուր հարկներիք և անկախութեան պայտպատութեան համար, ինչ որ պէտք է հաշի առնին Ռուսաստանը, Քիւրքեան կամ Անգլիան: Եւ այս, ոչ անհնար դասաւորման մէջ, Պարսկաստանը եղբայրական իր միտը պիտի ունենայ՝ աղաւտելով գիշատիչներու արտոճակներէն:

Բոլորովին նոր երևոյթ է քրտական հարցը, որ փոքր առ փոքր երևան կուգայ Մերձուոր Արեւելքի քաղաքական հորիզոնի վրայ: Կուրքայ աւելի կնճռոտելու թնճուկը, որովհետև Մերձուոր Արեւելքի Լեքի ամենակարեւոր պետութիւններու մէջ բաժնւած է Քիւրքեան տանը՝ Քիւրքեան, Պարսկաստանի և Իրաքի: Երեք միլիոնի մօտ ջերուր ազգաբնակչութիւնը հոծ բազումութեամբ կապոր յիշեալ երեք պետութիւններու ծայրամասերու վրա և ամէն տեւանիւր ունի ապագային կայմելու Միացեալ Քիւրքաստան: Այս հեռանկարն է, որ

երկիւղ կը ներշնչէ շահագրգռող երեք պետութիւններուն, որոնք քանի մը տարի առաջ փութացին ջերուորու դէմ պաշտպանողական դաշինք կնքել... Արժէ, հարկաւ, որ անոնք վարնան: Քիւրքեանը ռազմիկ ժողովուրդ են, որ հետզհետէ քաղաքականապէս կը հասունանայ, ազգային միութիւն կը կազմէ, հայրենիքի սպասութեան դաղափարը կը ձուլէ հակընդդէմ հասանքերը իրար և հրապարակ կը բերէ Քիւրքաստանի անկախութեան նշանաբանով: Քէմալական Քիւրքեան է որ հասունացող այդ շարժումը: Քէմալը անոնց համար եղաւ և է՝ այն, ինչ որ եղաւ մեզ համար Ապտիւլ Համիտը. համիլայմական ցնորքը վտարելէ վերջ, համաթուրանական մոլոտանդներ չեն կրնար հանդուրժել օտար տարրի մը և 8-10 տարիէ ի վեր ջերուորու աստիճանական բնաջնջման ձեռնարկած է:

Տեսականապէս իսկ Միացեալ Քիւրքաստանի մասին այսօր միտք և խօսք անգամ չկայ և չի կրնար ըլլալ, որովհետև ջերուորները այնքան հասուն և դիտակից են, որ Միւրքայի, Իրաքի և, մանաւանդ, Պարսկաստանի մէջ վայելած մարդասէր և անկաշկանդ ասպնջտականութիւնը ռոգի տակ չեն ուզեր տալ՝ հանելով իրենց դէմ այդ բոլոր պետութիւններուն:

Քէմալական Քիւրքեան լարած խաղերը արդէն ատոր կը ձգտին թէ ջրտերը յլատելու և թէ անոնց ուժերը իրմէ վանելու նպատակով:

Իսաական է եթէ յիշանք պետութիւնները ներքին մշակոյթի և ազգային ներքին զարգացման հնարաւորութիւնները ստեղծեն անոնց համար և հաւատարմ ու զօրեղ տարր մը պիտի գտնեն իրենց աշակից՝ արտաքին բոլոր թշնամիներու դէմ:

Քիւրքեանը հաշիւը բացատարէ Քիւրքեան հետ է. այս նպատակի մէջ անոնք, յանձնի իրենց բախտակից ազգերու, պիտի գտնեն ամենամեղմ ժայտակիցները: Մերձուոր Արեւելքի մէջ մէկ նոր և խոշորագոյն արտաքին գործօնի մը երեւումը կը նախատեսուի: Պատմական Հոռմն է այդ, որ յանձնի Մուսոլինիի իրեն համար տեղ կը փնտոէ զարեւուն տակը:

Եւ Մերձուոր Արեւելքի մէջ մեծ և փոքր պետութիւններու նաճողական ձգտումները, փոքր և մեծ ազգութիւններու միացած թէ առանձին մղելու պատրաստ բունդ պայքարը, չի կրնար չանդրադառնայ Եւրոպական և միջազգային կեանքի վրա. վա՛յ անոնց, որոնք չեն նախատեսեր դայիք օրերը և պատրաստ չեն դուռիք դիմապարտելու գայն:

Եղբայրացութիւն. —

1. Պատմական Քիւնը կը վերադառնայ նորէն. կեանքի ընթաց կուգան նորէն Հոռմմը, արաբական կայսրութիւնը, Պարսկաստանը և Օսման-Ռուսիան ցեղը:
2. Մերձուոր Արեւելքի զգաղութիւնը մեծ ճիգեր գործ պիտի դնեն ընկանաբար, դուրս գալու ստորկական իրենց վիճակէն:
3. Ռուսաստանը և Անգլիան լուռ և մահացու պայքար պիտի շարունակեն սաստկութեամբ առաջները պատնէշելու: Անգլիայ արշաւը, որպէսզի դէպի հարաւ կը կնքի ապահով, Կոկ երկրորդը կը շանայ քայքայել դայն ներսէն՝ պողպատեայ պատուարներ կանգնեցնելով անոր սահմաններուն վրա հիւսիսէն հարաւ և դէպի արեւելք:
4. Քէմալական Քիւրքեան թէ և ցարդ յաղթական արտաքին թշնամիներու դէմ, վերջ է վերջոյ, պիտի ջախջախի իր Լեքի աւերակներուն մէջ՝ անկարող

դա՛յն վերականգնելու միայն թուրանական տարրերով, որոնց միացնելու էր ցնորքէ մէջ պիտի փշրէ իր դանդը: Ե. Հայերը, քերտեքը և իրենց բանտակիրք միև ազգութիւնները, խորապէս դիտակցելով թաղաքական ախրող լսփոխակ պայմանները, պիտի ձգտին մէկ նպատակի — տէր դառնալ Թուրքիայէ իրենց հայրենիքին,

դոնէն իրենց աջակիր այն ուժերը, որոնք թէ՛ ցեղային կապերով և թէ՛ թաղաքական ու տնտեսական շահերով շարկապած են միմեանց. օրինակ, Պարսկաստան, Իրաք և Կովկասեան պետութիւնները:

Վ. Փլփլաձեւին.

Ր Ա Յ Յ Ի

(Մանւան 40-ամեակի առիթով)

(1888—1928)

I

Ազդեցութիւններ

Բաժնի մեր հասարակական-քաղաքական մաքի գարգացման մի անհրաժեշտ օղակն է: Առանց նրան՝ թերի կը լինի, եթէ շատե՛ք անհարին, մեր նորագոյն պատմութեան ըմբռնումը:

Նա եղաւ մէկը ա՛յն «կայծերից», — և ամենագործողը — որոնք բորբոքեցին թմբած հայութիւնը, կենդանութիւն ներարկեցին նրա ընդարմացած երակներէ մէջ՝ նոր կեանքի կոչելով: Բաժնի ցոյց տւեց նոր հայութեան ճշմարիտ ուղին, նրա ազգային գոյութեան ամենակարևոր հիմքերը, ձեւակերպեց նրա դերազոյն նպատակը, ստեղծեց նրա Մեծ Երազը:

Բաժնի վէպերը — «Սեւեթը», «Կայծեր», «Դաւիթ Բէգ», «Սամուէլ» — միայն գեղարւեստական երկեր չեն, այլ և — եւ զլիսաւորապէս — ներկայացնում են որոշ հասարակական-քաղաքական դասանանք: Այդ վէպերը տւին հայութեան գործունէութեան ծրագիր, որի իրականացման սրբազան գործին յօւնցին յետագայ սերունդները:

Այս վէպերի վրա դաստիարակեցին ամբողջ սերունդները, սնունդ և ոգի, ծրագիր եւ ուղղութիւն ստացան: Մի խօսքով՝ նրանք եղան զգալուն և մտածող հայութեան ամենամեծ դաստիարակներն ու առաջնորդները:

Գրւած մեծ հայրենատէրի հրաբորբոք չնշով՝ նրանք պարունակում էին կրակէ նշանախօսքեր, այդ պատճառով էլ այրում էին բոլորի սրտերը:

Ի՞նչ պայմաններում և ի՞նչ ազդեցութիւնների տակ կազմակերպեց մեր մեծ վիպասանի հասարակական-քաղաքական դէմքը և աշխարհահայտացը:

Բաժնի հայ հարազատ իրականութեան ծնունդ է: Հայ իրական և մղձաւանջալին իրականութիւնը կազմ է նրա համար ամենէն զօրաւոր մղիչը: Մրա պերճախօս ազգայնոյցի նրա առաջին երկն է, «Աղթամարայ վանքը» գրւած դեռ ևս 1860 թւին:

Հայութեան մեծ ատապաններ վաճառականից ստեղծեց ազգային մեծագոյն վիպասանը:

Եւ, յերաւի, մեր գերողներից ոչ մէկը այնքան մօտիկէն ապրած և ուսումնասիրած չէ հայ կեանքը — տաճկահայ և պարսկահայ — որքան Փայաշուկ գիւղի մեծանուն գաւազը: Ապացոյց — ահա նրա մեծահատոր գործերը: Նա չըջել, տեղն ու տեղը տեսել, դիտել, խորապէս գգացել և ապրել է ա՛յն իրականութիւնը, որ կոչում է տաճկահայ դժոխք, գուրումի երկիր, ուսումնասիրել է կեանքի կարևորագոյն երեսոյթները, ցեղերի և ժողովուրդների յարաբերութիւնները:

«Աղթամարայ վանքը» դրւածքն արդէն, երբ դեռ ևս ա՛յլ ուժեղ ազդեցութիւններ չէր կրած Բաժնի, որոշ հիմքեր է տալիս նկատելու ապագայ մեծ վիպասան-ազգապարսօսի աղօտ դիմագծերը: Նրա հասարակական-քաղաքական դաւանանքի մի քանի կարևոր հիմքերը արդէն պարզորոշ ձեւակերպւած են այդ անդրանիկ փորձիկ աշխատութեան մէջ:

«Հիւսիսափայլ»-ի ազդեցութիւնը, նրա ջարդած յուսալուծ և ազգափարսների շունչը միանգամայն զգալի է այդտեղ:

Ա՛յլ ազդակներ և պայմաններ եկան աւելի եւս շեշտելու այս առաջին հիմնական և կարևորագոյն ազդեցութիւնը: Բաժնի չկրեց մի ա՛յլ ազդեցութիւն, որ շեղէր նրան այդ դժից:

Բակասեան ազգերի ազգային-քաղաքական զարթօնք, ընդվզումներ և ազատագրական շարժումներ, 1877-8 ռուս-տաճկական պատերազմ, Քերլինի վեհաժողով, բալկանեան ազգերի քաղաքական անկախութեան հռչակում, 61 յօււած, տաճկահայ դատը իբրեւ միջազգային հարց—ահա ա՛յն նպաստաւոր և զօրաւոր պայմանները և ազդակները, որոնք աւելի եւս ոյժ տւին նրան, վերջնականապէս գունաւորեցին Բաժնիի հասարակական-քաղաքական դէմքը ու դաւանանքը, ինչպէս և պէջցին նրա գործունէութեան ուղին:

Եւ ահա Բաժնի իր ամբողջ փայլով և տաղանտով հրապարակ իջաւ, յատկապէս ութսունական թւականներին, ստեղծեց հայութեան Մեծ Երազը և, իբրեւ անման թարգմիչ, փարեց այդ Մեծ Երազի իրականացման սրբազան գործին:

Բաժնի, իբրեւ մի կրկանէտ, կենտրոնացրեց իր մէջ հայութեան ձգտումները, դարձաւ նրանց լուսազոյն արտայայտիչը, դժեց միոնկամ ընդմիշտ այն քաղաքա-

կան գիծը, որով պէտք է գնար — և գնաց — նոր, յեղափոխական հայութիւնը՝ կերտելու իր ազատ և անկախ կենսը:

Բաժֆին դարձաւ տանկահայութեան քաղաքական ազատագրութեան ազգային մեծագոյն վիպասան-գաղափարախօսը:

Մեր կեննքի պայմաններն և նպատակներն էին ըստ ամենայնի: Բաժֆին ստացաւ ամէն հնարաւորութիւն և լայն ու ազատ ասպարէզ՝ վէպերով պարզելու իր հասարակական-քաղաքական տեսակէտը, դեկավարելու հայութեան քաղաքական միտքը և ստաշնորդելու սեռունդները:

1858 և 1872 թւականները հայ հասարակական, քաղաքական և մշակութային գործընթացման երկու նշանաւոր թւականներն են: Մէկը «Հիւսիսսփայլ»-ի շրջանն է, իսկ միւսը՝ «Մշակ»-ի: Երկրորդը առաջինի շարունակութիւնն է և զարգացումը՝ զաղափարային տեսակէտով:

Այս երկու կարեւորագոյն շրջաններն էլ ապրել է Բաժֆին: Այլ խօսքով՝ կրել է թէ՛ մէկի և թէ՛ միւսի գունատրոյղ ազդեցութիւնը: Անկասկած, երկրորդ՝ «Մշակ»-ի շրջանի ազդեցութիւնը եղած է անհամեմատ անկի տիրական, քան՝ «Հիւսիսսփայլ»-ինը: Եւ այդ ինքնին հասկանալի է: Առաջինի կենարար, շունչը նա ստացել է հեռուէր Հիւսիսից, բայց «Մշակ»-ի ազդեցութիւնը եղած է անմիջական: Բաժֆին անձամբ ապրել է «Մշակ»-ի ստեղծած թովիչ, կենսատու մթնոլորտում, երկար տարիներ ապրել է նրա հետ, պայքարել միասին, հարւածել և հարւած կրել նրա հետ: Վերջապէս, «Մշակ»-ը ստեղծող մեծագոյն դէմքերից մէկն է Բաժֆին: Առանց Բաժֆինի՝ «Մշակ»-ի ազդեցութեան շրջանը չէր կարող լինել այնքան տարածուն, այնքան ժողովրդական և հմայքոտ: Այս ևս անկասկած է:

Բաժֆին, յաճախ, խօսել է «Մշակ»-ի շրջանի մասին, խօսել է յափշտակւած և սրբազան յուզմունքով: «Իւրաքանչիւր սերունդի համար թանգ է ժամանակի մի որոշ շրջանը, ասում է նա իր «Հայ կինը և Հայ երիտասարդութիւնը» ուսումնասիրութեան մէջ: Ես երբեք մոռանալ չեմ կարող 72 թւականը, երբ սկսեց հրատարակել «Մշակ» լրագիրը: Ի՞նչ կենսք էր տիրում այն ժամանակ թիֆլիսում, ի՞նչ դրութեան մէջ էր գաւառների վիճակը: — Ամէն տեղ տիրում էր մի տեսակ անշարժութիւն, մի տեսակ թմրութիւն, մի տեսակ մեռելութիւն: Յանկարծ, կարծես մի դիւթական գաւազանի հարեւորից զարթնեցաւ կենսը: Ոչ ոք չէր հաւատում, թէ այսպէս կարող էր լինել: Հաւատում էր միայն երիտասարդներին մի փոքրիկ խումբ: Ես յիշում եմ այն գեղեցիկ տարիները, այն հրաշալի գիշերները, երբ այդ խումբը հաւաքւած խմբազատան մէջ՝ կարողում էին, ծխում էին և վիճում էին: Միեզանից շատերը հապնեցին շապիկ շունչին, մտնում էին այն-տեղ բոլորովին պատառոտած հօշիկներով, այսուամենայնիւ, մենք ամենքս էլ ֆատալիստի յոյսով հաւատում էինք, թէ էլ տիրապետները մի մեծ սպառաշի: Սկզբում այս լրագիրը շուրջը խմուեցաւ համայնարտնական դիպլոմատը երիտասարդութիւնը: Բայց նրանք շուտով ցրեցան, կարծես թէ գործերը խորթ թւեցան

իրենց: Մնացին դիպլոմից գուրկ ինֆուտները, անյաջողութիւնների տակ ճնշւած, ամէ տեղից հայածւած, բայց դարձեալ իր վեհութիւնը պահպանած մանկտին: Ահա այդ ուժերը իրենց ուսերի վրա բարձրացրին «Մշակ»-ի գրօշարը» (էջ 191):

Ահա այդ «ինքնուաներից», «անյաջողութիւնների տակ ճնշւած, բայց իր վեհութիւնը պահպանածներից» մէկը — և ամենատաղանդաւորը — Բաժֆին էր, որ յերաւի, «Մշակ»-ի գրօշարը կրեց և բարձր պահեց: Հրապարակը մնացել էր «Մշակ»-ին: «Մեղուկ» նմանում էր «մի մշակւած և ջարդւած սայլակի, որին ճանչելով քարչ էր տալիս մի ուժաթափ ձի: Սայլափառը բոլորովին յուսահատւած, մոլորւած և կէս ճանապարհի վրա կանգնած, մտածում էր. «հիմա դէպի ո՞ր կողմը քշեմ»:

«Մշակ»-ով սկսում է նոր, բեղուն և ստեղծագործ քննադատութեան ու վերադնշանատութեան շրջան՝ կեննքի և գրականութեան բոլոր մարզերում:

«Ես երբեք չեմ կարող մոռանալ այն աղմկալի ժողովները, որ կայմում էին այդ լրագրի խմբադարտան մէջ, շարունակում է Բաժֆին: Եթէ ես ունեցել եմ իմ կենսում մի քանի ոսկի րուպլներ, — դրանք պատկանում են այդ ժամանակին: Ժողովների մէջ ոգեւորւած և բորբոքած վիճարանութիւնները սեւում էին շատ անաւամ միջնէ գիշերայ ժամի երկուսը: Փոքրիկ, բոլոր նիւթական միջոցներից գուրկ, բայց բարոյապէս հարուստ խումբը ծրագրում էր հսկայական սրտեղաներ (նախօգտեր): Այդ զօնքիշտութիւնը, երեւակայութեան այդ վիճակային բորբոքումը թէեւ մասամբ ծիծաղելի էր, բայց գեղեցիկ էր, որպէս մանուկի ժպիտը, որ արտայայտութիւն է նոր սկսող կեննքի: Իդէալների արբեցութեան մէջ, ամէն մի երկուստարը մոռանում էր իր վիճակի դաժանութիւնը և մտածում էր, վիճում էր հասարակաց բարօրութեան մասին: Կէս գիշերից յետոյ նիստը վերջանում էր: Պումբը ցրիւ էր դալիս բուշարների վրա, երբ բոլոր հիւրանոցները փակւած էին լինում: Բայց դարձեալ խուլ և անսպասուած փողոցների մէջ շարունակում էր ընդհատած վիճարանութիւնը: Այն ժամին, երբ բախտաւոր թիֆլիսեցին հանգստանում էր իր փառաւոր քննադատների մէջ, մեր կիսամերկ շրջանիկները քննադատում էին մի նշանաւոր հասարակական հարց...» (էջ 194-5):

Հարցերը բազմաթիւ էին, այրող, կենսական և բազմազան՝ ընկերային, տնտեսական, քաղաքական, մշակութային: Եւ այդ նոր ու կենարար զաղափարների կեմը մթնոլորտում անեց, դաստիարակեց գաւառից կամ, ամօթխած, ինքնոյս երիտասարդ Բաժֆին, որ քաշուում էր մի անկիւն, անդադար ծխում և անյազօրէն կլանում ամէն մի խօսք, իւրաքանչիւր նոր զաղափար:

«Մշակ»-ի ժողովները մի դպրոց էին նորածիլ, թարմ և ժողովրդական մտաւորականութեան համար: Այդ շրջանը իր անջնջելի կնիքը դրեց Բաժֆինի վրա, աւելի պարզեց նրա գրական-հասարակական դէմքը և վերջնականապէս գծեց նրա գործունէութեան ուղին: Ահա այն զլխաւոր պայմանները և ազդակները, որոնց ազդեցութեան տակ ձեւաւորեցին նրա գործն ու խօսքը, նրա հասարակական-քաղաքական աշխարհահայեացքը:

II

Հայ-քրիստոնեական կնիքներ

Հայ-թրքական կնիքներ իր ամենապարզ ձևակերպումն է ստացել մեր մեծագույն վիդայապետի դրնի տակ: Ըստ այդ ձևակերպումի՝ հայութիւնը կանգնած էր ծանր և անխուսափելի երկընտրանքի առջև — հասարակական մահ կամ ազատութիւն: Այլ հնարաւորութիւն չէր տեսնուի նա:

Բաժնի մի անգամ ընդմիջու յետ է քաշուած այն վարագործը, որ դարերով ծածկուած էր տաճիկ կառավարութեան դադարնի և դատադարական քաղաքականութիւնը հայ ժողովրդի հանդէպ:

Առաջ կարծուած էին, թէ թիւրքերայում ամէն շարագործութիւն, բռնութիւն և հայածանք, որ կատարուած էին հայերի դէմ, ոչ թէ կառավարութեան ծրագրած դործն էր, այլ՝ պաշտօնեաների և աւագակարարոյ զորդերի և, հետեւապէս, նկատուած էին իբրև պատահական երեւոյթներ:

Ահա ինչպէս է պատկերացնում Բաժնի թիւրք կառավարութեան դադարնի և աւանդական քաղաքականութիւնը: — Իր արհաւան և եւրոպական նահանգները փրկելու, եւրոպական պետութիւնների մշտական միջամտութիւնը թիւրքի միջոցով ներքին դործերում վերացնելու, արեւելեան հարցը մի անգամ ընդմիջու ոչնչացնելու նպատակով՝ թիւրք կառավարութիւնը որոշուած ունի բնաջնջել ջրիտոնոնայ փոքր ազգութիւնները, հետեւապէս, և հայերը: Բաժնի տեսնում էր թիւրքի քաղաքականութեան մէջ «մի նախապէս մտածուած կարգադրուած հիմք և նպատակ, որ ծառայում են հայկական տարրը հետզհետէ տկարացնելու, սպառնալու և, վերջապէս, ոչնչացնելու մէջ» («Պենթը», էջ 182):

Թիւրք կառավարութիւնը անշնդ և հետեւողական կերպով հետապնդել է իր այդ հիմնական նպատակի երականացման: Միջոցները շատ էին և գլխաւորները մասնանշուած Բաժնի կողմից:

Առաջին՝ տաճիկ կառավարութիւնը, մի կողմից, զրկել է հայերին ինքնապաշտպանութեան բոլոր միջոցներէն և, միւս կողմից գինել զբռնելին, անհասարակ, հայ ժողովրդի թշնամիներին:

Երկրորդ՝ կառավարութիւնը անխղճօրէն ճնշել է հայ ժողովրդին նաև. տնտեսապէս՝ դնելով նրան այնպիսի վիճակի մէջ, որ օրւայ մի կտոր հացի մտահոգութիւնից դուրս, այլ բանի մտախի հնարաւորութիւն չունենայ մտածելու: Կառավարութիւնը մեծ հարկեր էր դնում հայերի վրա, զրկում կալւածատիրական իրաւունքներից և հողերը յանձնուած բրդերին: Այս սպանիչ քաղաքականութեան շնորհիւ՝ հայը դառնում էր կատարելապէս իրաւազուրկ և հողազուրկ: Հայ տարրը հարածեւելու և ոչնչացնելու նպատակով՝ նա, յաճախ, առաջացնում էր արհեստական սով և այլն: Վանի հրդեհը, որ մի աղէտ էր հայերի համար, նոյնպէս այդ քաղաքականութեան, նոյն կառավարական մեքենայութիւնների յարգիւնը էր:

Այսպէս, եզրակացնում է Բաժնի, թիւրքը կամենում է հետզհետէ տարէջ-տարի մահացնել հայութիւնը՝ «իբ գոհի կենսական բոլոր ուժերը սակաւ առ սակաւ սպառելով: Այսպիսի սպանութիւններ կատարում են ոչ միայն մասնաւոր անհատները վերաբերմամբ այլ և ամբողջ ազգի: Մի այսպիսի սպանութիւն սպանում է մեզ» կարգում ենք «Պենթը» վէպում (էջ 186):

Ըստ Բաժնի, «քրիստոնեական յանցանք է» մարդկութեան դէմ՝ թողնել, որ տաճիկաւորութիւնը ոչնչանայ բարոյապէս, տնտեսապէս և ֆիզիքապէս: Ինչու: Հայ ազգը, ըստ Բաժնի, մեծ առաքելութիւն ունի կատարելու, նա կոչուած է լինելու, ինչպէս եղած է անցեալում, Արեւելքում գիտութեան և կրօնի առաքեալ:

Իայց այդ վեհ կոչումը կատարելու համար, նախ և առաջ, պէտք է քաղաքականապէս ազատագրել հայ ազգը: Թիւրքի գերիշխանութեան տակ անհնարին է աւելի ընդունակ, աւելի կուստրաբական ազգութեան անկախանդ զարգացումը և յառաջդիմութիւնը:

Ահա ինչպէս է ձևակերպում հարցը Բաժնի, պարզ և շեշտակի:

Հայ-թրքական կնիքը այսպէս ձևակերպելով՝ Բաժնի համար տաճիկաւորութեան քաղաքական ազատագրումը դառնում է բնանշարժեւոր, ցանկալի և անխուսափելի:

Բաժնի իր այս քաղաքական տեսակէտով տարբերում էր իր թիւրքական հայրենից: Վերջինիս համար հարցը այսպէս չէր դրւած. նա չէր ուզում բաժնուր թիւրքի հայաց և հնարաւոր էր համարում մնալով թրքական գերիշխանութեան տակ՝ ապրել և զարգանալ: Այդ հնարաւորութիւնը չէր տեսնում մեր մեծ վիդայապետային անդամականը: Տաճիկ քաղաքական լուծի թափումը անպայման էր նրա համար:

Այսպէս, հայութեան գերագոյն քաղաքական իդէալը որոշուած էր ընդմիջու:

Իայց ի՞նչ միջոցով կարող էր հայը ձեռք բերել իր քաղաքական ազատութիւնը: Բաժնի համար այլ միջոցներ, այլ ուղիներ չկային, քան յեղափոխութեան ուղին, կռիւ և արեան ցանքան: «Հիմա աշխարհի կարգն այդպէս է, և միւս այդպէս է եղել. ով որ արեւն թափելու և մարդիկ կոտորելու ընդունակութիւն չունի, նրան առում են՝ կու ազատ լինելու իրաւունք չունես»: Եւ ճիշտ նոյնն սասցին աշխարհի վեհապետները Բերլինի վեհաժողովում 1878 թւին: Այդ էր ստուծ նոյնպէս պատմութիւնը, ազգերի ազատագրական արեւնու պատմութիւնը:

Նոր քաղաքականութիւն էր սկսում — գէնքի և կրակի քաղաքականութիւնը, որ որդեգրեց նոր և յեղափոխական հայութիւնը: Հայ ժողովուրդը պէտք է ստանար կրակի միտումութիւն, այսպէս չի կարող ձեռք բերել և պահպանել իր ազատութիւնը:

Եւ այդ կարելի էր ձեռք բերել սեփական ուժով և աշխատութեամբ. օտարի վրա յոյս չպէտք է դնել: Ոչ մի ազգի քաղաքական ազատագրումը չի կատարուել օտարի միջոցով:

Եւրոպական ազգերի հասարակական կարծիքը անարժէք չհամարելով՝ Բաժնի հայութեան գլխաւոր օգնականը համարում էր մեր երկրի բնութիւնը, նրա տեղադրական դիրքը, ուր դժարութեամբ կարող են մտտը դործել օտար «իշխանիկ հիւրեր»: Ըստ Բաժնի, «Վանի նահանգը բնութիւնից պատրաստուած է հայերի համար ազատ կեցութեան կենտրոն լինելը, դառնալ հայութեան հայրենիք: Հայրենիք, սեփական «մի կտոր հող» — դերբարձէք ազգակ է այս: Սեփական հայրենիքը մի ժողովրդի իրական ազատութեան ամեն-

նահաստատուն հիմն է: Անհայրենիք ազգը չի կարող ազատ լինել, անհաշկանոք և ազատ զարգանալ:

Այս էր Բաֆֆրիի խորին համոզումը և տեսակետը, որ տալիս է «Կայծեր»-ում:

Հայտնի են իր պատմական հայրենիքում, քաղաքակառուցական ազատ և անկախ:

Ահա Բաֆֆրիի ձեռակերպումը և պահանջը, նրա գաւառանքի կորիզը, միաժամանակ այն գերագոյն իզեպլը, որի իրականացման պէտք է լծւեր գիտակցից հայութիւնը՝ միակամ և միահոգի:

III

Միջավայրը և մեր ազգային նկայագիրը

Մեր բոլոր առաջադրանքները կարող ենք բնութագրել և միջավայրի հարցը, մի առաջնահարգ կարեւորութիւն ներկայացնող հարց, որի հետ սերտորէն կապւած է նոյնպէս հայ ժողովրդի ազգային նկարագրի խնդիրը: Աւելի ևս զբաղեցնում է տաճկահայութեան քաղաքական ազատագրութեան վիպասանազգափարսիտսին:

Ի՞նչ էր այն միջավայրը, այն հողե-բարոյական մթնոլորտը, ուր վիճակւած էր գործելու մեր առաջին յեղափոխականներին:

Հայը խորթ տարր էր Թիւրքիայում, նա պետութեան մէջ քաղաքացի չէր՝ հաւասար իրաւունքներով և հաւասար պարտականութիւններով:

Հայը Թիւրքիայում իրաւազուրկ էր. նա ռուսաց էր, նպատակ միայն, գուրկ ամենատարբարական իրաւունքներից: Տաճիկը, թէ՛ կենտրոնական կառավարութիւնը և թէ՛ գաւառական պաշտօնէութիւնը, հայ ժողովրդի վրա նոյնպէս էր իբրև «կաթնատու կովի»՝ աշխատելով միայն ջամիլ նրա կենսաբանիքը, ծծել, առանց վտխարելու մի բան տալու: Չկային ազատ և հաւասար կեցութեան ամենատարբարական պայմաններ: Պետական հիմնարկութիւնների գոնիքը փակւած էին հայ մարդու առջ: Հազարապիտ բացառութիւն էին կազմում հայ պետական պաշտօնեաները, այն էլ մեծ մասամբ այլասերւած տիպեր էին և իրենց բարոյականով և մտայնութեամբ որեւէ կապ չուէին հայութեան հետ:

Թիւրքիայում հայ ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը, 90-95 տոկոսը, գիւղացի և երկրագործ էր, առհասարակ, հաղաբար: Լաւազոյն հողերը գտնուում էին Թիւրքի և զերբի ձեռքը: Եղած հողերն էլ բունութեամբ խլում էին հայերից և յանձնում զբիւրիճի՝ զբիւրիճ հայ գիւղացուն գոյութեան հիւրերից:

Ետոյ՝ հայ տարրը ենթակայ էր մշտական, մտածւած և ծրագրւած հայրամանքի, բռնի կրօնափոխութեան, անյուր բռնութիւնների և ճնշումների, հարաւահարուստութեան և վիրատարների: Ամէն քայլափոխում վիրաւորւած էին հայ մարդու ազգային և մարդկային գգացումները և պատիւը: Հայը մարդ չէր տածի աշխուհ, այլ մի ստոր տեսակի ապարտ:

Պետական մահմետական կրօնը պիճել էր համարում հայերին, «զեխաւոր» նախատական բռնով կոչում հայ և այլ քրիստոնեայ տարրերին: Մահմետական կրօնը, որ միաժամանակ գորաւոր քաղաքական գործուն էր պետութեան մէջ, ա՛յլ միայն յետ չէր պահում թիւրքի և զբիւրի աւերազ ու սպանող ձեռքը, ա՛յլ միայն չէր

աստուած կամ մեղմում նրանց վայրագ և հայաջնջը բնագոյնն ու կրքերը, այլ, ընդհակառակը, աւելի՛ էւս հրահրում էր, աւելի՛ ոյժ տալիս և քաջալերում՝ բնաջնջելու առհասարակ այլակրօն ժողովուրդներին, մասնաւորապէս Հայերին:

Այսպիսի քաղաքական, իրաւական և ընկերային կարգերի մէջ՝ մի ժողովուրդը կարող էր միայն այլասերել, կարող էին միայն զարգանալ մարդկային ամենատար հակումները և բնագոյնը: Այս միջավայրը հող չունէր մի ժողովրդի ազգային ու մարդկային մաքուր ու բարձր ձգտումների, բարոյական ու ազատասենչ հակումների համար:

Հայը կրաւորական դերումն էր: Բնազգորէն և հարկադրանքի տակ՝ նա պէտք է յարաբարէր, համակերպէր տիրող կարգերին, տիրող մտայնութեան՝ իր գոյութիւնը պահպանելու համար: Կեղծաւորութիւն, խաբարայութիւն, ծածկամտութիւն, շողջորթութիւն, համակերպում, նեղամտութիւն — ահա այն բնական և միակ գէնքերն ու միջոցները, որոնցով կարող էր հայ ժողովուրդը պահպանել իր ֆիզիքական գոյութիւնը նման միջավայրում: Եւ, յիշուել, զարբեր, մեղմացում կրելով այդ միջավայրի ալաւորող ազդեցութիւնը, ստոր հակումները և անտերը դարձան հայ ժողովրդի մէջ քնադարտ քիւն: Այլանշուկեց, միանգամայն խաթարեց նրա ազգային նկարագիրը:

Տաճիկ պաշտօնէութիւնը իր կողմից ևս ոյժ էր տալիս հայ ազգի բարոյական այլասերման. առաջ էր քաշում փշացած և ապագապնայացած Հայերին եւ շահագործում էր հայասանի նպատակները համար:

Բեռի Պետրոսներն ու Թովմա Էֆենդիները, գանազան «կոթերը» հարազատ ծնունդ էին իրենց միջավայրի և իրենց հերթին աւելի էւս այլանշուկում էին՝ արդէն այլանշուկում միջավայրը, հողե-բարոյական մթնոլորտը: Ըստ Բաֆֆրիի, ամենատարբար իշխանի դռնից մինչև դաւանների վայրերի, մինչև փոշաների ու վէրիւրների, անգամ մինչև անլիթանի բարձրագոյն գուռը լցւած էին Բեռի Պետրոսներով, որոնք ներկայացնում էին հատու և, յարմար գէնք տաճիկ ձեռքում հայ ժողովրդի դէմ:

Այս ստրկական մտայնութիւնը տիրում էր ամենուրեք՝ ե՛ւ ընտանիքում, ե՛ւ հասարակութեան մէջ, ե՛ւ դպրոցում, ե՛ւ գրականութեան մէջ, ե՛ւ եկեղեցում ու վանքում...:

Սարկութեան և խաւարի վայր էր ևս գպրոցը, որ պէտք է լինէր լուսոյ և ազատութեան օջաղ: Վարժապետ-քահանան իր աշակերտների մէջ մեղեցելով ամէն կենդանութիւն, աւելի, կարող և աղատութեան ձրքուում՝ քարոզում էր անվերապահ և կոյր նապաստառութիւն: Եւ վասն այն էր, որ այդ շարքերն այն կատարում էր Աստու անունով: — «Մեր, տիրող մեղաւոր ծառաներիս, ձեռքում ոչինչ չկայ. մենք ոչինչ չենք կարող անել: Ամէն ինչ, որ լինում է, Աստու կամքով է լինում: Աստուած է ստեղծել բոլոր արարածներին և նա է նշանակել բոլորի վիճակները»: Ահա մեծ ու փոքր, յայտնի և անյայտ Տէր-Քոյրիկների ողջ կենսափոխապայութիւնը: Այդ փոխափառութեամբ՝ Աստուած հայ մարդուն տեսնել էր ստրկու, ուսայ, հպասակ, իսկ Թիւրքին և զբիւրիճ աղատ և տէր: Այս քարոզն էր Ե՛ւ տանը, ե՛ւ դպրոցում, ե՛ւ գրականութեան մէջ...:

Մեծ ու փոքր, նշանաւոր և աննշան եկեղեցական-

ները, Հայ ժողովուրդի առաջնորդ կույսածներն աւելի ևս ամբողջում էին Հայութիւնը սարկացող շղթաները: Նրանք ամէն օր, տարբեր ձևերով, կրկնում էին մի-եւնոյն յանկերը: — «Մենք հայր ենք, մեր գլուխը պէտք է միշտ ծուռ լինի, մեր լեզուն մուշկ և մեր ձեռքը պէտք է որ բարձրանայ օտարի վրա...»:

Եւ այդ դժոխային իրականութեան արդիւնքն այն էր, որ կենդանի մարդու փոխարէն կային միայն «չար-տուն դիակներ», դիակներ՝ բարոյապէս, մտաւորապէս և հոգեպէս:

Անդիտակից իր այս դրութեան ստեղծիչ պատճառները՝ հայերը փոխանակ միակամ ծառանալու բուն-կարութեան դէմ և պայքարելու իրենց մարդկային պատուի ու իրաւունքների համար, մեղադրում էին միմեանց, միասում, միմեանց դէմ ելնում: «Հայր, աւելի քան օտարները, ինքն է իր թշնամին»: «Անմիա-

բանութիւնը, Երկպառակութիւնը, նախանձը, թշնամութիւնը և հաղար ու մէկ շարութիւնները շատ ժամանակներից բոյն են դրել մեր հողու մէջ, — և մենք կրում ենք այդ մեղքերի պատիժը»: Անգամ այսօր, մեր օրերի սերունդը կրում է այդ «մեղքերի պատիժը»: Դարերով տղով էր կուտակւած Հայ մարդու հողու մէջ և, յաճախ, այդ տղով էր երևան էր դալիս եւ ամէն ինչ աղտոտում: «Հայր ոխերիմ է, մտտնիչ է, վրէժխնդիր է այն անարդանքի դէմ, որ նա կրում է մի այլ Հայից: Իայց եթէ նոյն անարդանքը ստանում է տանկից, քրդից, մի խօսքով՝ օտարից, նա ամենայն խոնարհու-թեամբ համբերում է»: Ահա մեր ազգային նկարագրու-լուսաւոր ոչինչ չունէր նա: Ներկան, ստում է Բաֆ-ֆին, անցեալի շարունակութիւնն է. հետեւապէս, այս արտաւոր ներկայի պատճառները պէտք է որոնել մեր տխուր պատմութեան մէջ: Ե. ՅՐԱՆԻՆԱՆ

ՓՈՐԹ ԱԶԳԵՐՈՒ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Ե Ի

ՈՒԺԵՐՈՒ ՀԱՒԱՍԱՐԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՍԷՋ

III. — Դրամատիքութեան ազդեցութեան շրջանակները ու փոքր ազգերու անկախութեան խնդիրը մեծ պետութեան մը քաղաքական կամ այլ տիրապետութեան շրջանակին մէջ. — Այսպէս, ամբողջ աշխարհի շրջանը արագորէն ընելի յետոյ կը դառնանք մեր մեկնման կէտին, հաստատելու համար թէ հինգ ցամաքամասերը, իրականին մէջ, բաժնւած են դրամատիքական ազդեցութեանց շրջանակներու ու հետեւաբար իրենց ամբողջ զարգացանք, ազգային ու նոյնիսկ մշակութային կեանքը ու առաւել ևս տնտեսական ու ընկերային վիճակը, կը դառնի բունակալ ու շահախնդ-րի ուժի մը գերակայութեան տակ:

Աւ մինչդեռ դրամատիքութիւնը հրաշալիօրէն օժտւած է՝ ամէն տեսակ դէնքերով, իր տիրապետութիւնը տարածելու համար, ընդհանրապէս, մանր ժողովուրդները դուրի են կուսի ամենէն նախնական գնէքերէն իսկ: Քիչ յետոյ, պիտի փորձենք հետեւիլ, դրամատիքութեան տարածման այս գործողութեան ու եղանակներուն, պիտի տեսնենք թէ ինչպէս դրամատի-քական պետութիւն մը, խաղաղութեամբ կամ կռիւով կը թափանցէ ուրիշ երկրի մը մէջ ու գերութեան կեն-թարկէ զայն:

Մինչ այդ, ճշտենք որ դրամատիքութեան այս սանձարձակ դերիչանութեան տեսականացման գլխաւոր պատճառներէն երկուքն ալ հետեւեալներն են. —

Նախ՝ գերի զանգուանելու անասելի կլաւոյակա-նութիւնն ու յեղափոխական քափի պակասը: Ոմանք կը կարծեն թէ մեծ մասով տարիտութիւնն է գերի փո-ղովուրդներու կրակարկանութեան պատճառը: Այսու-հանդերձ պէտք է շահագանցել: Կայ յեղափոխական թափի պակասը, գերութեան տակ հեծող զանդւածնե-րու յատուկ ֆիզիքական վատութիւնը բունութեան

առջև համակերպելու, բացակայութիւնը՝ մարտական առաքինութեան՝ բունազատւած իրաւունքը, արիւնով և գէնքով պաշտպանելու: Կը բաւէ յիշել մեր կուսակ-ցութեան, երեսունհինգ տարեան, հրաշալի ու ահաւոր կռիւը՝ ո՛չ միայն թիւրք բունպետութեան այլ և սե-փական ժողովուրդի վահկոտութեան, վատութեան ու արիւնէ վախին դէմ: Ստրկութիւնն ու ուժին առջեւ խոնարհելու փիլիսոփայութիւնը՝ հասարակաց են շատ մը գերի ժողովուրդներու: Ժողովուրդական աստիճանը կրտէ — Այն բունակալ ձեռքը, որ շեւ կրնար կտրել, համբուրէ՝ ու ճակտիւր դիւր... Կամ — համբուրէ՝ տրեղո՞ւ ձեռքը... Այս մտածելու եղանակը ստեղծած էր նաև, մեր մէջ, լրտեսներու սերունդը՝ Պուլիս ու «չինովիկ»-ներ՝ Կովկաս: Նո՛յն է նաև պատկերը ուրիշ ժողովուրդներու կեանքին մէջ: Բոլորին ալ պակասմ է՝ անհրաժեշտ յեղափոխական պայթեցիկ ուժի քանակը:

Ժօրժ Սօրել, Փաշիպի՝ ընկերպարական հողերու հայրերէն մէկը, իր զբոբէրէն մէկուն մէջ իրաւամբ կրտէ որ ճապագան աննցն է, որ ամենէն աւելի նկա-նութեամբ պիտի գիտնամ շարժել յեղափոխութեան երկասյրի սարը» (Տիւր բառերը չեմ յիշեր, միտքը այս է)*: Այն մէկ մանր ժողովուրդ չէ կրցած այլ երկասյրի ու թունաւոր սուրը, ճակատադրական վայրկեանին, հարկ եղած Հեղինակութեամբ շարժել: Երկուրդ՝ ո՛չ մէկ գերի ու մանր ժողովուրդ, բացի չեխերէն գուցէ, չէ կրցած հարկ եղած յատկատեսու-թեամբ հետեւիլ, միջազգային դրամատիքութեան քա-ղաքական «բարդ ու անեղծւածային կեանքին»: Գա-

* « Խարիյաձուրթիւններ՝ բունութեան մասին » գրքի՝ Ժօրժ Սօրել:

դաքական «Կիպականութիւնը» եղած է բոլորին յատուկ ու իրուր, մետաստիտորը համո մեր «գլխահազէտները» այսօր կաշխատին շ.Յ.Դաշնակցութեան կոկորդէն բռնել, զայն մեղադրելով քաղաքական մանկամտութեան մէջ: Օտար ուժերու վրա մեր վստահութիւնը՝ մեղի կուզայ զեռ Իսրայէլ Օրբիւն, որ երկուսարը կենցեղ մը մաշցուց օտար արքունիքներու դրան առջև ու յամենայն դէպս Դաշնակցութիւնը չէր, որ կը խանդավառէր Քիչմանսօի կամ Պօղոս Նուպարի մատի շարժումներէն: Յամենայն դէպս, աւա՛ղ, Հայ տոյգովուրդն ալ բոլոր մանր ու գերի աղէկերուն պէս, ինկաւ մեծ-պետութիւններու ճուղակը ու իր բախար կպայեց, յաճախ, արևմտեան ուժերու յաղթանակին կամ բարեացակամութեան:

Հայ տոյգովուրդին դառն ճակատագիրը եղած է շատերունը: Բոլորն ալ իրենց քաղաքական կենանքի որոշ մէկ շրջանին, խաղած են իրենց անկախութեան եղբրական խաղը՝ այս կամ այն մեծ պետութեան թմբուկին ձայնովը: Բո՛լորն ալ անհրաժեշտ յտակաստութիւնն ու շրջահայեցութիւնը չեն ունեցած՝ ըմբռնելու համար դէպքերու խմաստը: Ա՛յ հակառակ որ յաճախ, ունեցած են իրենց ծոցին մէջ ընկերվարական կուսակցութիւններ, հակառակ որ տեսականօրէն քաջ ըմբռնած են քաղցեմիներու բո՛լոր խաղերը՝ զործնական քաղաքականութեան մշակման ժամանակ ինկած են նոյն կախարակական շրջանակին մէջ: Առէ՛ք շատ յատկանշական օրինակ մը, Վրաստանի պարագան: Այդ տոյգովուրդին «ընկերվարական» վարիչները գոնէ կարելի չէ ամբաստանել զդաշնակցական արկածախնդրութեամբ»: Մի՛շտ ալ Փորտոսիաններն ու Իրա՛նի լիւրիներն ունեցած են քաղաքական «իրատեսութիւն» ու անհրաժեշտ հնարամտութիւնը՝ միայն ու միայն իրենց շահերը պաշտպանելու համար: Հայերս երբեմն ունեցած ենք այլասէր ու մարդկային խանդավառութիւններ: Բայց հա՛տ Վրաստանը, որ նոյնպէս գերի է այսօր, որուն ջուրերը նոյնպէս կարմրեցան յեկափոխականներու արիւնով և որ հակառակ իր վարիչներու ամբողջ «գլխահազէտութեան», կը տարուբերի, ճակատագրականօրէն քանի մը քաղաքական ուղեգիծներու ալիքներուն վրա: Երկրին քաղաքական նաւը կը գտնուի խախուտ ջուրերու վրա, համայնավար Օրջոնիկիճէնին ու Պրտու Մտիվանիները զայն կը քշեն դէպի Խորհրդ: Միտութիւնը, Նոյ Իրա՛նի լիւրիները ու Փորտոսիանները դէպի քեմալական Թիւրքեանն ու բարեկամ Արդպէճմանը իսկ Կերեմալիի ժամանակաւոր Կարավարութեան անդամ՝ Ա՛կ. Մերեթեյին, «ընկերվարականը», միակը, դէպի Խորհրդ: Միտութիւնը կամօղ աղէկերու ռամկավար ու իրական դաշնակցային պետութիւն մը, որ սակաւին չկայ:

Փոքր աղէկերու կամքէն դուրս ուժեր կան, արտաքին ազդակներ, որ իրենց տնտեսական կամ քաղաքական ազդեցութեանց շրջանակի մէջ, թո՛ղ չեն տար որ շահագրգռող կողմերը, իբնագրուս հաշնայարգարի ենթարկեն, իրենց ներքին խնդիրները:

Այսպէս, կուզէք, առնենք կրկին Կովկասը ու հետևաբար նաև Հայաստանը: Հայաստանը կովկասեան պետութիւն է հիմա: Եթէ այս ճշմարտութիւնը մարդկի միանգամընդմիջում բերուին՝ շատ մը թիւրիմացութիւններու առաջը կառնուի: Որովհետև տարբեր բան է ներկան ու տարբեր ապագան: Այ՛ո՛, կայ ու կայ՝ 'այսիմոզըմ՝ Աղաղոյմը» ձգտողոմոշ 'ձղզձղահլգոն մյգ

մեր սյաջարքը այդ ուղղութեամբ վերջ չպիտի առնէ: Բայց մինչ այդ, աննք ստիպած ենք ընդառաջել մեր կիրականութիւնը:

Արդ՝ Կովկասը, կարելի է ըսել, որ կը գտնուի երեք աղբջուրութեան պարբերական իշխանութեան տակ: Երեք՝ քաղաքական ուժեր կը վիճեն զայն իրենց շրջանակին մէջ ձգել: Թուսխան՝ ընկերվարական կամ ոչ, Թիւրքեան՝ քեմալական կամ ոչ ու կայսերապաշտ Անդլիան: Վերջին հաշին այս երեք ուժերը կարելի է վերածել երկուքի: Թէև շատ պարզութիւնը յաճախ լաւ չէ ու թրքական աղբջուրիւնը, որ այսօր՝ Անդլիականին մէկ երկրորդ տպագրութիւնն է, երէկ, ընդհակառակը, թի՛կունք կուտար ուրիշ ուժի մը, գերմանականին: Վրացիները այս մասին բաւական բան դիտեն:

Պարզ է, որ իրերու այս վիճակին մէջ՝ միայն Վրաստանէն, Հայաստանէն ու Ազրպէյճանէն կախած չէ՝ իրենց անկախութիւնը: Ու ասոր ապացոյցը, կարծես, հայ ու դաշնակցական ընթերցողներու տալու պէտքը չկայ ու ամէն բարդ կը յիշէ՝ անգլիական միջամտութիւնը՝ ըլլա՛յ Իսրայէլ կոկորդէնը ընթացքին, հայ-վրացական պատերազմի միջոցին, Թիւրքերու կովկասեան զործերու միջամուխ ըլլալը՝ Պրէսթ-Լիթթովաքի դաշնագրի կնքումին, Կարսի վերջին դաշնագրութեան հաստատութեան ընթացքին ու վերջապէս՝ ռուսերու անհրաժեշտ աղբջուրութիւնը՝ Կովկասի վերջին մէկ դարու պատմութեան մէջ: Պա՛րզ է նաև, որ քաղաքական կենանքի մէջ, մանաւանդ որոշ պարագաներու տակ շէղբութիւնը կը դառնայ շատ դժար ու վտանգաւոր, չափու համար անհնար: Պէտք է կողմ տնել, կամայ-պիսիմա՛յ՝ ու ռազմական համայնավարութեան շրջանին՝ համայնավար վարիչները իրաւամբ կըսէին թէ — չէզոքութիւն չեն ընդունիր, կամ իրենց հետ կամ իրենց դէմ ու կաւեթայնին, որ՝ ո՛վ որ իրենց հետ չէ, զործնական կենանքի մէջ, դէմ կը նկատեն իրենց:

Ձրենք Կովկասը ու դանք Պալքանները ու զեռ իրենց լիակատար անկախութիւնը շտտացած ազգերու փոխարէն առնենք պետութիւն մը, որ անկախ է շուրջ հարիւր տարիէ ի վեր, փոքրիկ Յունաստանը: Պատկերը հոս ալ անմխիթար է: Ըսենք որ Յունաստան՝ շուրջ քառօրդ զարբէ ի վեր կը տառապի «մեծութեան» համաճարակէն: Պալքանեան պատերազմէն յետոյ խոշոր չարիով ընդարձակած այս փոքր ու զեղածիտը երկիրը, կը կրէր իրմէ աւելի մեծ երազ մը, «Մեծն-Յունաստան»-ի վերակդանացման ծրագիրը: Խորամանկ Վէնիկէյլոս, արատելէ յետոյ կոտանդիներեան Հելլադան դերմանական աղբջուրութեան, զայն ինկաջ Ալպիոնի դիրկը: Յետապային, յունաց արքան Ռեկեան Թափարդին մէջ իր դժբախտ Կունաբիսով ու հետևանքը մանթի է յունական աղապին բանակին շարաշար պարտութիւնը Սաքարիայի առջև: Ի հաշիւ որո՞ւ էր Յունաստանի կորու: Ամենէն առաջ, Մեծն-Բրիտանիայ որ կուզէր ջանքախել Թիւրքեանն և հետևաբար հորածակ Խորհրդ: Թուսխան: Ո՛վ վիճեցուց այս ծրագիրը: — Անպիլոյ երէկեան դիմակիցները, Փրանքէն Պուլսոնի Փրանսան ու Իտալիան: Նոյն քաղաքական յարմարութիւնը կր կայմակերպէի այսօր ալ, միայն թէ Մեծն-Բրիտանիան, օգուտով անցեալի դասէն, կաշխատի գործի լծել նաև Մուսօլինիի Իտալիան, որ երրորդ շահագրգռած կողմն է:

Իրականին մէջ՝ փոքրիկ Յունաստանը կը գտնուի տնտեսական անհանդուրժելի տագնապի մը մէջ՝ գործադուլութիւնները բազմաթիւ են ու յաճախակի: Համայնականութիւնը սկսած է դուրս գցել: Հելլէն դրամադուլը յայտնած է իր անվերջապահ հպատակութիւնը բրիտանական դրամապուրիսին: Ժողովուրդը ազատ է ու կը տառապի: Փոքր-Ասիոյ յոյն գաղթականները դժգոհ են: Կառավարութիւնները կուզան ու կերթան ու Յունաստանը, ի հարկէ, միշտ անկայն է, բայց անկախութիւնը պայմանաւորուած է անդլիական քաղաքականութեան ուղեգծին հետ:

Ու հոս, պէտք է եղբակցութեան մը հանել, ինչպէս կըլլայ, որ Յունաստանը չուզեր ըմբռնել թէ իր շահը՝ այս կամ այն պետութեան մը հովանաւորութեան տակ մտնելուն մէջ չէ: Ինչպէս կըլլայ, որ Եուզովիայի շրջանը չըմբռնէր թէ ո՛րքան ատեն որ ինք հրահրէ Ֆրանսան միջամուտի ըլլալու պալքանեան գործերուն ու յարձակի կամ աշխատի կապուել Ալպանիոյ իրաւունքները՝ այս վերջինը «իրաւունք» կունենայ կծկելու Իտալիոյ «պաշտպանութեան» տակ: Ինչպէս կըլլայ, որ Պուլկարիան չի հասկնար թէ միաժամանակ, երէք դրացիներու դէմ, վրէժնորակեան ծրագիրներ որոճալով, կարելի չէ իր վտանգուած իրաւունքները պաշտպանել: Ինչպէս կըլլայ, որ Ռումանիան (ուսմանական ժողովուրդը) չըմբռնէր, որ կարելի չէ անհունապէս երկարել գոյութիւն ունեցող քաղաքական վիճակը, թէ պէտք է Պուլկարիոյ վերադարձնել Տօպրուճան ու հանրաբէլ կատարել Պեսարպիոյ մէջ: Ինչպէս կըլլայ, որ այս դրացի ու գրեթէ ցեղակից ժողովուրդները իրար կը բզկտեն ու տանձնեց տարւան ընթացքին երկու անգամ արհւնով կողողեն Պալքանները, առանց հաշուելու պատերազմի վիժած փորձերը...

Հարցումները, որոնք միամիտ կը թւին, բայց որոնց պատասխանը շատ յստակ է, որովհետեւ պալքանեան պետութիւնները չեն ուզեր համոզուիլ թէ, դրամատիրական պետութիւններու ազդեցութեան հակամարտ շրջանակին մէջ, դժուար է իրական անկախութիւն պահպանել: Որովհետեւ Յունաստանի, Պուլկարիոյ, Եուզովիայի, Ռումանիոյ մէջ, դասակարգեր կան, որ ուղղակի շահագործուած են իրերու այս վիճակին յարատեւումով: Որովհետեւ, Պալքաններու մէջ, մարդիկ տակաւին չեն ուզեր համոզուիլ, որ թերակզին կազմելով միակ ամբողջութիւն մը, տնտեսապէս ու աշխարհագրականորէն, պէտք է սպրի միասնական համակեցութեամբ մը: Եթէ, կէս դարէ ի վեր, Պալքաններու քաղաքական ու հանրային գործիչները քարոզէին այս բոլոր փոխանակ ազգամիջեան ոխեր սերմանելու՝ հիմա Պալքանեան դաշնակցութիւնը ցնորք չէր թւեր: Որովհետեւ թերակզին՝ թրքական տիրապետութեան տակ, միացած բնութեան տակ ու տառապանքի մէջ, շատ մեծ յարմարութիւններ ունէր դաշնակցային պետութիւն մը կազմելու: Երբ Մեծ-Բրիտանիոյ միացեալ թագաւորութիւնը կրնայ տեւել՝ հակառակ զինքը կազմող ժողովուրդներու ցեղային տարբերութիւններուն, երբ Միացեալ Նահանգները կրնան դաշնակցային կապիւրդ սպրիլ, երբ լաւ կամ դէ՛՛ջ նոյն ինքն Եուզովիայի մէջ՝ սուպերբ, խրաթներն ու սլովէնները կապրին կողք-կողքի նոյն պետութեան մէջ, ինչու պալքանեան ազգերը չպիտի կրնան կապուիլ դաշնակցային կապերով ու դուրս քշել բոլոր օտարամուտ ուժերը: Ինչու՞ դանդաղորէն Պալ-

քանները չպիտի ձգտին, փոխանակ սահմանները խորացնելու, ընդհակառակը ջնջել գանոնք, վերցնել մաքսային պատարհները եւ այլն:

Ազգերու կեանքը կը նմանի անհատներու կեանքին՝ Ու դիտենք որ մեր, անձնական փափաքներէն կախում չունի յաճախ՝ մեր տկար անձին երջանկութիւնը: Ընտանիք ունինք, շրջանակ: Պէ՛տք է հաշու մեր շուրջիններու գոյութեան հետ: Սկզբունքներ, փոխադարձ պարտքեր ու իրաւունքներ կան, որ անհատը կը կապեն սահմանին:

Նոյնն է պարզապէս ազգերու կեանքին մէջ, բարոյական դաշնեցներ կան, որ պէտք է կապեն ազգերը իրարու՝ համարաշխ համակեցութեան մը մէջ, ընդհանուր օրէնքներ պէտք են, որ ղեկավարեն ազգերը, մինչդեռ փոխարէնը, ինչ կը տեսնենք եթէ ոչ՝ գաղտնի դիւանապիտական դաշնեցներ, դիւերական չիտառովանած կապեր, զինակցութիւններ, դիւանատաններու մէջ կնքուած թաքուն վաւերաթուղթեր, որ ազգերը կը դիտեն ազգերու դէմ, պետութիւններ պետութիւններու, ցեղերը ցեղերու ու արխիւով, աւերակներով ու տառապանքով կողողեն աշխարհը:

Կան մարդիկ, որ երբեմն այս ճշմարտութիւնները կը կրկնեն: Լաւ է կրկնել գանոնք ու որքան իրաւունք ունի վրացական քնկերակցական գործիչ Մերեթիլին, երբ հակառակ իր թրքախը կամ ազգայնամոլ ընկերներուն, կը պնդէ թէ՛՛ վրաց ժողովուրդին քաղաքական քայլերը մեծապէս կախուած է ռուս ռազմավարութեան ճակատագրէն... Մերեթիլին այս ճշմարտութիւնը կըսէ դառնութեամբ՝ եւ անձնապէս լսած եմ զայն իր քերթնէն: Կրէ՛ք դառնութեամբ՝ որովհետեւ հաճելի չէ հաստատել թէ ժողովուրդի մը բարեկեցութիւնը կախուած է ուրիշ ժողովուրդէ մը: Քաղաքական կեանքի մէջ դժուար է բարեկամական փոխարարութիւնները պահել: Այսուհանդերձ միակ ճամբան դարձեալ ժողովուրդներու հաշտ համակեցութեան մէջ է ու վրացիներու՝ թիւրքերու հետ ու Հայաստանի մարտնչին վրայէն վարած արկածախնդիր քաղաքականութեան մէջ չէ Կովկասի փրկութիւնը: Ո՛չ ալ նոյն «մէնչէվիկ» ներու կապրուան մէջ Մեծն-Բրիտանիոյ արտաքին նախարարութեան հետ:

Ու այստեղ, այս վերջին դիտողութիւնը մեզ կը բերէ ուրիշ կարգի երևոյթներու առջև: Ինչպէ՞ս կըլլայ, որ հեռավոր Մեծն-Բրիտանիան կը յաջողի իր իշխանութեան ենթարկել հսկայ Հնդկաստանը կամ փոքրիկ Քիւրտիստանը...

IV — Դրամատիրական տարածման քաղաքականութիւն — Տիրապետութեան միջոցներ, ռազմապաշտպանութիւն, դիւանագիտութիւն, հոգատարութիւն — Դադուրներ ու « ծայրագաւառներ », քաղաքական, ռազմական և տնտեսական գերութիւն — Ուժերու հաւասարակշռութեան ինի ձևը — Նոր տարագրել խաղաղափութիւն, պարտադիր իրաւարարութիւն, Ազգերու Դաշնակցութիւն — Անկախութիւն և ընկերակցութիւն. — Դրամատիրական պետութիւններու տարածումը տեղի կունենայ բազմաթիւ ճամբաներով: Երկար պիտի ըլլար մի առ մի և մանրամասնօրէն ջնջել գանոնք: Միջոցները կը տարբերին համաժայն պետութեան: Օրինակ՝ արտապետական Ռուսիան տարբեր ձևով իրած է Հարաւ ու տիրած Կովկասին մէնչեւ Հայկական Բարձրաւանդակը ու Ֆրանսան տարբեր ձևով հասած է Սուրիա: Տարբեր է նաև Անգլիոյ թա-

փանցումը, չի հական հարթագեոտիններուն մէջ ու օրինակ Իտալիոյ Հաստատումը Արիբրկեան Տրիպոլիսի մէջ, որ տեղ իունեցած է բացառապէս ռազմական դործութիւններու օգնութեամբ:

Առհասարակ, մինչև պատերազմը այդ տարածումը տեղի ունեցած է երկու ուղղութեամբ՝ նախ ռազմապաշտական եղանակով և երկրորդ՝ իսպաղ դիւանագիտական ճամբով: Առաջին պարագային, այսինքն կամ այնինչ պետութիւնները իրենց թիզապիւններով ու աւիններով է, որ տարած են իրենց գերբիշխանութիւնը, խնդրոյ առարկայ երկրամասերուն մէջ: Երկրորդ պարագային՝ այդ թափանցումը, կրած է նազ յաճակողական բնոյթ, օրինակ, Մեծն-Բրիտանիոյ Հաստատումը Եգիպտոսի մէջ ու բանակներէ աւելի զիւստագիտական միջոցներ են, որ զօրաբարժի ենթարկւած են: Պէտք է բռնի, որ երկու ճամբաներն ալ զընթէ միշտ տարած են նոյն արդիւնքին ու զերի ժողովուրդը նոյնքան տառապած է՝ մէկ կամ միւս ձևի տիրապետութեան տակ: Առաջին ձևի տարածման իրեն բնորոշ օրինակ, կարելի է լինէ՝ Հոհնէցոլէրեան Գերմանիան ու երկրորդին՝ Մեծն-Բրիտանիան:

Պատերազմին յետոյ պատկերը քիչ մը տարբեր է: Այս երկու կարծես թէ՛ Հինցած ձևերուն վրա աւելցան երկու ուրիշ ու աւելի դրական, դիւրին ու վճռական եղանակներ: Առաջինը՝ Հոգատարութեան պատրուակին տակ թաքնւած տարածումն է, երկրորդը՝ տնտեսական ու ելեմտական գերբիշխանութիւնը, որ մեծ պատուութիւն ու կը դնէ ուրիշ փոքրիկ պետութեան մը ուսին: Երկուքն ալ ռազմական բնոյթ չունին ու կը ներկայանան աւելի մարդկային կերպարանով: Օրինակ՝ Հոգատարութիւնը՝ որ նոյնիսկ նկատուած է «չնոր» մը կամ «անչափանքի» օժանդակութիւն մը: Այս ձևի տարածումը կը կատարէ Արգենտո Գաշնակցութեանը Հոյակապին տակ ու, ի հակառակ, զայն Հաստատողները, ի միջի այլոց՝ Վ. Վիլսոնը՝ ունեցած են բարեացակամ տրամադրութիւններ, ջանացած են վերջնել զբաժանութեան բարբարոս ծաւալման քաղաքականութեան հետեւանքը՝ պատերազմները: Բայց իրականին մէջ՝ Մեծն-Բրիտանիոյ Հոգատարութեան տակ գտնուող Իրաքի թագաւորութիւնն ու Ֆրանսայի իշխանութեան տակ միշտ մըթմթացող Սուրիան նազ տնտեսական գերութեան ենթարկւած չեն, քան Հինգիկաստանը կամ Եգիպտոսը: Նոյնը կարելի է բսկ միւս Հոգատարութեանց մասին:

Գալով տնտեսական ու ելեմտական ծաւալման, պէտք է ըսել, որ զբաժանութեան յաճագործման ամենէն կատարեալ ու ամենէն «մարդկային» այս ձևը՝ նոյն առին ամենէն առաջնակին է, որ կը ճնչէ գերի ու պղտիկ ժողովուրդները: Պետութիւններ կան, իրր թէ՛ գերբիշխան՝ որ ամբողջովին կախած են օտար զբաժանուիւնէ, իրենց ճարտարաբանութը, երկրազոր-ծուրիւնը, վերապէս, իրենց ամբողջ ընկերային ու քաղաքական կենսիցը կը գտնուի, իրենց սահմաններէն դուրս գտնուող զբաժանութեան մեծ տուններու ձեռքը: Ու միայն ասիական կամ աֆրիկեան փոքր ազգերը չեն, որ ենթարկւած են դրամի այս գորհուրելի գերբիշխանութեան, այլ եւրոպական պետութիւններ, որ զեռ երէկ՝ իրենց կարգին կը ճնչէին ուրիշներ, այսպէս՝ Հապպոտրիեան Աւստրիան, որ՝ կը խեղդի Համաձայնականներու լարած օղակին մէջ, ցար ձերտին նանտի ու Յանթօֆնիւրու Պուլիարիան, որ կը հնծէ

նոյնպէս յաղթականներու ծունկին տակ, Հօրթիի Հունգարիան ու նոյնիսկ, որոշ չափով Գերմանիան, որ հաղիւ սկսած է չնչնէ: Գաղթենի դարը, իբրատւած ռուսական յեղափոխութիւնէն, ռուս ազնականութեան բնաջնջումէն, ցարի թաւալուր տապալումէն՝ բացառապէս անգութ է գէպի իր բոլոր թշնամիները: Ան կը ճնչէ՝ ամէն կերպով, ռազմական, դիւանագիտական թէ՛ տնտեսական միջոցներով, սեինով, դաշինքներով, թէ՛ դրամաբարձով, նոյնն է: Երկրները կը վերածին՝ Հոգատարութեանց, պատութիւնը կամ Յունաստանի պէս քաղաքական ճճայրագաւառներու» և անոնց ամբողջ քաղաքական ու տնտեսական կենսիցն զպիշ կամ արձակող երկաթէ թիւերը կը գտնուին եւրոպական մեծ մայրաքաղաքներու զբաժանութեան Հաստատութեանց կամ այս վերջիններուն դրական ազդեցութեան տակ գտնուող արտաքին դործերու նախարարութեանց զբառնակներուն մէջ:

Ու դեռ պէտք չէ մոռնալ տարածման ու ծաւալման, ուրիշ աւելի գոհնէն ու ամարդի ձևեր: Գաղաքական լրտեսութիւնը, որ տարածւած է զերթէ բոլոր փոքր ու գերի պետութիւններուն մէջ, գաղտնի վարկերը, որ միլիոններու կը հասնին ամէն քաղքենի ելեմտացոյցի մէջ, բնիկ քաղաքական դործիչներու ու մտաբարձանութեան շուրջ տեղիւծած բարոյական անարար զգեցութեան օղակը, որ վերջիվերջոյ կը ստպէ՝ յանուն դրամի, դաւանանութեան մղել այս վերջիններուն մէկ որոշ սովորը: Այս բոլորը կը կատարեն մութի մէջ, բարոյական սկզբունքներու խորրայն դիմակին տակ, յաճախ, Հայրենասիրութեան և այլատրութեան անունէն, չփոթելով ժողովուրդներն ու աշխատաւրական գանգաւածները ու ապահովելով զբաժանութեան բացարձակ գերբիշխանութիւնը՝ փոքր ազգերու վրա՝ քաղաքական, ռազմական ու տնտեսական գտնիլներու վրա, զժբախտ Հօտերու վերածելով բազմափոխիոն աշխատաւորութիւնն ու միւս կողմէ՝ պերճութեամբ, ամէն տեսակ ապականութեամբ ու չափազանցած ու արտաքին հանձնքներով ողողելով արեւմտեան մայրաքաղաքները:

Ու կան մարդիկ ու փոքրիկ ազգեր, որ Արգենտո Գաշնակցութեան ու անոր հրապարակ դրած նոր տարազներուն մէջ, քիչ մը շատ աճապարանքով, կը կարծեն գտնել իրենց ամբողջական ապահովութիւնը Իրականութեան մէջ՝ զեռ զատարի խօսքեր են՝ պարտադիր իրաւարարութիւնը, զինութափութիւնը, «խաղաղասիրութիւնը» (քաղքենիներու սա ահաւոր ու շնական «խաղաղասիրութիւնը»), որ պատերազմներ կը պատրաստէ ամենուրեք, որ հնարաւորութիւն կուտայ մարաշախտ Փիլոսոփայական մէկ փոքր Հրացան պարտիլ Լիթանիոյ վրա ու միւս արիւ զինաղաղասիրական» յայտարարութիւններ ցրել աշխարհի չորս հովիտուն, որ կարծածէ նախածէ Գուլիսը Առաջարկել Ֆրանսայի պատերազմը օրէնքէ դուրս յատարարել ու միւս կողմէ խղաղամահ ընկ փոքրիկ Նիգարական: Մնաց որ Արգենտո Գաշնակցութեան մասին մանրամասնօրէն խօսած ենք նախորդ յօդուածով մը ու բացատրած, որ Ժրնիկ՝ ապահով գիւսանատուններուն մէջ իսկ կը պարբերին նոր զինակցութիւններ, նոր «բարեկամական» դաշինքներ, կը կարմնիլ քաղաքական ուժերու «նոր հաստարակաւորութիւններ»:

Ա՛հ, իօսինք, գիւսանակունդու այդ նշանաւոր ու Հինաւուրց «Հաստարակաւորութեան» մասին աւելի

բացայայտ կերպով՝ մի երկու յօդաձեւերու մէջ անոր սնանկութիւնը պայտուցանելէ յետոյ: Ի՞նչ է քաղաքական ուժերու սեւ վտանգաւոր հաւասարակշռութիւնը: Անշուշտ սու հասարակ իմացականութիւններուն տրւած չէ, զայն հասկալ իր բոլոր ներութիւններուն մէջ, բայց ինչ որ դիտենք, լայնօրէն կը բաւէ, մեր ամբողջ գայլոյթովը զայն դատապարտելու համար: Ճրանսան դաշինք կը կռի Լեհաստանի հետ, զերմանական հաւանական յարձակումի մը ատեն՝ փոխադարձ դինուորական օժանդակութեան սկզբունքով, նժարը թէքեցաւ Ճրանսայի կողմը: Բայց Գերմանիան, որ նոյնքան ծանօթ է ռուսերու հաւասարակշռութեան» օրէնքին, իր կարգին, ճեմարը հաւասարակշռելու համար» համաձայնութիւններ կնքել կաշխատի Պորտուգալիայի հետ, Լեհաստանի դէմ: Նոյն Ճրանսան, որ միշտ կը վայսնայ Գերմանիայէն կաշխատի զայն պնդողապարձան ենթարկել՝ ստեղծելով կեդրոնական փոքր պետութիւններու դաշնակցութիւն մը ու աւելնալով Ճրանսան ու Մասարիքի հանրապետութիւնը, որ բարեկամական կապերով կը կապուի իրարու հետ բայց Իտալիան կը հսկէ ու Պէնիթօ Մուսօլինիին կը դիմէ շունչարտանք, կը դաշնակցի Ալպանիոյ հետ, կը սպառնայ Յուգո-Սլավիոյ, Ճրանսան կը պատասխանէ «պաշտպանողական» զաշն կնքելով այս վերջինին:

հետ... Ու այսպէս շարունակաբար: Արդի՞նքը: Եւրոպան կրկին կը վերածէ դանդաղօրէն երկու թշնամի բանակներու, մեծերը կը քաշին իրենց հետ փոքր պետութիւնները, զերի ժողովուրդները ու կը բաւէ որ կողմերէն մէկը՝ զիջ մը աւելի զօրաւոր զգայ ինքզինքը միւսէն՝ որպէսզի նոր սպանդ մը պայթի աշխարհի գլխուն:

Ահա իրենց քաղաքական ուժերու հաւասարակշռութիւնը: Ահա՛ իրենց դիւանագիտութիւնը: Ահա՛ իրենց խաղաղասիրութիւնը:

Այս ընդհանուր ու կազմակերպւած դրամատիրական յարձակողականին դիմաց, որ հետզհետէ աւելի ուժգին ու լրբմի կը դառնայ, այս նախապատերազմեան դիւանագիտական ձեւերու յստիանջնայամ վերադարձն առաջ՝ որուն դէմ պարզ է թէ կարելի չէ կուլի, միայն ազգային գեղմի վրա, մամր ազգերու ազատագրական պայքարի այս նախապատերազմեան անկիւնարձակ առջի՛ ի՞նչ նոր, ազգերիկ իրատես ու դրական քաղաքականութիւն ունին մամր-Քաղքեմի կուսակցութիւնները, ի՞նչ... հարց է ասիկա:

Որուն պատասխանը կրնայ տալ ընկերվարութիւնը:

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԿԻՆՆԱՆ

Ե Զ Ե Ր Ի Մ Օ Ր Ա Գ Ր Ի Զ

4. ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ռուսաստանում հոկտեմբերեան յեղաշրջումը հարւածեց շատ շատերին: Իսպառ բնաջնչեց բարձր աշխատանքները, ոչնչացաւ բուրժուազիան, շարքերը սպայութիւնը, կոտորեց մտաւորական դասը, թալանեց զիւղաջրութիւնը, բայց և ոչ մէկը շտուժեց բանուր դասակարգի շարք: Յետագային, սպայութեան մնացորդները նորից սնցան պաշտօնի. նոր տնտեսական քաղաքականութիւնը լայն նախաւորութիւններ տեղից բուրժուազիայի շարահանութիւնների համար. մտաւորականութիւնը, մասնազէտները սուսան տակ, տարուկ տեղիք դրանք: «Երեսները դէպի դիւր» նշանաբանը բաւականին բաւարարեց դիւրացու պահանջներին, և միայն բանուրութիւնն էր, որ միշտ էլ մնաց կոտրած տաշտակի առջև: Պորտուգալիան աշխարհում շահագործուում է ոչ միայն բանուրի աշխատանքը, այլ և անուրը:

«Բանուրական» իշխանութեան ութերորդ տարում բանուրի աշխատավարձը կազմում էր նախապատերազմեան շարքի միայն 80%: Զպէտք է մտանում, որ խօսքը վերաբերուում է Ռուսաստանին, ուր բանուրութեան կիճակը, պատերազմից առաջ, համեմատած եւրոպական երկրների հետ, համարուում էր վատթարագոյնը: Ուրեմն, հոկտեմբերեան «յիզակփոխութիւնը» բանուրական դրութիւնը նոյնիսկ այդ նախապայտն աստիճանին չհասցրեց:

Եւ, իրօք, ռուս բանուրի կացութիւնը շատ է

խղճալի: Աշխատանքութեան այդ հսկայ բանակի մէջ սովորը միայն օգտուեց յեղափոխութեան «բարիքներից»՝ մուտք գործելով կառավարութեան մէջ և ստանալով վարչական գանազան պաշտօններ: Մնացած 90%, բոլորովին իրաւագործիկ, ստանում է ստոյնական ամենամանր պայմաններում: Կեանքը՝ անասելիօրէն թանգ, աշխատավարձը՝ հասցրած նւագազոյնի, մեծագոյն մտքը՝ նախկին գետնափոր-հակառոյջապահական ընկալարներում, ապա խօսքի ու բողոքելու իրաւունքից զուրկ, իսկ աշխատանքի պայմանները անհամեմատ աւելի դժւար: Ճիշտ է, կիրառուում է ութ ժամեայ բանուրական օր, բայց դրա փոխարեն պարտադիր է արտաժաման աշխատանքը: Յետոյ, զործարանների, առանց այն էլ հին ու մաշած մեքենաները՝ ծանրաբեռնած գերարտադրութեամբ՝ պահանջում են ուժերի առաւելագոյն լարում: Այնպէս որ, ռուս բանուրը տեխնիկական յետամնաց գործարանի մէջ ութ ժամեայ ընթացքում սպառում է շատ աւելի կուտը, քան եւրոպական նորածե մեքենաների վրա տաս ժամ աշխատող բանուրը:

Այդ յետամնացութիւնը ստանալանում է նաև աշխատանքի համար անպակասով պայմաններ: Մի ամիս սպիւնդով մեծ գործարան ունեցող մի քաղաքում՝ չեմ յիշում մի օր, որ ասանց դժբախտ պատահարի անցած լինի. — մի օր բանուրը կաթսան է ընկնում և ողջ-ողջ այրուում, մէկ ուրիշ օր մեքենան է ճզմում ու սպառնում, երրորդ օրը սայլակի պարանն է կտրուում ու երկու-երեք հոգի միանգամայն տակով անում Բայց, դրա

փոխարէն, խորհրդային իշխանութիւնը ինչպէ՛ս դիտէ պաշտպանել օտար բանւորների շահերը: 1925թ. գարնանը, երբ գերմանական մի Հանք էր փրկւ ռ տակոյմն արել յարտատուն Հանքափորներ, Խորհրդ. Միութեան մէկ ծայրից մինչև միւրս բողոքի ցոյցեր կազմակերպւեցին, յեղափոխական բանաձևեր Հանւեցին դրամատիրութեան դէմ: Իսկ երբ մի քանի օր յետոյ իրենց Հանքերից պահուած բանւորների գետնի տակն իջեցնող սայլակի պարանկ կտրւել ու տեղն ու տեղը սպանել էր քանակինգ Վոզի, այդ լուրը միայն շատ մանր տուտերով Հազորդւեց տեղական թերթի մի անկիւնում: Եւ միանգամայն լռութեամբ անցան այն ցոյցի վրայից, որ այդ առթիւ կազմակերպւել էին բանւորների կանայք և որը ցրւել էր ոստիկանական մարտիկներով:

Բնականաբար, այդ բոլորը չի վրիպում բանւոր դասակարգի տեսողութիւնից, և նրա մէջ գնալով աւելի է խորանում Հրեասթափութիւնն ու անգոր դայրոյթը, մի երևոյթ, որ շատ է նկատուի Ռուսաստանում: Եւ ի՞նչ է մնում անել ուսւ բանւորին, եթէ ոչ իր վիշտը թաղել օդու մէջ: Թէ օդին ինչպիսի շարիք է, դժւար է նկարագրելը: Գաղափար կազմելու համար պէտք է սպրեւլ բանւորութեան մէջ, մօտից դիտել նրա կենսաբեր:

Օդու արտադրութիւնը պաշտօնապէս թոյլատրւած է Ռուսաստանում 1924թ. աշնանից, պետական բիւրօյի բարձր գոցելու նպատակով: Թէ տարեկան որքան օդի է սպառուում, երևում է նրանից, որ վաճառուած օդու հատոյթը 6-7 հարիւր միլիոն ուտրըրից աւելի է: Իսկ որքան էլ գաղտնի է քաշուում, որքան «սամագուն» է արտադրւում... Ողբերգականը այն է, որ օդու առևտուրը պետական մենաշնորհ է, այսինքն, ինքը՝ գրանւորագիրւցցիական իշխանութիւնն է աշխատանքը դասին օդի մատակարարողը... Խոճիկ ստացած օրը բանւորներից շատերը գործարանից ուղղակի գինետուն են գնում, որտեղից սուն են դառնում կամ առանց կողպէկի և կամ դրամի մեծ մասը խմած ու կորցրած: Դրա համար էլ քանի անգամ բանւորների կանայք դիմումներ արին գործարանների վարչութիւններին՝ պահանջելով, որ ամուսինների ուճեկները իրենց յանձնւի:

Կոմունիստական կուսակցութիւնն այս շարիքի դէմն ուզում է ստնել պրոպագանդով: Կեղծաւորութիւն չէ՞. մի կողմից պետական բիւրօյի մէջ մտցնում է վեց-եօթ հարիւր միլիոն ուտրըրի օդու եկամուտ, միւս կողմից հակաաւթրոյական քարոզ կարողում...

Երբեք չեմ մոռնայ այլ բանտարի, որը կօսպերատիւում, երբ օդու ինքը ձեռքն անցաւ, երկա՛ր, շատ երկար նայեց վրան, ապա, դառնացած, բացականչեց. «Երեք տարի պաշտպանեցինք, արիւն թոփեցինք, մեն իշխանութիւնը պաշտպանեցինք և միայն սա շահեցինք»: Ասաց ու արագութեամբ շէի տակը խփելով ամփի մէջ՝ խցանը թոցրեց և բերին դնելով՝ ազահութեամբ կու տուց: Խուս ժողովուրդը օդին կնքել է Հէնց իրենց կոմունիստների անունով: Օդին «բրիկոլիկ» է ասում՝ Բրիկոլի անունով: Մեծ շէի «կոմունիստ» է ասում, կէս շէին՝ «կոմերիտ» և քառորդին՝ «պիոներիկ»: Շատ անգամ կը պատահէ, որ գնողը կօսպերատիւ մտնելով՝ բղաւում է. «մի կոմունիստ տէք ինձ», կամ թէ՛ «մէկ նա այդ կօմերատիւում»: Եւ վաճառողը գիտէ, թէ իրենից ինչ են պահանջում:

Շատ յաճախ առիթ էր լինում գրողիցիւր բանւոր-

ների հետ: Նկատելի էր, որ նրանք այնքան էլ զգուշութիւն չէին պահպանում և պատրաստ էին ամենափոքի րանայ իրենց սիրտը: Դժգոհութիւն և Հրեասթափութիւն, — ասա իրօսակցութեան ամբողջ միտքը: Գանդառուում էին, որ իրենց իրաւական վիճակը ոչնչով չի տարբերւում նախկինից՝ ցարական ժամանականից, որ աշխատանքի պայմաններն աւելի վատ են, իշխանութիւնը անուշադիր է իրենց պահանջներին, միակ շահագործող տարրը իրենք են, որ սեփականատէր դիւղացիութեան հետ աւելի են սիրալիր, քան թէ ընչազուրկ բանւորների, որոնք չեն կարող ոչ գործադուներն անել և ոչ ազատ ձայն բարձրացնել, որ ստիպւած են առանց այն էլ իրենց չնչին աշխատավարձից բաժնի հանել օտարակրեալ ցանոցան կազմակերպութիւններին, որ իրենց շարքերից իսկ դուրս եկած գործարանի վարիչները բարձրից են նախ՛մ բանւորների վրա ու ամէն կերպ սղծում և այլն Առանձնապէս, բանւորութիւնը դժգոհ էր Կօմկուսակցութիւնից:

Համարեա ամէն կիրակի հանդիպում էի մի խումբ ծանօթների: Բոլորն էլ մասնագէտ և Հին բանւորներ էին: Մի քանիսը ցարական բանտերի ստաճ ունէին, իսկ մէկը եղել էր քաւորու: Երբ մի անգամ փորձեցի ևտաքերը նրանց կենսաբով, Պետեան, որը մի տեսակ խմբի ղեկավարի դեր էր կատարում, Ղդայնօրէն պատասխանեց. — Ի՞նչ ես հարցնում, ինքը արդէն քանի շաբաթ է մեր մէջ եւ և շատ լա սեփական ալքերով տեսնում ես: Եթէ արտօմամեայ աշխատանքը չունենանք գժւարուտուր կը կարողանանք զրկւններս պահել: Եւ այդ դեռ մենք, այսպէս ասած, բանւոր ազնւականներս, պատկերացրու, թէ ի՛նչ վիճակում են սև աշխատանք տանողները: Մնացածն արդէն ինքը աւելի լաւ դիտես: Նայի՛ր, ահա Ստեփան Պետրովիչը. մազերը ճերմակ են հանքերում, մինչև Միքիլ է դնացել, այդ հասակին մասնակցել է քաղաքացիական կռիւներին, ամբողջ շրջանում առաջին մասնագէտն է համարւում, և ի՛նչ. մի ինչ որ երէկայ լակուտ նրա վրային կանգնած՝ հրամաններ է արձակում և երկու անգամ աւել ուճեկ ստանում: Այդ բոլորը նրանից է, որ կուսակցութեան մէջ չի ուզում զրւել և տէրերի առջև չի թնում: Դրանից պատ, այս տարիքում էլ ստիպւած է արտօմամեայ աշխատանք տանել: Եւ բոլորս ենք այդպէս: Առնենք ինձ: Երբ սպիտակ ճաւատը ստեղծւեց, իսկոյն մտայ կարմիր բանակի շարքեր՝ տանը թողնելով երիտասարդ կնոջս երկու երեխայի հետ: Հինգ տարի մնացի զինուորական շարքերում՝ երեք տարին անցկացնելով պատերազմի դաշտում: Մէկ անգամ էլ վիրաւորուել եմ: Հինգ տարիներն էլ ծառայել եմ ամենայն անձնւիրութեամբ ու անկեղծութեամբ՝ միշտ համոզւած, որ մեր դասակարգի շահերը և մեր հարազատ իշխանութիւնն եմ պաշտպանում: Երբ զինւորական ծառայութիւնից վերադարձայ սուն, ընտանեկան մեծ ողբերգութիւն սպրեցի: Կիսս, մնալով միայնակ ու անճար, մի կողմ հաց ճարելու համար ստիպւած է եղել իր ամբմիքը վաճառել: Սկզբում նրա գաւաճանութիւնն ինձ կատարեցրեց և ջրէ մնաց օրապարծութիւն անեմ: Յետոյ մտածեցի, որ աւելի լաւ է բաժանւեմ ու երեխաներիս հետ ստանձանամ: Բայց երբ աւելի խորը դատեցի, գտայ, որ աւելի լաւ է բաժանւեմ ու երեխաներիս հետ ստանձանամ: Բայց երբ աւելի խորը դատեցի, գտայ, որ աւելի լաւ է թաժանւեմ ու երեխաներիս քաղցից փրկելու համար: Եւ ես ներքեի նրան, պահեցի ինձ մօտ: Սակայն, ինձ համար նա այլևս կին չէ. սպրում է

տանս, որպէս երեսաներիս մայր: Իսկ այդ բողոքից յետոյ, երբ նորից մտայ գործարան ու կաշիս վրա գաղցի մեր կիանքի զնով հաստատուած իշխանութեան վերաբերմունքը, հիասթափութեան չափ ու սահման չկար: Եւ ես խորապէս ափսոսացի մեր արեանը, որը հոռեց խորհրդային իրաւակարգը պաշտպանելու համար: Բայց զու գիտես, թէ որքա՞ն զոհեր ինչց մեր շարքերից բաղադրական կտիւր, վերջացրեց նա: Եւ իր յուզմունքը ծածկելու համար դարձաւ խանութպանին ու բարկացած բղաւց. «Երկու շէ՛ անդիլիական»...

Երբեմն բանւորները մէջ հետաքրքրական վէճեր էին տեղի ունենում: Մէկ անգամ զինետուն մտան երեք բանւորներ՝ երկուսը քանահինգից—երեսուն տարեկան և երրորդը՝ երեսունից անց: Մէկ ուրիշ սեղանի շուրջ նստած էին հինգ հոգի, նոյնպէս բանւորներ, որոնցից մէկն աւելի անգուր էր հազուայէ մ որի խօսելու բարձր շեշտն ու պահանջը ցոյց էին տալիս, որ հասարակ աշխատաւոր չէ: Թուակցութիւններից հասկացուց, որ աշխատավարձ ստանալու ժամանակն անցել է և դեռ ոտնիկ չեն ստացել: Երեքից աւելի տարիքաւորը դառնալով ընկերներին բացակայեց. — Ստանան տանի, բաւական չէ, որ մեր արիւն քրտինքն են ծծում, էն մի քանի կուպէկներն էլ ժամանակին չեն վճարում: Եւ սա կոչւում է բանւորական իշխանութիւն:

Միւս խմբից պաշտօնեայի զիրք ունեցողն իսկոյն պատասխանեց, թէ՛ կարիք չկայ նման վայրերում դժգոհութիւն արտայայտելու. դրա համար գոյութիւն ունեն արհեստակցական միութիւններ, որոնք միջոցով էլ կարող են պահանջել աշխատավարձ: — Գիտե՞նք մեր միութիւնները, վրա բերեց բանւորը, դրանք բողոքն էլ կազմենի (կառավարական) մարմիններ են և երբեք էլ չեն կարող պաշտպանել բանւորի շահը. ի՞նչ բանուորական միութիւններ են, երբ վարիչ մարմինները նշանակում են իրենց ուղած մարդկանցից, որոնք պարտում են իշխանութեան դուրսուկի տակ: Ձեր միութիւնները միայն գիտեն մեր ամասականներից տոկոսներ հանել չինացիների, մարդկցիների ու գերմանական բանւորների օգտին: Փաշտօնեան հանդարտ մայնով սկսեց բացատրել, որ այդ ամենը արւում է համաշխարհային յեղափոխութեան օգտին. դրութեան տէր դարձած ոռու բանւորը պէտք է որոշ զոհաբերութիւններով նպաստի այդ շարժմանը:

— Թողէ՛ք մեր այդ հէջեաթիւնները, բաւական լսել ենք արդէն: Ինչո՞ւ անպայման մեզինից է պահանջուում այդ զոհաբերութիւնը: Մի՞թէ թէ՛ք ենք զոհաբերել: Ի՞նչ շնորհիւ է, որ դուք՝ կուսակցականները փառաւոր կեանք էք վարում և մեր հաշին միջազգային յեղափոխութիւն խաղում:

Փաշտօնեան, զեռես դասուած մայնով յայտնեց, որ, ինչպէս երևում է օղին շատ թունդ է աղդել ու գլխից անհեթեթ բաներ է դուրս տալիս.

— Մենք ոչ թէ յեղափոխութիւն ենք խաղում, այլ համաշխարհային յեղափոխութիւն պատրաստում: Դրա համար էլ աշխատում ենք բոլոր ճնշւած ժողովուրդներին ու բոլոր երկրների բանւորներին միացնել մեր դրօշի տակ: Օրինակ, վերջերս կազմած ոռու—անդլիական կոմիտէն և Սլերիայի, Մարդիկ և Չինաստանի յեղափոխութիւնները:

Միտինգային այդ խօսքերը վերջնականապէս կատարեցրին բանւորին, որ ուղի կանգնելով՝ բղաւց.

կոյր չես և տեսար, որ նոր ներս մտայ և բնաւ էլ հարթած չեմ: Այդ ձեռք գլուխներն են միշտ գտանահողում: Բաւական է, վար բերէ՛ք մեր դիմակները և վերջ տւէ՛ք աչքակապուկին: Այդ բոլորը երգէ՛ք օտարների առջև, որոնք միայն հեռուց են լսում մեր ձայնը: Մեզ այլևս չէ՛ք կարող խաբել: Իսկ ինչ վերաբերուած է մեր Չինաստանին, Մարդիկն ու անդլիական կոմիտէին, այդ դեռ կր տեսնեք:

Ձուր էին աշխատում դայրացած բանւորի ընկերները հանգստացնել նրան: Աչք ու ունքով ու ձեռքի շարժումներով ամէն կերպ հասկացնում էին, որ դիմացինը կուսակցական է և շարժ է նրա հետ դուրս դնել:

— Թողէ՛ք ինձ հանգիստ, դարձաւ նա իր ընկերներին, ես շատ լաւ գիտեմ, թէ ում հետ դործ ունեմ: Բաւական է, ինչքան լուչիւնք: Եթէ շատ վայտնում էք, գնացէ՛ք և սողացէ՛ք նրա ոտքերի տակ...

Ապա միքնեով գլխաւոր, մէկ վերջին արհամարհական հայեացք նետեց պաշտօնեայի ուղղութեամբ և դուրս թռաւ:

Մի ուրիշ անգամ վկայ եղայ հետեւել վիճարանութեան: Երկու երիտասարդներ, որոնք, ինչպէ՛ս յետոյ պարզեց, հօրեղբոր տղաներ էին, նստած գիւնետանը՝ կոնծում էին: Մէկը՝ քսաներկու—քսաներեք տարեկան, նիհար ու հիանդուող դէմքով՝ կուսակցական էր: Միւսը՝ քեչ աւելի տարիքոտ, լեցուն, սուղով դէմքով և երկաթեայ մկաններով հասարակ բանւոր: Այդ ժամանակ քաղաքական կարեւոր դէպքերն էին Լոկարնոյի համաժողովը, չինական շարժման և ուսմանական ու լեհական սահմաններում ուսաների հետ պատահած միջադէպերի պատճառով առաջացած անըլուտուս յարաբերութիւնների լարումն ու ուս—անդլիական կոմիտէի կազմելը:

Որպէս ազգականներ, երիտասարդներ խօսում էին շատ ապաս և արտայայտում ամէն ինչ: Անկուսակցականը ասում էր. — Բաւական է, ինչքան ծծեցիք մեր արիւնը: Անս Անդլիան պարտատուած է և շուտով մեր թողն իսկ չի մնայ: Այն ժամանակ, գիտցիք, որ քո վիզը առաջին կարողը ես եմ լինելու:

— Գո Անդլիան բնաւ սարասիկի չէ մեզ համար. պատասխանում էր կուսակցականը. ճիշտ է, նա տեխնիկական մեզինից ուժով է, բայց մի՛ մոռացիք, որ ամբողջ աշխարհի բանւորութիւնը մեր կողմն է, և Անդլիան երբեք չի համարձակել մեզ վրա յարձակել: Այ, հէյն վերջերս կազմեց ոռու—անդլիական կոմիտէն, որի նպատակն է զսպել անդլիական իմպերիալիզմի ախորժակը:

Անկուսակցականը բաժ—բաժ ծիծաղեց ու խփելով հօրեղբոր տղայի ուսին՝ ասաց. — Դեռ ջահէլ ես և շատ միամիտ մնացել: Դու կարծում ես, թէ անդլիական կոմիտէն ջեզ օգնութեան է գալու: Յիմար, դու չես հասկանում, որ քո Գերսելը Անդլիայի լրտեսն է, և այդ բոլոր խաղեր են: Իրականը Լոկարնոն է, որը շուտով բուլեիները հողին է առնելու: Բայց թողնե՛ք այդ: Որ շուտով մարկսեր ու տրոուկ բուլեիներին փոշին քամուն կը սանք, այդ փաստ է: Դու ինձ այն սաս, թէ ինչո՞ւ պէտք է դու ամսական հարիւր եօթանասուն ուղբով ստանաս, իսկ ես քառասուն էլ չեմ ստանում: Նայի՛ր ի՞մ ձեռքերին էլ, քո փափուկ թաթիկներին էլ. ինչո՞ւ մեր իշխանութիւնը ձեռքի կոչ

տներն աւելի զիչ է դնահատում, քան թէ սպիտակ ձեռնոցները:

Նրանք արդէն դատարկում էին օդու երրորդ շինը և երկուսի աջերն էլ կարմրել էին: Կուսակցականը չիմացաւ ինչ պատասխանել և սկսեց կմկմալ: — Դէ՛, որովհետև ես վարչութեան մէջ եմ աշխատում... Իմ պատասխանատուութիւնն աւելի մեծ է... Յետոյ, մտաւոր աշխատանքն աւելի է ծանր... Գիտում, որ բացի պաշտօնից ուրիշ աշխատանք էլ եմ ստանում... Եւ, վերջապէս, պէտք է գիտենաս, որ մեզ մօտ դեռ ընկերակարութիւն չի հաստատուած և ժամանակաւարապէս անխուսափելի են նման...:

— Ուրեմն, այդպէս, չթողց որ խօսքը վերջացնի, երբ ձեզ համար ձեռնտու չէ, անհասարակութիւնը պաշտպանելու կերպն էլ գիտէք:

Ապա ոտքի կանգնելով, օրօրէկով մօտեցաւ կուսակցական ազգականին ու սպառնական կեցածք ընդունելով՝ կրկնեց իր հարցումը: — Դէ՛, սա, ինչո՞ւ պէտք է դու հարիւր եօթանասուն ստանաս. ի՞նչով ես ինձից աւելի նոյնիսկ ուսումովը ինձից յետ ես: Ինչո՞ւ պէտք է դու աւելի ստանաս, նրա համար, որ կուսակցական ես: Դէ՛, պատասխանիր, է՛:

— Լաւ, Վարդեան, թողնե՛ք վէճը, տեղը նստի՛ր, ասաց կուսակցականը և ձեռքով հրեց ընկերոջը դէպի աթոռը:

— Տեղս նստե՛մ — ա՛ն քեզ տեղը նստել: Եւ Վարդեան սկսեց ուժգին հարածներ տեղալ կուսակցական ազգականի դիմին, և անվերջ բռնալ: — Ինչո՞ւ, ինչո՞ւ պէտք է դու աւելի ստանաս, գէ՛, պատասխանիր:

Միւսն աշխատում էր գրկել Վարդեանին և լալով հարցնում էր. — Վարդեան, սիրելի՛ս, ինչո՞ւ ես խփում, ի՞նչ եմ արել քեզ:

Բայց Վարդեան դազազած էր, և շուտով ընկերոջն ոտքերի տակն առած՝ տրորում էր: Մեր խանութիպանը փորձեց միջամտել, բայց շուտով նոյնպէս թուալեց դեմքը և ականջը բռնած քաշեց տեղը: Եւ հազիւ կարողացայ բռնել սեղանը, որ Վարդեան բարձրացրեց ոտքերի տակ թաւալով ընկերոջ գլխին խփելու համար: Այն ժամանակ նա բռնեցքի մէջ առաւ ապակեայ ազամանը և սկսեց հարածն չօրէրոր տղայի մէջքին: Իմ միջամտութիւնն էլ չօգնեց: Դուրս թռայ, որ մարդիկ կանչեմ օգնութեան: Երբ փողոցում սպասում էի անցորդի, մէկ էլ տեսնեմ, խանութի դուռը բացեց և Վարդեան, շարժած արեւելայ կօմերիտասարդին՝ ուղեւորեց դէպի տուն:

Այս, խորհրդային բանուորը մեծ զրկանքներ է կրում և շատ է ճնշւում: Նա որոշ գրութիւններ տանում և համբերութեամբ ու լուսթեամբ, շատ անգամ էլ դժգոհում է ու բողբոջում: Լինում են նոյնիսկ ըմբոստութեան դէպքեր: Բայց ամենից շատ նրան դարցնում են օտարերկրեայ պատերազմութիւնները, որոնք այցելութեան են դալիս Ռուսաստան, շրջում բանւորական շրջանները և ապա իրենց դժուրանկութիւնն ու հրացանը յայտնում թէ խորհրդային և թէ հերոսական մամուլում: Դժման բռնապետութեան ճեղքանքում խզողոջ բանւորութիւնը այդ այցելու-

թիւններն ու տպաւորութիւններն իր հասցէին ուղղւած ծաղր ու հեղանք է համարում և շատ արգարացիօրէն ասում է. — Երբ կարգում ենք թերթիւրում եւրոպացի «հիւրերի» կարծիքը մեր մասին, ճիշտ այն եւրոպացիներն ենք ունենում, ինչ որ գգում են բանտերում և Չէկայում տատաղողները, կարգալով նոյնանման «հրացմունքներ» իրենց գրութեան մասին:

Որ եւրոպացի պատերազմիւր, րանց լեղու իմանալու, իշխանութեան ցուցմունքներով և չէկիստները ուղեկցութեամբ են ճամբորդում և «դիտում», այդ արդէն կասկածից վեր է: «Հիւրերի» դալու օրերը տեղի իշխանութիւններն առանձին շանք են թափում գործարանները կարգի բերելու, բանւորական թաղերը մաքուր պահելու, փողոցներում հարքած մարդկանց երեսալն արգելելու և քաղաքը շքեղ զարդարելու: Նոյն իսկ այդ օրերը աշխատող բանւորներին բաժանում են մաքուր հագուստ, որը պարտաւոր են հանել օտարների ներկայութեամբ: Ի պատիւ հիւրերին սարքում են ճոխ ճաշկերոյթներ, կազմակերպում միտինգներ, գումարում արտակարգ յիստեր: Ձրուցելու համար պատերազմութեանը ներկայացնում են իրենց կողմնակից բանւորներին, որոնք փառաբանում են խորհրդային դրախտը: Եւ ի՞նչ պատերազմները վերապահում են լաւագոյն տպաւորութիւններով, այդ ամբողջապէս պէտք է վերազդել բոլշևիկներին ճարպկութեան և յաւիտ կեցծիքին:

Ինքամթիւ հանքերով շրջապատւած և իր մէջը հսկայ գործարան ունեցող մի քաղաքում էի, երբ այցելեց դերմանական բանւորական մի պատերազմութիւն: Առանց խորութեան, բոլորն էլ պատերազմներն համարում էին գերմանական լրտեսներ և ամէն կերպ խոյս տալիս նրանց դիմաւորելուց (ինչպէս երեսուցում է, ուսմաների մէջ խօսում է դեռ պատերազմից մնացած ատելութիւնը): Կայարանի մօտ գտնւած հանքի բանւորները լաւ ընթրիք էին պատրաստել և սպասում էին գնացքի դալուն: Սակայն, գնացքը ուշացել էր, և սպասողները, այլևս չկարողանալով անտարբերութեամբ նայել սեղանի վրա շարած օդու շիշերին, կամաց-կամաց սկսել էին ընթրել... Իսկ երբ կէս դիշերից անց ժամանել էին պատգամատրները, ոչ ոք չէր դիմաւորել. ամենքը հարքած էին: Միւս օրը ես ներկայ էի աշխատանքի տանը եղած բանւորական ժողովին, ուր արհմիութեան քարտուղարը պատմում էր այս դէպքը և յորդորում բանւորներին, որ գտնէ այս մի երկու օրը գոպկն իրենց և օրի չգործածին:

Կիրակի օրը, երբ աշխատանքի տան անջել հրապարակում միտինգ կազմակերպեց, ուր փոխադարձ ողջոյնի խօսքեր ու ճառեր արտասանեցին, մեծ դարձմանքով նկատեցի, որ քաղաքի քան հազարից աւելի բանւորներից միայն մօտ երեք հարիւր հոգի էր ներկայ, այն էլ, կէսից աւելին, կանայք: Այս վերաբերմունքն իսկ բաւական է համոզելու, թէ որքան «արտաբաց» և «համակրանքով» են ընդունում խորհրդային բանւորները օտարերկրեայ «բնիմոգային հիւրերին»:

ԱՇՈՏ

Կ Ա Խ Ա Ր Դ Ա Կ Ա Ն Թ Ր Զ Ա Ն

(Գիւղատնտեսական տաղնապր Ռուսաստանում)

Եւրոպական Ռուսաստանի Հողի քանակը յեղափոխութիւնից առաջ, 1916 թիւ վիճակագրութեան համաձայն, կազմում էր հետեւեալ թւերից.

- 140 միլիոն դեքտարին արքունական Հող.
- 165 ,, ,, ,, գիւղացիական ու մասնատորական Հող.
- 91,5 ,, ,, ,, խոշոր կալւածատիրական և կայսերական տոհմին պատկանող Հող.

Արքունական Հողերը ընկած էին, գլխաւորապէս, հիւսիսային, նոսր բնակեցած նահանգներում — Արխանգելսկի, Օլոնեցկի, Պեքմի, Վոլոգդայի և այլն: Այդ շրջանում գտնուում էր Եւրոպական Ռուսաստանի բոլոր արքունական Հողերի 87% — 122 միլիոն դեքտարին, որոնք տնտեսական առանձին արժէք չէին ներկայացնում, հետեւաբար և հաշի չուպեք է առնւել:

Գիւղացիական Հողատիրութիւնը մինչև 1916 թւականը կազմած էր 138,8 միլիոն դեքտարին համայնական և 26,4 միլիոն դեքտարին մանր մասնատորական Հողից:

Պոչոբ-կալւածատիրական Հողերի տարծութիւնը հաստատուում էր բոլոր գիւղացիական Հողերի կէսին և կողմում էր Եւրոպական Ռուսաստանի բոլոր Հողերի մէկ քառորդը և մշակելի Հողերի՝ 33,1%:

Յեղափոխութիւնը պէտք է վերջ տար ընկերային-տնտեսական այդ հակասութեան՝ հաւասարեցնելով ի հաշիւ կալւածատիրական Հողերի սակաւաճող ու հողագործի գիւղացիութեանը՝ աւելցնելով նրա Հողի քանակը գրեթէ մէկ ու կէս անգամով: Կալւածատիրական բոլոր Հողերից սեփական միջոցներով մշակուած էր՝ 20 միլիոն դեքտարին երկրագործական նպատակներին համար, 30 միլ. դեք. տնտանների տակ էր, իսկ մնացած աւելի քան 20 միլ. դեք. կապալով էր տրուում գիւղացիներին: Հետեւաբար, այդ Հողային պահեստից երկրագործական արտադրութեան վրա դործադրուած էր աւելի քան 40 միլ. դեքտարին, այսինքն՝ կալւածատիրական Հողի երկու-երրորդը, իսկ մէկ-երրորդը բռնւած էր անտառների: Գիւղացիական Հողերից երկրագործական մշակուածքով բռնւած էր 65 միլիոն դեքտարին (40,1%): Որով ամբողջ մշակուող Հողը մինչև 1916 թւականը հաստատուում էր մտատրոպպէս 105 միլիոն դեքտարինի, այսինքն՝ Եւրոպական Ռուսաստանի ամբողջ Հողի մէկ-երրորդից պակաս մասը: Այս հաշի մէջ չեն մտնում գիւղացիական արտատեղիների, մարդագետիկները, անվար թողնւած Հողերը և այլն:

*) Այս յօդուածը պատկանում է երիտասարդ սոց. - յեղ. Ս. Վերեշչակինի, որ առնում եմք «Վ. Ռ.»-ի վերջին համարից: Նա բաւական ցայտուն կերպով ցոյց է տալիս այն մակուղին, որի մէջ կանգ է առել խորիլոյային տնտեսավարութիւնը: ԽՄԲ.

Մերիքի հսկայական Հողը իր չափազանց ցանցատ աղարնակութեամբ և աճադին Հողային պաշարով ու անտառային տարածութիւններով այս դէպքում ի նկատու չի առնուում, որովհետև Ռուսաստանի այդ մասը դեռ ևս չի կրել այնպիսի տնտեսական դժւարութիւններ, որպիսին վիճակուած էր Եւրոպ. Ռուսաստանին, և դեռ երկար պէտք է նկատուի, որպէս գաղթահողի պահեստ:

Յեղափոխութիւնը բոլոր Հողերը դրեց գիւղացիութեան արամադրութեան տակ՝ փոխելով սեփականութեան հասկացողութիւնը և խախտելով պետութեան ու Հողատէրերի նախկին իրաւունքները: Այս ձևով, առաջին հերթին, լուծուում էր ընկերային արտադրութեան հարցը, որը իր վախճանին հասաւ 1917 թ.ին, Հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ, ամբողջ Հողի տարեային գրաւումով, բայց այս յեղափոխական տարերային քայլից յետոյ անմիջապէս առաջ եկաւ մի ուրիշ աճադին խնդիր — պետական տնտեսութեան հարցը, որ հիմնական արժէք է ստանում երկրի ժողովրդա-տնտեսական զարգացման ճակատագրի համար և որ ներկայ զաղաքական պայմաններում չի կարող լուծուել:

Գիւղատնտեսութիւնը Ռուսաստանում գլխաւոր հիմք է պետութեան և ամբողջ տնտեսական քաղաքականութեան: Նա հանդիսանում է սնունդի աղբիւր քաղաքների, արդիւնաբերական շրջանների համար, նախանիթի յենարան՝ խոշոր արդիւնաբերութեան և գլխաւոր գրամական աղբիւր ուսուական արտադրութեան ասպարէզում: Գիւղատնտեսութեան մէջ զբաղուող բնակչութեան թւով աշխարհի բոլոր երկրներից Ռուսաստանը ներկայանում է գերազանցապէս Հողագործական երկիր:

1926-ի մարդահամարի տւեալներով Ռուսաստանի գիւղատնտեսութեան վրա ընկնում է 120 միլ. մարդ — 7 միլիոնով աւելի, քան 1913 թւին (6% աճում), մինչ զաղաքների բնակչութիւնը, նոյն տւեալներով, հաստատուում է 25,7 միլ. մարդ: Գլխաւոր մշակուածքների (հացահատիկներ) ցանքերի տարածութիւնը 1926 թ.ին հասաւ 89,1 միլ. դեքտարինի՝ 1913 թ.ին 95 միլ. դեքտարինի համընդ (Պետպլանի տեղեկութիւններով): Այսպիսով, ամբողջ Պոչոբը. Միութեան աղագրանկութեան 76%, Հողագործներ են և մի քառորդից պակաս բաժին է ընկնում քաղաքներին: Բնորոշ է, որ աղգարնակութեան աճումը աւելի ուժեղ թափով մեծանում է գիւղերում, հակառակ քաղաքների և արդիւնաբերական շրջանների դարգայմանը Հովանտարող քաղաքականութեան և հակառակ այն բանի, որ գիւղատնտեսական զբաղումը համեմատաբար անձեռնուռ է:

Միջին բերքը 1926 թ.ին հաստատուում է 48 փթի մէկ դեքտարինի վրա: Բերքի այդ աստիճանը չի բա-

ւարարում հացի սեփական կարիքը և չի տալիս հացի պաշարի նւագազոյն քանակը, որ պիտի լինէր 46 միլիփուլթ, այսինքն՝ մարդագլխի 6,3 փուլթ, 2 ամուսն համար: Իսկ պատերազմից առաջ հացի պաշարը, միջին հաշուով, հւաստարում էր 3-4 ամսական, իսկ Միբիրում նոյն իսկ տարեկան չափի: Հետեւեալաբար, գիւղատնտեսական կուտակումը աստիճանաբար պակասում է, մինչ բնակչութեան աճումը աւելանում է (քաղաքներում 3.5 — 4%) և ծայր աստիճանի ուժեղացումը արտածման անհրաժեշտ լարումը:

Յայտնի գիւղատնտեսագէտ Ն. Օդանովսկին այսպիսի եզրակացութեան է յանգում արդի գիւղատնտեսութեան վիճակի մասին. «Արիւսայտնի է, որ ներկայումս մենք չունենք բուսականաբար հացահատիկ ո՛չ միայն լայն արտածման, այլ և ցածր ու միջին բերքի տարիներին ընթացքին երկրի ներքին կարիքը լրովին բաւարարելու համար... Միջին սովորական բերքը կը կշտացնէ ողջ ազգայնականութիւնը և կը տայ որոշ աւելցուցիկ արտածման համար, որով կարելի կը լինի ներածել մեքենաներ, մինչդեռ այժմս մեր սեփական հացը չի բաւականացնում ոչ միայն սովորական արտածման, այլ և բնակչութիւնը կերակրելուն»:

Արդ՝ որոնք են այն պատճառները, որոնք դանդաղեցնում են արտադրութեան և տնտեսական կուտակման աճումը: Չնայած արտաքին տարբեր նշանների՝ նրանք բոլորն էլ ունեն միևնոյն սկիզբը, որ բխում է ընդհանուր քաղաքատնտեսական հիւանդութիւնից — լծկանի, մեքենաների, պարարտացման նիւթերի, առձեռն նիւթական միջոցների և տնտեսական հնարաւորութիւնների պակասը:

Ներկայումս լծկան ձիերի թիւը Պորտուգալիայի տնտեսական սահմաններում կազմում է 1916 թւի 76%: Հացաբեր շրջաններում 67%, Հիւսիսային Կովկասում 58%, Կազակտանում 60% և այլն*): Լծկան անասունի մի միակորը 1926 թւին մշակում էր 4.41 դեմ. 1913 թւի 3.58 դեմտասփի դիմաց:

Լծկան անասունների ծայր աստիճանի բեռնաւորումն առանձնապէս զգացում է թոյլ զարգացած տնտեսութեան շրջաններում, ուր բացակայում են երկրագործական մեքենաներ: Իսկ որովհետև Ռուսաստանի երկրագործական հողի աճազին մասը ունի թոյլ տնտեսութիւն, պարզ է, որ մշակելի հողի մեծ մասն էլ չի մշակում պէտքերն պէս: Մի դեմտասփի հողի մշակութեան համար գործածուող մեքենաների արժէքը, միջին հաշուով, 1926 թւին հւասար էր 7 ուսուրի 80 կոպէկի (չերվոնեց), մինչ 1913-ին 9ւ. 10 կոպ. էր (ոսկի): Երկրագործական մեքենաների քանակը կրճատուել է աւելի քան 20%: Ամենից աւելի զգացում է հաւաքող ու կալտող մեքենաների պակասը:

Այժմ առանձնապէս առաջ է քաշում տրակտորը, որի քանակը 1926-ին Հասնում էր 23,000-ի: Բայց ինչդիրն այն է, որ տրակտորով մշակում են միայն կլորացած հողային տարածութիւնները կամ խոշոր պետական սովխոզները, իսկ գիւղացիական առանձնացած տնտեսութիւնների մշակութիւնը տրակտորով ձեռնտու չէ:

Միև կողմից տրակտորների ներածումը դրամական միջոցների բացակայութեան պատճառով (արտածելիք հացի պակասի հետեւանքով) 1926-27 թւին

խիտ կրճատուել է, իսկ սեփական տրակտորաշինութիւնը աննշան է ու թանգ: Ստեղծում է տրակտորական կախարդական մի շրջան (տրակտոր չկայ) հաց չկայ, հաց չկայ՝ տրակտոր չկայ), որից դուրս գալիս հագու թէ յաջողուի:

Հանքային պարարտանիւթի ինչդրում էլ բար աւելի լաւ չէ: Ներկայումս Պորտուգալիայի տնտեսութեան մէջ գործածուում է 7-8 միլիոն փուլթ հանքային պարարտանիւթ, այն էլ միայն ճակնդեղի համար: Պատերազմից առաջ գործածուում էր 14-15 միլիոն փուլթ: Հարիւր միլիոններով և մատչելի գներով պարարտանիւթ է հարկաւոր, որպէսզի կարելի լինի յառաջիկայ ասանամակի ընթացումը բարձրացնել բերքը: Իսկ որովհետև պարարտանիւթի սեփական գործարաններ չկան, լայն-լայն ծրագրներ կազմելը դառնում է միանգամայն անտեղի:

Ամէն տեսակ մշակութիւնների ցանքի ընդհանուր տարածութիւնը 1926 թւին հասաւ 1913 թւի տարածութեան 97%-ին: Գլխաւոր գիւղատնտեսական մշակութիւնների տեսակէտից բաժանուում է այսպէս. հացահատիկներ՝ 93%, տեխնիկական բոյսեր՝ 124%: Բայց այդ մշակութիւնների շուկայի շրջանառութեան տոկոսը 1913-ի համեմատութեամբ չափազանց պակասեց. այսպէս՝

Գաղաքներում հւաստարում էր	91,2%-ի,
խոշոր արդիւնաբերութեան մէջ՝	79,7%-ի,
արտածութեան մէջ՝ միայն	30,6%-ի:

Սրանից երեւում է, որ արտածութիւնը չի հասել նախադատերագմական վիճակի նոյն իսկ մէկ երրորդին:

Գիւղատնտեսութեան բնաշրջման վերականգման թափը ընթանում է գիւղացիների սեփական սպառումի գոհացման ճանապարհով. գլխաւորապէս արդիւնաբերական ապրանքների գին գիւղատնտեսական շուկայի վրա արած ազդեցութեան շնորհիւ, որով արդիւնաբերական ապրանքների գինը գիւղատնտեսական արտադրութիւնների գին հետ համեմատուում է այնպէս, ինչպէս 2-ը 1-ի, այլ և այն պատճառով, որ պետութիւնը գիւղատնտեսական միջոցները գնում է ավելի, իսկ պետական գործարանների ապրանքները ծախում է թանգ գներով, որից առաջ է գալիս չարաստիկ «միբատը»:

Մանր տնտեսութիւնների քանակը 1913-ի 18 և 1/2 միլիոնից 1926-7-ին հասել է 25 միլիոնի, այսինքն՝ աճել է զրեթէ 30%-ով, մինչ բնակչութիւնը աճել է 6%-ով: Բնակչութեան աճումը, գլխաւորապէս, տեղի է ունենում զարգացած տնտեսութիւն ունեցող շրջաններում, ուր հացահատիկի մշակութիւնը կրում է ստանկայպէս սպառողական բնոյթ: Այս վայրերի մէջ են մտնում Հիւսիս-Արեւմտեան, Մոսկուայի ու Արեւմտեան շրջանները: Արտադրող չեքոի զարգացած տնտեսութիւն ունեցող շրջանների մէջ են մտնում՝ կենտրոնական-Սևահողային շրջանը, միջին Արլայի, Ուկրայնայի, ամբողջ անտառա-դաշտային տարածութիւնը Նեքոնով, Օդեսայով ու Նիրնով: Գիւղական բնակչութեան, հացահատիկների մշակութեան և եղջիւրաւոր անասունների աճման աստիճանը, լատ շրջանների կարող է պատկերացել հետեւեալ աղիւսակով.

Շրջաններ	Գինք.		Հացահատ.		Եղջիւր. անաս.	
	բնակչութիւն	միլիոն	մշակութիւն	քանակը	միլիոն	քանակը
1913թ.	1926թ.	1913—1926	1913—1926	1913—1926	1913—1926	1913—1926
Զարգաց. անասն.	67	72	40,1	39,9	12,4	11,1
Քոյլ տեսես.	46	47,9	55,1	42,2	15,9	11,2

Սրանից կարելի է անկէ հետեւել կորակացութիւնները. դիւղական բնակչութիւնը աւելացել է ընդհանրապէս, բայց վիթաւորապէս դարգացած տնտեսութեան շրջաններում (սպառող չէրտի), իսկ հացահատիկների ցանքերը և եղջիւրաւոր անասունների թիւը, ընդհակառակը, պակասել է ընդհանրապէս և դիւթաւորապէս թոյլ տնտեսութեան շրջաններում, այսինքն՝ դիւղատնտեսական տարածութեան մեծ մասում:

1901 թւից սկսած մինչև 1913 թիւը ցանաւ հողի տարեկան միջին աճումը եղել է 1,37 միլ. դեսետին՝ տալով այդ ժամանակաշրջանում 17,7% աճում (1901 թւին ցանքը հաւասար էր 76,1 միլ. դեսետինի, իսկ 1913-ին՝ 89,6 միլ. դես.): Պատերազմից առաջ աճում էր դիւղատնտեսական արտադրողների թիւը, իսկ այժմ, ընդհակառակը, աւելանում է սպառողների քանակը: Ահա հիմնական պատճառները այն բանի, որ երկրագործական մթերքների ներքին սպառումը բարձրանում է, իսկ արտածումը՝ ընկնում:

Պէտք է նկատել, որ նախապատերազմական ժամանակներում ոչ թէ արտածումը դնում էր դուռընթաց ցանքի աճման, այլ ազդում էր ցանուղ տարածութիւնների լայնացման վրա, այսինքն՝ ցանքի տարածութիւններն ըստ մշակածքի տեսակի ընդարձակում էին համաշխարհային շուկայի պահանջի համեմատութեամբ: Այլ է դրութիւնը այժմ: Ռուսաստանը չի կարողանում յարմարել համաշխարհային շուկայի պահանջներին, չի կարողանում նրա ազդեցութեան շրջանակի մէջ մտցնել իր դիւղատնտեսական արտադրութիւնը, որ վերջնականապէս ընկել է կախման մէջ սպառողական ներքին-պետեան տաղանայներից: Մինչ, օրինակ համար, արտաքին շուկայում աճում է պահանջը լոբիայի բոյսերի, մենք աւելացնում ենք հացահատիկների մշակութիւնը, որովհետեւ աճում է հացի ներքին սպառումը: Մինչ աւելանում է հացահատիկների պահանջը, մենք աւելացնում ենք տեխնիկական բոյսերի մշակութիւնը, որովհետեւ մեր արդիւնաբերութիւնը հում նիւթ է պահանջում: Նոյնը նկատում է և առանձին մշակածքների վրա. օրինակ, համաշխարհային շուկայում ուղի է պահանջում, մենք սիսեռ ենք ցանում, աւելանում է սիսեռի պահանջը, մենք լոբի ենք ցանում և այլն: Սրանից երեւում է, որ նախապատերազմական տնտեսութեան դարգացման մէջ կար ինչ որ տարերային օրինական յաջողականութիւն, որպիսին այժմ դրութիւն չունի: Պատերազմն ու յեղափոխութիւնը այդ ամենը խախտեցին և պետական տնտեսութիւնը մտանցին քաօսի:

Արտածութեան սկսումով ընկնում է և դիւղատնտեսական մթերքների տեսակարար կշիռը: Նախաձեռնող ողու և կատարելագործման վրա ահազին պղծեցութիւն անող արտաքին միջնորդի բացակայութիւնը չափազանց պակասացրել է դիւղատնտեսական արտադրութիւնը, հասցրել նրան ներքին սպառման նապագոյն չափին:

Խորհրդ. Միութեան դիւղատնտեսութեան արդի վիճակից պարզ հետեւում է այսպիսի անհնթեթ մի դրութիւն. ինչքան լայն է զարգանում ցանքի տարածութիւնը, այնքան տարէջ տարի պակասում է հողի բերրութիւնը, բերքի քանակը, որովհետեւ աւելի և աւելի նաւորում են հողի կենսաբար տարրերը: Անասնաբուծութեան մէջ նկատում է հետեւեալը. շնայած որ կովերի թիւը աւելի է, քան պատերազմից առաջ, քաղաքները ապրում են իւրի և կաթնային այլ մթերքների տաքնայ, ինչպէս նաեւ մսի ու բուրդի նեղութիւն: Արդիւնաբերութիւնն ուղղակի տառապում է ամէն տեսակ բորի պակասից:

Այդ աւելի ևս մեծ չափով զգացում է տեխնիկական մշակածքների վերաբերմամբ: Մենք դիտենք արդէն, որ տեխնիկական բոյսերի ցանքի տարածութիւնը դերագանցում է նախապատերազմական քանակը, իսկ երկրի արդիւնաբերական դիւղատնտեսական նիւթերի պահանջը, 1913 թւի համեմատութեամբ (7,668 հազար փութ և 3,5 միլիոն փութ արտածում) իջել է 6,436 հազար փթի: Բայց և այնպէս, կանոնեցած է վշի, արեւածաղիկ և ուրիշ իւղաբեր բոյսերի արտածումը, որովհետեւ սեփական արդիւնաբերութիւնն էլ զգում է նրանց պակասը: Չի բաւականացնում նաեւ դետնախրձորը այլոյի արդիւնաբերութեան համար:

Տեխնիկական բոյսերի բերքը 1926-7թ. 1913-ի համեմատութեամբ հետեւեալ տոկոսային աղիւսակն է ներկայացնում ըստ Ռուսաստանի.

Վուշը	84%
Կանիփը	95%
Արեւածաղիկը	89%
Բամբակը	74%
Շաքարի ճակնդեղը	70%

Հետեւաբար, տեխնիկական բոյսերի բոլոր գլխաւոր տեսակների բերքի մէջ տեսնում ենք պակասում, բայց, մասաւանդ, բամբակի ու շաքարի ճակնդեղի: Այսինքն, նոյն երեսօնը, ինչ որ հացահատիկային ու անասնաբուծական տնտեսութիւնների մէջ: Հացահատիկի և անասնաբուծութեան տնտեսութիւնները սերտ կապերով կապւած են իրար հետ, մէկը լրացնում է միւսին: Եթէ հողը քիչ կեր է արտադրում, կը պակասի և կաթի արտադրութիւնը, կը պակասի եւ նրա տեսակարար քանակն արդիւնաբերութիւնը, կը վատանայ և աղբը, որով կը վատանայ հողի պարարացումը: Այս պարզ ու տարրական բան է չարթէ երկար կանգ առնել նրա վրա: Որով բնական սպառումի աճումը և արտածման անկումը չի բխում միայն դիւղացիների շար կամքից՝ հաց ու կաթնեղէն ծարսել չուզելուց: Ո՛չ: Այդ նշանակում է, որ հողը և այժմային անասունները, պարարտանիւթի և կերի պակասութեան պատճառով, չեն կարողանում տալ դիւղացիներին բաւարար քանակութեամբ մթերք:

Ունենալով 90 միլ. դեսետին ցանք և 25,7 միլ. քաղաքային բնակիչ, այժմայն, անգամ լաւ բերքի դէպքում, կարելի չէ 200 միլ. փթից աւելի արտածման հաց տալ:

Շատերը, մասնաւոր գաղութային քաղաքագէտները, կարծում են, որ բաւական է առաջ բերել Ռուսաստանում քաղաքական յեղաշրջում, որպէսզի սկսւի երկրի արտադրական ուժերի տարերային մի աճում և

գիւղատնտեսութիւնը վերականգնի: Այդ բնաւ ճիշտ չէ: Անկասկած, ներկայ կոմունիստական տնտեսական քաղաքականութիւնը մեծ խոչընդոտ է երկրի զարգացման համար, բայց դրանից դատ, ո՛չ պահանջ մեծ արգելք է հանդիսանում և մեր տեխնիկայի արտակարգ յետամնացութիւնը, մասնաւոր գիւղատնտեսութեան մէջ ալ և Ռուսաստանի արդիւնաբերութեան անսահման աղքատութիւնը ազգային դրամադրոյով:

Ամէն մի կառավարութիւնից կը պահանջուի հրաժարել ուղղակի միջամտութիւնից գիւղատնտեսական նախաձեռնող ձեռներէջութեան մէջ՝ ազատ թողնելով ընկերութիւնները, համայնքներն ու մասնաւոր անձերը՝ աջակցելով նրանց բոլոր միջոցներով: Վերջ տալ Եւրոպական Ռուսաստանի զարգացած տնտեսութիւնների մանրացման և ուժեղացնել Սիբիրի ազատ հողերի բնակեցումը: Այլ և բարձրացնել ազգային քիմիական

արդիւնաբերութիւնը՝ առաւելագոյն աստիճանի հասցնելով պարարտանիւթի պատրաստութիւնը, մեծացնել քանակը երկաթուղիների, որոնք միացնում են հեռաւոր հացահատիկային շրջանները արտամասն դիտար կէտերի հետ, ուժեղացնել արդիւնաբերութեան զարգացման թափը՝ վերացնելու համար անհամաչափութիւնը գների միջու, փակել «միկրատը»:

Այս ամենը պահանջում է հսկայական միջոցներ, որ Ռուսաստանը այսօր չունի: Վարկեր են հարկաւորու չկան: Ազատ դրամագլուխ ունեցող երկրները չեն վստահում ներկայ կառավարութեան:

Եւ իբրեւ հետեանք այս ամենի ստեղծւել է անասն կախարդական շրջանը, որի մէջ ընկել է ժամանակակից գիւղատնտեսական արդիւնաբերութիւնը:

Ս. ՎԵՐԵՇՅԱԿ

Թ ՈՒՐ Ք Ի ՈՅ Շ ՈՒՐ Զ

Փետրուարի թիւով կարգ մը տեղեկութիւններ տւած էինք թրքախօսութեան բռնադատման մասին:

Շարժումը կը ծալուի անէկ մ վեր: Երեւոյթները փրկելով հանդերձ, կառավարութիւնը ազատ սպարէզ տւած է թուրք ուսանողութեան, առհասարակ երիտասարդութեան, և «օջախ»-ներուն: Արդէն իսկ, պատերազմ դրա, նաւերու և հանրակառքերու մէջ, կերան մեծատառ ազգարարութիւններ.

— «Հայրենակից, թուրքերէն խօսէ»:
Այս ազգարարութիւնները հպուի երեւցած, գրգռել ախարկներն ալ ծայր տւին:

Յաջորդ օրն իսկ, թուրք թերթերը սկսան պատմել թէ ոչ-թուրքերը... պատեր են ազգարարութիւնները. «Ձի բաւեր որ այդ ազգերուն սակը նստելով, դիտմամբ արարերէն, արչաներէն, պոշնաքերէն, վրացերէն, հայերէն, հրեերէն և յունարէն կ'ի խօսին, այդ յանդուզն հարենակիցները խօսքէն դուրսի անցած են»:

Եւ, շարունակելով քսութիւնը, առանց այլ և այլի կը յայտարարեն թէ գալտնի միութիւն մը կազմուած է, թրքախօսութեան ձեռնարկին վէճ հակազդելու համար:

Միտքերը այսպէս պտտորել է կիրքերը հրահրել, յետոյ, կիսապաշտօնական ձիւմետրիք ձեռքերը և գէնքերն ալ կը պարտաստէ (20 փետր.):

— «Այս նշանատախտակները պատռողները չեն մտածք թէ իրենց վիճակը ո՛ր պիտի երթայ, երբ ձեռքակալին: Ցանցամոքի վրա բռնած այս կարգի յանուագն մարդիկը պէտք է գիտեանք, որ, երկրին պաշտօնական լեզուին դէմ իրենց ցոյց տւած այս ատելութեամբ պատմական օրէնքին խտրութեան ենթարկելէ գատ, հանրաքեան արյաւր զայոյթիմ ալ ենթակայ պիտի ըլլան: Մեր երկրին մէջ Լիւնչի պատիժ չկայ. սակայն, նշանատախտակները պատռողներուն կը յիշեցնենք թէ երբ ձեռք անցնին, շնորհեով սոխց մը պիտի ուտեն»:

Լրագրական բեմէն այցքանը լսելէ յետոյ, մնացածը կատարեալ մասնագիտութեամբ կրնան վրէժ հանել թուրք ուսանողները, իրաւագիտական կամ բժշկական, և խուժանը, որ շատոնց որս կը փնտռէ:

Երբ լրագիրը սփոց կը պատուիրէ, ոստիկանն անգամ կը հակահայ թէ կրնան որս արիւնչայ գետին փռել, առանց պատիտէ վիճախու: Մենք «գա՛րկ» ըսնեք, դուն սատկեց՛որ»:

Ինչպէս դիտել կուտայինք անցեալ անգամ, թրքախօսութեան այս բռնադատումով նոր սպարէզ կը բացուի լրտեսութեան, կեղեքումի և չարչարանքի համար: Միայն մէկ խօսք — «Ինչո՞ւ թուրքերէն չխօսեցար» — և ուզողը կրնայ ոչ-թուրքի մը օձիքէն բռնել, քթին-բերին իջնցնել, կամ քաշքշելով ոստիկանին յանձնել: Կա՛մ սպառնալ և դրամ չորթնել:

Ինչ կը վերաբերի ազգարարութիւնները պատերազմ, ձեռնարկին թուրքերը այդ ճիւղին մէջ ալ վարպետ են: Ինչպէս ընդհանուր արտադրի օրերուն, կամ սովորական թշնամութեան մը համար, առնու գէնք, նոյն իսկ ումբ գնել կուտային, կամ կը բռնադատեն հայ գիւղացին որ դրամ տայ, հրացան մը գնէ իրենցմէ և յետոյ իրենց յանձնէ իբրև իր ունեցած գէնքը, այնպէս ալ թուրք մասնաւոր գործակալներ կրնան ամէն սր ազգարարութիւն պատուել քրիստոնեայ թաղերու մէջ, Վստիկանի նաւերուն կամ Բեքաջի պողոտաներուն վրա, և առիթներ ստեղծել ծեծի ու շանթաժի:

Այլպէս, ոչ-թուրքերու ներկայ ամբած, անարեկ վիճակին մէջ, ո՞ր ձեռքը պիտի համարձակէր աղբի պատուել և աւելորդ փորձանք բանալ:

«Շատ է աւուր չար իր»:

Ոչ-թուրք մամուլը, արդէն, առանց հրահրել սպասելու, սկսեց է յորդոր կարգալ: Հայերն թերթերու մէջ հետզհետէ կը փայլի շարաւուք խորագիրը. «Հայրենակից, թուրքերէն խօսէ»: Թրքախօսութեան կարգադիր յանձնախումբը որոշած է գործակցութեան

հրահրել ոչ միայն փոքրամասնութեանց մամուլը, այլ և հոգևոր պետերը և «երեւելինըրը» Մ՛՛՛ վրտի համարձակի մերժել այսքան « Հայրենասիրական » պարտականութիւն մը...

Պատական շարժաթիւրթ մը՝ «Արծիւ», որ նոր սկսաւ հրատարակել, արդէն իսկ թելադրութիւններ կընէ խմբագրականով մը (13 փետր)։ Թրքախօսութիւնը տարածելու համար, կտուաշարկէ 1. Ոյժ տալ արեւելեան երաժշտութեան որմէ «մեծ ախոբժ կը գլան Եւրոպա գտնուող մեր Հայրենակիցներն ալ և Հայրենաբաղձութիւնը կը բռնէ իրենց սիրտերուն մէջ»։ 2. Թրքական դրականութեանն կտորներ թարգմանել փոքրամասնութեանց լեզուներուն, քանի որ... Թարգմանութիւնը կարգադրող բնազիր ալ կը փնտռէ։ 3. Ոչ-թուրքերու լեզուներով ալ տպագրել «Հայրենակից», թուրքերէն խօսէ՞՞ ազգարարութիւնները։

Կամաց-կամաց կընան պատճառաբանել թէ՛ թրքախօսութիւնը մեծապէս կը յաւալիմէ, եթէ դադարման դատապարտութեւն փոքրամասնութեանց բոլոր թերթերը և անոնց լեզուներու դասականութիւնը՝ դեպքոցներու մէջ թուրքերէնով տարւի։ Կամ, եթէ մէկ անգամէն փակւին բոլոր ոչ-թուրք դպրոցները։

Այս վերջինը — փոքրամասնութեանց դպրոցներու փակումը, նշանակաւ մըն է արդէն, Պոլսոյ համար, իսկ իրականութեան մը՝ Անտառուի մէջ։

ՎՅրջերս պոլսական թերթ մը կը հրատարակէր Անտառու մնացած Հայկական բեկորներու վիճակագրական պատկերը։ Այդ ցուցակին համամասն, Տիգրանակերտի մէջ մնացած է 2355 հայ, ձեզերէ՛ 1750, Նարեքը՛ 1935, Արարկիր՛ 1220, Մալաթիա՛ 1730, Սեբաստիա՛ 5495, Տիվրիկ՛ 650, Կեսարիա՛ 4200, Թոկատ՛ 1930, Ամասիա՛ 1330, Մամասն՛ 1480, Սեւ ծովու եղբը՛ 1520, Գասաթէ՛ մուխի՛ 3200, Էնկիւրի՛ 500 դուամը՛ 29, 293 հոգի։

Այս ցիւցակն մնացողներուն մէջ, միայն Կեսարիան է, որ իրաւունք ստացեր է Հայկական դպրոց մը պահելու։

«Ոչ եկեղեցի ունին, ոչ դպրոց։ Ուսումը՝ արօրին մասն է, իսկ ազօթատեղին ոսկեզայն ուղարի հասկերու ղեկերը»։

Իսկ Պոլսոյ մէջ, դպրոցները բաց թողնելով հանդերձ, ամէն օր կը հասկցնեն, հրատարակաւ կազդարարեն թէ ճշմարիտ Հայրենասիրութեան և թրքութեան համապատասխան չէ առեւտրի կրթութեան ունենալ։ Վերջինը՝ դեռ փետր. 9-ին էր, Պոլսոյ վազրք քաղաքին բերնով, և յոյներուն ուղղած (Աղ-ընկ Բիգի կրսմ, հարս դուկ իմացիր)։

— «Եթէ օրինակաւ և ինքզանք հայրենակիցներ էք, ինչո՞ւ յոյն նպատակներ կը հետապնդէք և զայս վարժարաններ կը բանաք։ Ձեր տղաները բրբեկան վարժարանները դիպեցէք և ուզեցէք, որ ամենք իրկրին կրթութիւնը առնին»։

Այս համաթրքական շարժման այլապէս ոյժ տալու համար, ջանի մը շարժի առաջ կազմեցաւ կրթական միութիւն մը (Մէպիթի ձեմիլէթի), կրթական նախարարին նախապահութեան տակ։

Նոր միութիւնը մասնաճիւղեր պիտի ունենայ երկրին ամէն կողմը։ Պիտի բանայ շարք մը նոր դպրոցներ, Պոլսոյ մէջ։ Կառավարութիւնը պիտի արտադրէ ոչ միայն դրամական լույս մընչոցներ, այլ և

բաժին պիտի հանէ «լեզու» դոյրերու աւարէն։ Իսկ պատմական իվզաֆը, որ իրքին «լեզու» դոյրերու արշակաւան մըն է, սուլթանական օրէնն իվեր, իր դպրոցական եկամուտները պիտի յատկացնէ նոր միութեան։ Վերջապէս, թրքացման նոր շօխալսը պիտի վայելէ հասոյթի ուրէջ միջոցներ, ճիշտ ինչպէս, ժամանակին, «Միւսուֆաան Միլլէյէ»-ն (Ազգ. պաշտպանութիւն) և «Տօնամա Տէմիլէթի»-ն (Նաւատորմի Միութիւն), իսկ այսօր՝ Օլանաւալին ընկերութիւնը։

Այս բոլոր կազմակերպութիւնները ձեռք ձեռք, պետական արշակութեամբ և հանրային հարստութեանց կողոպուտով, սահմանւած են «բարձրացնելու» թրքական մշակոյթը, ոչ-թուրք ժողովուրդներու դամբարաններուն վրա։

Այս սողերը գրւած ատեն, Գերազոյն Ատենը արձակած էր իր վճիռը, ծովային նախորդ գործավար Իհսան պէյի և ընկերներու մասին։

Բայց կարեւորը վճիռը չէ, այլ այն պատկերը, որ պարզեցաւ այս դատավարութեան ընթացքին, երևան հանելով «նոր» թուրքերի բարձրագոյն պաշտօնէութեան, Անկախութեան պատերազմի հերոսներուն իսկական դիմապիւրծ։ Միլիոններու զոհոմա, որուն բոլորովը, շարձակաբար պէս կանգնաւ ու կանգնին գործավարներ, երեսպիտաններ, քաղաքային և դիւնուրական բարձր պաշտօնատարներ։ Հանգոյց մը, որուն ծայրերը կը հասնին մինչև էնկիւրիի բարձրագոյն դուռները, հանրապետութեան և վարչապետութեան սեղանները։ Թէև և, Մուստաֆա Գէմալը անտասան կեքեւայ այսօր, իսկ Լամէթը դատախազ է, և վկայ՝ իր ընկերով դէմ։

Գաղտնիք չէ, որ դործը ունի նաև քաղաքական հանդամանք, իսկ օրւան վարիչները կը ճզնին թաղել այդ ծալը։ Գլխաւոր ամբաստանաւար, Իհսան պէյ, քանի որ անգամ ակնարկներ բրաւ Լամէթի փաշայի «թշնամութեան» մասին, իբրև պատասխան իրեն վերադրած սպանական նամակին էր։ Կաշկանդւած ըլլալով, անշուշտ, չի կրնար աւելի բացել։ Կամ թերեւ ըրած է յայտնութիւններ, որոնք հրապարակ չեն հանւած։ Կարծես թէ իօսք մէկ ըրած ըլլային, թուրքերէն թերթերը շարունակ Իհսան պէյի լացը կը նկարագրէին...

Ինչպէս կըրնայ վկայութիւններէն, բոլոր ամբաստանեալները խոշոր պատասանը ստացած են ծիօնն աւանդներու ապարանի դործէն, իբրև միջնորդէք։ Իհսան պէյի բաժինը կը հասնէ 71,000 օսմ. ոսկի։

Հետաքրքրական է այս մալուրի կեանքը։ 1908-ին Պոլիս կանցնի Էտիքնէն։ Պաշտանայ պատերազմին կը ծառայէ իբրև հազարապետ։ Յետոյ առևտուրով կը դառնի Պոլսոյ մէջ։ Իանակիցներու գրաման ատեն, ինկիւրի կը փարչի և կը մասնակից անկախութեան պատերազմին։ Միևնոյն ատեն, առիթ չի փախցնել կրտսի տացնելու համար, և իր կողմ անուշով կարձանապէ կալւածները։ Դատարանին մէջ, երբ կը հարցնէին թէ ի՞նչպէս գրած կը ստանար իբրև ծովային դործավար, Իհսան պէյ պատասխանեց.

— «Քսան հազար ոսկին աւելի հասալք աւելի։ Պաշտօնապէս գործավարութեան համար կը ստանայի ամիսը 400, երեսպիտանութեան՝ 300, շիշ գրամատուէն՝ 300, իսկ աւրիշ տեղէ մը, որաւ անմեք ցաղաղնի

միայն կրնամ յայտնել, 400: Տարեվերջին ալ շահաբա-
ծին կը ստանայի:

Դատավարութիւնը ջանի կը յառաջանայ, այնքան
զայթակցութիւններ երևան կելլեն: Փետր. 22-ին
պարզեցաւ 100,000 ոսկիի նոր խնդիր մը, որուն ջըն-
նութեան համար առանձին մասնախումբ մը կազմեա-
ծ է: Եւ ամէն նոր յայտնութեան հետ, նոր դէմքեր
կանչնին սա ցանկը, և — միշտ բարձր պաշտօնատար-
ներ:

«Տնվուդի» նորոգութեան այս հարցէն անկատ, կը
յուզուի առեւտրական գործավարութեան արևած
500,000 ոսկիի խնդիր մը: Այս վարկը բացւած էր հրա-
պարակէն ցորեն և ալիւր դեներու համար, բայց այժմ
կը հասկցուի, որ դումարը ամբողջութեամբ իր նպա-
տակին չէ գործածուած: Աւարի նոր պատմութիւն մը,
որուն մէջ ծայրը կը հասնի դարձեալ ձէնանի պէյի:

Դեռ երկար է շարքը: Իբրև «ճծիր-արկած», յի-
շենք Մոսկուայի նախկին դեսպան Կալեպ Քէմալի պէյի
դէմ բացւած դատը, թուրք վաճառականի մը կողմէ:
Այս վերջինը, Սապրի խան, իր դրամները բու՛ւււււււււււ-
րէն փրկելու համար, գեսպանին կը յանձնէ որպէսզի
Պոլիս փոխարդէ: Դեսպանը կընդունի, և դումարը,
60,000 ոսկի, կը յանձնէ Տէօյէ Օրբէնու պանքի: Ատեն
մը վերջը, վաճառականին ստորագրութիւնը կեղծելով,
կը դանձ զրամբ: Գէթ այս է պատմութիւնը:

Ուրիշ «երևելի» մը, Կարսի երեսփոխան և Ռալթ
(քէմալական) կուսակցութեան Իզմիրի շրջանին ջննիչ
Սատրէստին պէյ ամբաստանուած է թէ 160,000 ոսկիի
սպրանք իւրացուցած է: Պէյը պաշտօնանկ եղած է

ջննիչի պաշտօնէն, իբրև ծառնիչ ամբաստանած ըլ-
լարով Մաղնիսայի կուսակալը, իսկ ամբաստանութիւնը
կը ջննուի, իր կարգին:

Կա՛յ, վերջապէս, Ազգ. Մեծ Ժողովի անդուկէն
կատարած կողոպուտի դատը, ուր դարձեալ պէյեր,
փաշաներ և՛ մանուանդ Լեպափոխանը կը փայլին:
Կը ջննուի 20,000 ոսկիի բաց մը, յետոյ 1600 ոսկիի
զեղծում մը, արձանագրութեանց կեղծարարութեամբ:

Մեղք անոնց որ տակաւին կը կասկածեն թուրքերոյ
յուսալքիմութեան վրա...

Արտասահմանէն գաղթականներ բերելու և թափուր
հողերու վրա տեղաւորելու փայլուն ծրագիր մը ունէր
քէմալական կուսակցութիւնը: Մէջ միջիտն ոսկի ալ
վարկ էր քէմալական: Առ նւազն 50,000 թուրքեր պիտի
փոխադրէին Կովկասն, հայկական աւերակները
ծաղկեցնելու համար: Որոշուած էր, նաև, տուներ շինել
գաղթականներու համար, միշտ «Արեւելեան Նա-
հանգներուն» մէջ:

Արզիւնքը: — Գիտնո՞ք որ մաս մը թուրքեր, ճա-
բանատ կամ պայմանագրութեան հետևանքով, գաղ-
թեցին Սուրիայէն և Կիպրոսէն: Իսկ մնացածին հա-
մար, — լսենք տեղաւորման ընդհանուր տեսքէն Հաճի
Մէհմէտ պէյը (Միլլիէթէն քաղերով):

— «Այս տարի պետական միջոցներով այրասահ-
մանէն գաղթական բերելու մասին որևէ որոշում չկայ:
Անցած տարի որոշուած էր Ռաուիայէն 4-500,000 թուր-
քեր բերել մեր երկիրը և տեղադրել: Սակայն, ետէն
կարելի չեղաւ զանոնք բերել, և այդ խնդիրն ալ
այդպէս մնաց»:

Բ ո յ ո թ ա զ զ Ե Ր Ի ա Շ Խ ա տ ա լ ո Ր Ն Ե Ր Ի Ն *

Համաշխարհային պատերազմը, որ իր ճակատա-
դրական հետևանքներով ու ծանրութեան կենտրոնով
չընցեց աշխատաւոր մարդկութեան ուսերին, բուրժու-
ական քաղաքակրթութեան ճգնաժամն էր, մի քաղա-
քակրթութիւն, որ դասակարգերն ու ազգերը բաժանել
էր տիրող ու ստորագաս հաստածներէ՛ իրենց ազգայ-
նական նւաճողականութեան թունաւոր ցաւազարու-
թեամբ:

Արեւելեան Եւրոպայի մեծ յեղափոխութեան ջլա-
ձգութիւնները, որոնք անմիջապէս արձագանք դտան
կենտրոնական Եւրոպայի պարուած երկրներում և
ապա Արևելքի բովանդակ ահագին աշխարհում, առա-
ջին անգամ մինչև հիմը ցնցեցին ազգային ու դասա-
կարգային այդ հասարակարգը:

*) Այս կոչը հրատարակուած է նոր Արեւելի Ընկեր-
վարական Լիգայի նախաձեռնող խմբակի կողմից: Այդ
Լիգան կազմուած է Պրագայում՝ անհատական մասնակ-
ցութեամբ Ռուս սոց.—յեղափոխական, Ռեկրայնական
սոց.—յեղափոխական, Բելուսական սոց.—յեղափոխա-
կան, Բելուսական սոց.—փեդերալիստ, Հ. Յ. Գաշ-
նակցութեան մի շարք անդամներէ: Լիգայի զգին են
հանդիսանում Վ. Չերնովն ու Մ. Շապովալը: Ռուս
սոց.—յեղափոխականներէ Փարիզի քեւը բացասական

Սակայն, ո՛չ պատերազմը, ո՛չ հաշտութեան դա-
նադրերը, ո՛չ յետպատերազմեան յեղափոխական Լը-
կաշարժները՝ չվերացրին տաղանապի խորունկ պատ-
ճառները: Ազգերի Լիգայի՝ մարդկութեան իրաւական
կազմակերպութեան գեղեցիկ ճակատի յետևը, վեր-
սայլէ հաշտութիւնը ջողարկեց յաղթական Անտանտի
փաստական գերիշխանութիւնը աշխարհի վրա: Իսկ իր
պատմական ուղիները շեղած Արեւելեան Եւրոպայի
յեղափոխութիւնը՝ այնտեղ ամբապոկեց բու՛ււււււււււ-
սակցութեան մենատիրութեան ուժիմը՝ ներքնապէս
նոյնքան բռնապետական, որքան արտաքնապէս յար-
ձակող ու նւաճողական:

Սակաւապետական այլատերութեան, դաղտնի ու
դաւաղիւր խաղերով և Ազգերի Լիգայի կրաւորակա-
նութեամբ՝ բուրժուական աշխարհի նոր գերիշխաննե-
րը խստորէն հեղեցեցին՝ համաշխարհային սպանդանո-
ցում տառապած ու արբնոտած մարդկութեան՝ ամէն
տեսակի պատերազմներն ընդմիջող վերացնելու,
մարդկութիւնը ռազմապաշտութեան ծանր բեռից ազա-

դիրք է բռնել նրա հանդէպ: Մեք Լիգան նկատում ենք
իբրև մի փորձ խաղաղ միջոցներով, համաձայնութեան
հռիվ վրա լուծելու ազգային հարցը և որպէս այդպի-
սին համարում ենք դրական երևոյթ:

տելու, միջազգային յարաբերութիւնները ընթացում քմահաճ ուժովը իրաւականով փոխելու երազները:

Ռուս ցարերի Կրեմլի գահի յեղափոխական շրջանի քառանգները նոյնպէս իստութեամբ հեղեցին տառապած աշխատաւորութեան տնչանքները՝ իսկական ազատութեան թագաւորութեան, ընկերվար-աշխատաւորական դեմոկրատիայի և ազատագրած անհատի մասին:

Եւ ինչպէս պատերազմից առաջ, մարդկութիւնը միշտ աւելի ու աւելի խնդրում է նոր վայրիվերումներով յղի հակամարտութիւնների բաղիւնների մէջ՝ այս անգամ դրամապիկ ոսկէ նւաճողականութեան և Կրեմլի կարմիր նւաճողականութեան հետեւանքով:

Կարմիր Կրեմլի նւաճողականութիւնը դաշնակից պետութիւններին հետապնդելու իր տենդադին վազողով՝ շատպում է ապստամբեցնել գաղութային ու կէսգաղութային վիճակուղ գտնուող Ասիայի ու Արիւիկէի ժողովուրդներն ու երկիրները՝ նրանց դրամատիրական մայր-երկրները դէմ, որոնց ներքին կենտրում միատանակ պայթուցիկներ է դնում՝ համաշխարհային բուլշեւիզմի մասնաճիւղերի միջոցով:

Համաշխարհային բուլշեւիզմի ծագմանն ու տարածմանը՝ դրամատիրական նւաճողական աշխարհը պատասխանում է ջրածգործն՝ համաշխարհային Փաշիզմի ծնունդով ու տարածումով:

Իրենց դազողութիւն ստրուկների ազատամբութեան փորձերին դրամատիրական նւաճողական աշխարհը պատասխանում է կամ զինեալ միջամտութեամբ, կամ ճանխարարական օղակումով՝ կամ Ռորհրդային Միութեան դէմ ուղղուած ելեւտական շրջափակումով, կամ վերջինս մտար կարող ազգերի գինական ուժով Միութեանից բաժանելու սատրանքներով:

Բարձրատանջ մարդկութեան պատմական ուղին մշտապէս ընթանում է Սցիլայի ու Ռարիդայի միջուցով՝ դրամապիկ ոսկէ նւաճողականութեան Սցիլայի և Կրեմլի կարմիր նւաճողականութեան Ռարիդայի համաշխարհային բուլշեւիզմի Սցիլայի և տիեզերական Փաշիզմի Ռարիդայի:

Անցնել պատմական լերան քազաթով և շայթաքել երկու կողմերից բացուած խորխորատը. ելք գտնել պատմական փակուղուց դուրս գալու, կանխել նոր համաշխարհային փլուզումը — ահա այն պատմական առեղծածնները, «Աֆիլիքսի նոր խնդիրները», որոնք իրենց լուծումն են պահանջում:

Եւ այս ձեւի լուծման համար՝ անհրաժեշտ է մէկ նոր ուժի կազմակերպութիւնը:

Եւրոպայի արեւմուտում և կենտրոնում՝ ընկերվարութեան ու դեմոկրատիայի օրգանական զարգացումը այժմ, որոշ չափով, հանդիսանում է, որպէս զարդ ուժ, ու հարկադրում է պետութիւններից ամենապահպանողականին անգամ մեղմելու բուրժուազիայի Փաշիտա-նւաճողական թեւի պատենապաշտ սատրանքները: Դանդաղ, բայց հաստատապէս տարրալուծում է՝ մէկ նոր աւելի ընդարձակ միջազգային միջնորդի մէջ համաշխարհային պատերազմում յաղթողների բլուզը, ուր վերջիններս հաւասար իրաւունքներով ներս են մտնում երբեմնի պարտածները: Եւրոպայի տնտեսական կենտրոն վերականգնելու պահանջը մղում է ելեւտական ու տնտեսական սերտ գործակցութեան: Թէեւ բուրժուազիան հակահարա-

ծելով պրոլետարիատի առաջին յարձակումը՝ կարողացաւ համարեա ամհուրեք յետ մղել նրան իր պաշտպանողական դիրքերը և ինքը անցաւ յարձակման՝ յեղափոխութեան նւաճումների դէմ, սակայն, Եւրոպայի դիվաւտը երկներում օր օրի վրա դժուարին է դառնում կառավարելը առանց ընկերվարականների՝ մանաւանդ հակառակ նրանց: Քաղաքական բեմից վայր չեն իջնում ընկերվարական փոքրամասնութեանց կառավարութիւնները, այլ՝ ապագայ ընկերվար մեծամասնութեանց կառավարութիւնները՝ նախակարապետները, որոնք չեն ծնւում միանգամից՝ վերուղէ զգծեր ընթացողով, այլ բեկեալ զգծերի նման՝ ունակցիայի ընդդիմութեամբ ստեղծած դազարներով: Նոր Եւրոպան կը ծնի հիւսնուրթիւններ և մասնակի տազանայների միջից՝ միջազգային ապաքինեած փոխարարութեանների կատարումով: Այս զարգացումը ամբապնդելու և հասուն դարձնելու բանային գտնւում է Արեւելեան Եւրոպայում. առանց Արեւելեան Եւրոպայի միջազգային փոխարարութեանների ամբապնդման ու հաստատման՝ չկայ նաև միջազգային կայուն խաղաղութիւն:

Ինչպէս որ Սարաչեի ամենաաննչան միջնաղէպի առիթով առաջացաւ պատմութեան ընթացքին շտեռնած ամենասոնելի տիեզերական հրդեհը, նոյն ձևով՝ յետպատերազմեան ընդհանուր անկայունութեան, զոն չհաւասարակուած ու չամբապնդուած միջնորդում՝ ամէն բախում Արեւելեան Եւրոպայի ցամաքամտում կարող է վեր ածել ջրապտույտի, որ մէկը միւսի յետեւից իր ծոցը կը քաշի նախ մտաւկայ, ապա հեռաւոր, այնուհետեւ ամենահեռուր հարեւաններին: Սակայն, ո՞վ չդռնէ, որ զէպերի նման ընթացք պիտի ոչնչացնէր մարդկութեան բոլոր այն ջանքերը, որոնք ուղղուած են համաշխարհային պատերազմի ստաջացած վէրքերը բուժելուն, ամենուրեք տարածուող դերեղմանների ու աւերած յուշարձանների միջև՝ համաշխարհային տնտեսական ու քաղաքակրթութունը նոր փայլով վերականգնելուն:

Պատմութիւնը վերոյիշեալ պատճառներով Արեւելեան Եւրոպայի ընկերվարականների վրա առաքելութիւն է դնում, որի նպատակութիւնը շատ աւելի խորն է քան տնային մի չաք խնդիրները, և պատասխանատու է համարում նրանց ոչ միայն իրենց հայրենիքի աշխատաւոր ժողովուրդների, այլև ամբողջ մարդկութեան առջեւ:

Վերոյիշեալ առաքելութիւնը ընկերվարականներից չի պահանջում ո՛չ յուսախարութեան ու պատենապաշտութեան քաղաքականութիւն, ո՛չ հիմնել ապագայ պատերազմների վրա, ո՛չ ապագայ այս ու այն պատերազմի կողմերի օրիննտացիա ունենալ, ո՛չ պատերազմ ստեղծելու անդիտակից պրովոկացիա, ոչ էլ սուտ երկրների զինեալ միջամտութիւն, բացառութեամբ մէկ բանի՝ բուլշեւիկեան ուժովի ոչնչացումի ու հաւել-յարգարի՝ — նրա ստորադաս ժողովուրդների սեփական ջանքերով: Վերջինս անխուսափելի է դարձնում այդ ժողովուրդների ընկերվարական ու նրանց յարող ուժերի միացեալ ճակատ ստեղծելու անհրաժեշտութիւնը:

Ստեղծել այսպիսի միացեալ ճակատ*) — ահա պատմութեան վճռական հրամայականը:

Այդ թելաբրում է Ռորհրդ. Միութեան հողամասի վրա ապրող բազմաթիւ ազգերի ընդհանուր վիճակը:

Որհրհրդային Միութեան անկախ պետութիւնները, որոնք նոյն Միութեան սահմանադրութեան հրահանգներով իրաւագոր են ցանկութեան դէպքում բարբոսի անջնաւարտ, փաստապէս Կօմ. Կուսակցութեան միջոցով շղթայուած են Կենտրոնացած մենատիրութեան երկաթէ օղակներով, Կօմ. Կուսակցութեան՝ որ նոյնչափ կենտրոնացած եղանակով է կառավարուած ու գործում :

Բոլշեւիկեան իշխանութեան կողմից՝ Ուկրայինան, Բելուուսիան և այլն ազգայնացնելու փորձերը ոչ այլ ինչ են, եթէ ոչ դիմակաւորումը այդ իշխանութեան հակաժողովրդական հուսկան, որ խուժանավարօրէն խաղում է ժողովուրդներէ գրազացող ազգային ինքնապետակցութեան հետ, զրգուտւած այն՝ փոխանակ ճանապարհ տայու նրանց անկախ ու դեմոկրատական ինքնորոշման :

Բոլշեւիկեան իշխանութեան յղացած բոլոր ազգական նշանաբաններն ու բանաձևերը՝ ընկերվարական իննարարութիւն, ծրագրուած տնտեսութիւն, ծովու-նիզմ, սրանց աւրեթիք նաեւ «մասնաւորներէ» վրա կատարած ցուցարարական յարձակում, ոչ այլ ինչ են, եթէ ոչ ամբողջով խաղերը պոլիտարիստի դասակարգային զգացումներէ հետ և ջօղադիւրումը նէպեան անուսական ուժիմի, այս իւրայատուկ կուսակցաբիւրոկրատական պետական դրամատիրութեան :

Բոլշեւիկեան իշխանութիւնն այսպիսով ոչ այլ ինչ է, քան բռնութեան մէկ կազմակերպուած դրութիւն ընդդէմ բոլոր ազգերի և առև ժողովրդի. բռնութիւն թէ՛ ազգային, թէ՛ ընկերային իմաստով, որի պատճառով նրա դէմ մղուելիք պայքարը օրդանապէս կէտք է օղակի ազգային իրաւունքների, ընկերային աշխատաւորական իրաւունքների համար մղուած պայքարով :

Այս դիտակցութիւնն էր, որ մղեց ընկերվարական մտքի տարբեր գունաւորութիւնների ներկայացուցիչներին, որոնք պատկանում են Որհրհր. Միութեան մէջ ապրող ու գործող զանազան ազգութիւնների ու կուսակցութեաց, կայմէլ անձնական հիմունքներով նախաձեռնողներին մի խմբակ՝ Արեւելեան Եւրոպայի Լիգան գլուխութեան կողմէլ համար : Լիգան, որի նպատակն էր խաղաղ ելք գտնել ազգային խնդիրը լուծելու, բոլոր ազգերի ընկերվարական ընդհանուր ճակատ կազմելու, բոլշեւիզմը այնպիսի՝ ճանապարհով տարբարումէլու համար, որ նրան յաղորդող՝ ոյժ ոչ միայն ցարական կարգըր վերականգնելու բնոյթ ունեցող, ընկերային-քաղաքական յետաշրլութիւն բերող ոյժ չլինի, այլ և գերծ լինի վերջինիս արդիական ու դիմակաւորուած ձևերն ընդունած բռնապարտիզմից ու Փշաղիզմից :

Յանուն դեռ չարունակուող մեծ յեղափոխութեան նաճումների, մէնք դէմ ենք բոլշեւիկեան այլանդակութիւններին : Մենք դէմ ենք նաեւ հին ուժիմի ամէն տեսակ վերականգնման և կողմնակից ենք Որհրհրդային Միութեան ներկալ կազմի արմատական վերափոխութեան՝ ուսմկավարութեան, ընկերվարութեան և ժողովուրդների ինքնորոշման իրաւունքի սկզբունքների հիման վրա :

Մենք դէմ ենք արտաքին զինւած ուժերի վրա յենուղ օրինտացիանների, դէմ ենք վերջիններիս գլխալ միջամտութեան հետ կապուած բոլոր ձեռնարկներին. մենք յենուած ենք բոլշեւիկեան մենատիրութեան

իմ համախմբուած Որհրհր. Միութեան ժողովուրդներին ներքին ուժերի, նրանց աշխատաւոր զանուածների ուժի վրա :

Մենք դէմ ենք ամէն մի հարկադրանքի, որ մէկ ժողովուրդը հանդէս է բերում միւսի վերաբերմամբ. մենք անկերպաւորօրէն ընդունում ենք, որ ամէն ժողովուրդ կատարելապէս իրաւագոր է ինքնանկախ դատաւոր, իբ քնական ազգազբական սահմաններում բոլորովին անկախ պետութիւն կազմելու : Այս ժողովուրդներին համբաշխութեան ու սերտ գործակցութեան միակ երաշխիքը մէնք համարում ենք համաձայնաբերուով նրանցից ստեղծուած ազատ միութիւնը՝ հիմնւած րարիՖա-մաքսային միութեան, սահմանների ու աղաչային փոքրամասնութեանց իրաւունքները պաշտպանելու երաշխիքի, միջազգային ներդաշնակուած քաղաքականութեան վրա, որոնք հիմք պիտի դառնան, այսօր՝ Եւրոպայի, իսկ յետագային նաև ամբողջ աշխարհի միացեալ նահանգներ ստեղծելու :

Մենք սպասում ենք, որ աշխատաւոր զանուածները՝ բանւորները, գիւղացիները, պրոլետարական մտաւորականութիւնը և Որհրհր. Միութեան ընկերվարական կուսակցութիւնները իրական արձագանգ պիտի տան Լիգայի գաղափարներին՝ ուժերը համախմբելու, բոլշեւիկեան դիրքերի վրա նախադուած յարձակման անցնելու, մեր գաղափարների ուժով նրանց շարքերում արդէն ձուալուող յուսահատութիւնն ու կազմալուծումը արագացնելու, մէկը միւսի յետեւից նրա դիրքերը նաճելու՝ մինչեւ նրա տնտրիստական-մենատիրական ուժիմի կատարեալ հաշիւարդարը : Մենք յիշեցում ենք նրանց, որ յաղթութեան երաշխիքը՝ Արեւելեան Եւրոպայի ապաստուած ժողովուրդների ապագայ փոխյարաբերութիւնները միանգամայն որոշ համաձայնութեամբ կարգաւորելու մէջ է, մի համաձայնութիւն, որ հիմնւած լինի փոխադարձ կատարելալ ցուտահութեան և իրաւունքների ճանաչման վրա : Այս համաձայնութեան համար հող ստեղծելը՝ Լիգայի կարեւորագոյն խնդիրներից մէկն է :

Մենք սպասում ենք, որ Եւրոպայի պրոլետարիատը, նրա ընկերվարական կուսակցութիւնները, միջազգային միութիւններն ու արհեստակցականները մեր պայքարի ընթացքին քաղաքականապէս ու բարոյապէս մեղ կօժանդակեն՝ յանուն հետեւեալ գաղափարների .

Համախումբ ու վճռական կուիւ ընդդէմ սպիտակ ու կարմիր նաճողականութեան :

Կեցցէ՛ ճնշած ազգերի ու դասակարգերի ապաստապրութիւնը :

Կեցցեն Ռուսաստանի, Ուկրայինայի, Բելուուսիայի, Վրաստանի, Հայաստանի, Ուղբեկստանի, Թուրքմենստանի և այլ ազատ, անկախ հանրապետութիւնները, կեցցէ՛ նրանց ազատ միութիւնը : Կեցցէ՛ բռնի ուժով մասնատուած ազգերի միութիւնը :

Կեցցէ՛ այս սկզբունքներով վերածննւած Նոր Արեւելքը, դալիք Նոր Եւրոպայի զանախիցը :

Կեցցէ՛ միջազգային ընկերվարութիւնը :

Նոր Արեւելքի Ընկերվարական Լիգայի
Նախաձեռնող Խմբակ

Ը Ն Կ Ե Ր Վ Ա Ր Ա Կ Ա Ն Ք Ի Ր Ո Ն Ի Կ Ո Ն

(Նորվեկիոյ ընկերվարականները — Անկախ Աշխատաւորականները և Սնտէն — Միջազգային ճարտարարւեստական ընկերակցութիւններ — Մարքսի տեսաբանութիւնը և Հանրի տը Ման) :

I. — Նորվեկիոյ ընկերվարականները կանցնին իշխանութեան գլուխ : — Յունարի ընթացքին Նորվեկիոյ քաղաքական կենսի մէջ տեղի ունեցաւ հիմնական փոփոխութիւն մը : Ընկերվարականները, որ վերջին ընտրութիւններուն տարած էին մեծ յաջողութիւններ՝ առանց սակայն կարենալ խորհրդարանին մէջ (Ստորտինկ) բացարձակ մեծամասնութիւն կազմելու՝ երկար վարանմունքէն յետոյ անցան իշխանութեան գլուխ :

Պէտք է ճշտ նկատել, որ այս ընկերվարական դաժլիւն ալ՝ ինչպէս անգլիական աշխատաւորականներուն փոքրամասնութեան մը իշխանութիւնն է ու հետեւաբար՝ կը գտնուի նոյն քաղաքական դրութեան մէջ որուն՝ մէջ ամիսներով, մեծ դժարութեանց առջև գտնուեցան բրիտանական աշխատաւորականները և Դանիոյ ու Պելճիթայի ընկերվարականները : Նման ընկերվարական նախարարութեանց առջև քաղցրիկ իրականագրքը կը դնէ ճակատագրական երկընտարանք մը՝ կամ համակերպիլ դրութեան ու ջանալ ընկերվարական գործը աւելի արդիւնաւոր ու տարածուն ընծայել դրամատիքական հասարակարգի մէջ, և կամ յարուցել ընկերային յեղափոխութիւն՝ օգտուելով պետական մեքենայի ժամանակաւոր ու օրինական գրաւումէն : Արեւմտեան ընկերվարութիւնը կընտրէ առաջին ճամբան : Մեղի կը մեղայանկալ որ միջազգային բանւորութեան մարտական կորովը չթուլնայ ազկէ ու համապատասխան երկրներու ընկերվարական գործը օգտուի :

Նորվեկիոյ նոր դաժլիւն մեծամասնութիւն կազմելու համար ստիպուած պիտի կրթին համայնավարներուն և ձախ ուսկազմներուն վրա : Այս վերջիններն ալ հաշուելով ընկերվարական երեսփոխաններու 56 թիւը կը բարձրանայ 93-ի՝ 150-ի վրա : Չենք գիտեր թէ ի՞նչ չափով նման խախտում մեծամասնութեան մը կրթնած կտաովարութիւն մը պիտի կրնայ վճռական գործեր կատարել :

Դաժլիւն կազմը ուսեղ է ու կը ներկայացնէ զբեթ թուրը հատուածներն ու ուղղութիւնները, որ գոյութիւն ունին կուսակցութեան մէջ : Նախագահը՝ Չորնարտ, հին ու խանդավառ դիմորեալ մըն է ու կը ներկայացնէ, եթէ կարելի է ըսել, կուսակցութեան հին սերունդը : Հրազոթ՝ ծնունդով, յետոյ խմբագրապետ կուսակցութեան կերտնական պաշտօնաթերթին, յետոյ կուսակցութեան նախագահ, ան կը հանդիսանայ փորձած ու անցեալ ունեցող գործիչ մը : Արտաքին գործերու գլուխը կը գտնուի պատմագէտ ու ձախակողմեան Պուլլ : Հարթային խնամատարութեան նախարարն է Մաուլէն՝ երեսփոխանական հատուածի երեսփոխարդ ու ետանդուն նախագահը, որ նոյն ատեն նախագահն է արհեստակցականներու միութեան :

Գարով դաժլիւնն մտադրութիւններուն կը բաւ ըսել, որ ո՛չ թէ քաղաքական չճացման այլ ընկերային պայքարի կտաովարութիւն մըն է, որ պիտի աշխատի տանել Նորվեկիան դէպի ընկերվարութիւն :

II. — Անկախ աշխատաւորականները և Ֆիլիփ Սնտէն. — Ֆիլիփ Սնտէն՝ անգլիական աշխատաւորական պետը, որ ելեմտական նախարար էր Ռ. Մալտոնայի դաժլիւն մէջ և որ ընկերվարական շարժման առաջնակարգ դէմքերէն մէկն է՝ դեկտեմբերի վերջերը իր հրժարականը զրկած է Անկախ Աշխատաւորականներու կուսակցութեան :

Ինչպէս յայտնի է անգլիական ընկերվարական շարժումը՝ մեկանօրէն արտայայտած Աշխատաւորական կուսակցութեամբ (Labour party) իրականին մէջ, ներքին կը ներկայանայ երկու ճակատով՝ մէկը՝ Աշխատաւորական կուսակցութիւնը իր ամբողջ կազմով ու երկրորդ Անկախ Աշխատաւորական Խառնուածք (Independent Labour party), որ տեսակ մը կուսակցական, նեղ արտայայտութիւնն էր՝ Անգլիոյ ընկերվարական շարժման : Վերջին տարիներս Անկախ Աշխատաւորականները ցոյց կուտան շեշտած ձախակողմեան ձգտումներ : Անոնք հետզհետէ հանդէս կուգան մայր կուսակցութեան պաշտօնական քաղաքականութեան դէմ : Կուսակից են՝ համաձայնութեան Սրբորդ Միջազգայնակալին հետ ու առհասարակ տարբեր տեսակէտներ ունին՝ ընկերվարականներու իշխանութիւնը գործածելու եղանակներուն շուրջ :

Արդ՝ Ֆ. Սնտէն, որու հետ է նաև Ռ. Մալտոնայտ քանիցս ըողջած են այս կերտնախոյս ձգտումներուն դէմ ու վերջապէս նկատուած են նոյնիսկ Անկախ Աշխատաւորականներու առանձին գոյութիւնը : Իր հրաժարագրին մէջ՝ Սնտէն, որ նախագահած ալ է՝ Անկախ Աշխատաւորականներուն յտակօրէն դէմ կարտայայտուի անխոս կազմակերպութեան գոյութեան՝ աշխատաւորական շարժման այս մեծ ծաւալ ստացած վիճակին մէջ ու անհրաժեշտ կը գտնէ անոր բարձրումը : Ճօնսօն՝ անկախներու արդի նախագահը՝ իր պատասխան նամակին մէջ, փաստագրօրէն ու շատ համոզիչ կերպով կը պատասխանէ Սնտէնի պայտուցանելով Անկախներու կազմակերպութեան անհրաժեշտութիւնը՝ որպէս պարզ, խանդավառ ու կուսակցականօրէն կազմակերպուած հատուած, որ կենդանի երակը հանդիսացած է անցեալին մէջ և կը մնայ՝ Անգլիոյ ընկերվարական շարժման մէջ :

Ֆ. Սնտէնի շեղումը իրականին մէջ արամաբանական եզրակացութիւնն է անգլիական աշխատաւորականներու ալ թէին տարած «Զախակողմեան» քաղաքականութեան ու հակապիլ Սնտէնի հեղինակութեան՝ պէտք չէ կարծել, որ կրնայ մեծ հետեանքներ ունենալ :

III. — Միջազգային ճարտարարւեստական ընկերակցութիւնները. — Յաճախ դրած ենք «Իրօպակի» էջերուն մէջ, որ միջազգային դրամատիքութիւնը հետարդհետ է կը կազմակերպուի որպէս ուրոյն դասակարգը՝ ցատկելով ազգային սահմաններու վրայէն : Գաղցրիկ

անուսական պարբերական մը կուտայ միջազգային ճարտարարևեստական ընկերակցութիւններու շատ բնորոշ ցուցակ մը: Եկատելի է, թէ ի՞նչպէս կը միջազգայնանայ ճարտարարեստը արագօրէն ու ի՞նչու քաղքենիները հետզհետէ կը զիջին իրենց ազգային շահերը իրենց դասակարգային շահերուն ստը: Պէ՛տք է բան, որ այս ցուցակը դեռ ամբողջական չէ: Օրինակ՝ դուրս կը մնան սակէ՛ Լուցկիի Միջազգային Ընկերութիւնը, որ տարածած է ամբողջ Եւրոպայի և Մ.Նահանգներու վրա, պայճութիւն ներթերու անգլիացի-գերմանական մեծ տունը, ներկերի ներթերու Ֆրանքե-գերմանական հակայ համաձայնութիւնը և ուրիշներ, որ կապ ունին մետաղագործութեան, երկաթիչնի, ջիմիական աղբիւրներու հետ: Ուրեմն կը թւենք զլիսաւոր միջազգային ճարտարարեստական ընկերակցութիւնները: Պողպատի Միջազգային Համաձայնութիւն՝ հիմնած 1926 ին: Կը խմբէ հետեւեալ երկիրները՝ Գերմանիա, Ֆրանսա, Պելճիքա, Չէխո-Սլովաքիա, Աւստրիա, Հունդարիա: Երկաթուղագծերու համաձայնութիւնը՝ հիմնած 1926 ին: Կը խմբէ՝ Գերմանիան, Մեծն-Բրիտանիան, Աւստրիան, Լեհաստանը, Չէխոսլովաքիան: Խողովակներու Միջազգային Ընկերակցութիւնը, որ կը խմբէ Ֆրանսան, Գերմանիան, Պելճիքան, Մեծն-Բրիտանիան, Աւստրիան, Լեհաստանը, Չէխոսլովաքիան և այլն: Պղինձի Միջազգայինը հիմնած 1926-ին: Կը խմբէ Մ.Նահանգները, Սպանիան, Պելճիքան, Մեծն-Բրիտանիան, Եուկո-Սլովիան և այլն: Երկիրու և ապակիզէնի միջազգային համաձայնութիւնը՝ հիմնած 1907-ին: Կը խմբէ Ֆրանսան, Աւստրիան, Չէխոսլովաքիան, Սկանտինավեան երկիրները, Հունգարիան, Հոլանտան, Չէխոսլովաքիան: Արեստական մետաքսի ընկերակցութիւնը՝ հիմնած 1926-ին: Կը խմբէ Գերմանիան, Մեծն-Բրիտանիան, Իտալիան և Մ.Նահանգները: Սաքինձի համաձայնութիւնը՝ հիմնած 1926-ին, որ իմի կը խմբէ գրեթէ բոլոր եւրոպական արտադրող պետութիւնները:

Ձեռք շարունակեր: Մեր թւածներն ալ կը բաւեն գաղափար մը տալու համար: Կը բաւէ յիշել միայն, որ միջազգային ընկերակցութիւնները կան բոլոր ճարտարարեստական ճիւղերուն մէջ, զանազան ձեերու տակ: Միջազգային արտադրութիւնը հետզհետէ կենթարկւի միջազգային հակակշի: Գուցէ այնքան ալ վտանգաւոր չըլլայ այս կեդրոնացումը՝ եթէ նկատի առնենք, որ այսպիսով կը դուրսանայ միջազգային բանորութեան հակակշիւրը:

IV. — Մարքսի տեսարանութիւնը և Հանրի տր Մամ. — «Իրօչակ» ընթերցողները գիտեն, որ պե՛տք ընկերվարական տեսարանը Հանրի տր Մամ՝ վերջերս մեծ ազդուկ հանց կարևոր աշխատութեամբ մը՝ Մարքսի տեսարանութեան անդին, որ մեծ վէճ կը յարուցանէ ընկերվարական շրջանակերէ դուրս ալ: Յունւարի վերջը՝ Հանրի Տր Մամ Փարիզի ընկերվարական ուսանողներուն առջև ու Ֆրանսացի ընկերվարական արևողմանն պիտ Փ. Ռընտելիի նախագա-

նութեան տակ՝ տւաւ մեծ դասախօսութիւն մը նոյն նիւթին շուրջ: Տը Մամ անխնայ կը յարձակի Մարքսի տեսարանութեան վրա ու վերագնահատութեան կենթարկէ զայն: Իր դասախօսութեան ընթացքին՝ ան այնքան ծանրակշիռ ու յանդուգն արտայայտութիւններ ըրած էր, որ Ֆրանսական հակառակորդ մամուլը իր յայտարարութիւնները սկսաւ գէնք գործածել ընկերվարութեան դէմ, յարուցանելով մամուլի մէջ վէճ: Մասնաւորապէս Ուրախ են համայնավարները, որ կամբատանեն ընկերվարականները դաւանանութեամբ: Ընկերվարական մամուլը որքան ալ աշխատի կերպարանափոխել կամ թեթևցնել Տը Մամի մտքերը՝ անհնար է այսուհանդերձ չնչմարել պէլժ տեսարանին հիմնական հակառակութիւնը Մարքսի տեսակէտներուն հետ: Ուրիշ յօդուածով մը մենք պիտի անդրադառնանք այս խնդրին:

Վ. Շ.

ՃՈՒՈՆ ՃՈՒՍԹՕ

Այս տարւայ յունւար 8-ին, Պուէնոս-Ալբէտուս վարժանէնցա Արժանթինի ընկերվարական շարժման ամենակարկառուն ղեմերէն մէկը՝ Ժուան Ժուսթօ: Մնելով 1865թ. և բժշկական ուսում ստանալով Փարիզի և Վիենի համալսարաններու մէջ, 1890-ին Ժուան Ժուսթօ կողեցաւ Պուէնոս-Ալբէտուս համալսարանին մէջ ուսուցչապետութեան և այդ պաշտօնը մեծ յաջողութեամբ վարեց մինչև 1905թ.: 1892-ին ան յարեցաւ ընկերվարական շարժման, և քանի մը ընկերներու հետ հիմը դրաւ Արժանթինի ընկերվարական խմբակցութեան, իսկ 1894թ. սկսաւ հրատարակել Վանկուարսիա ընկերվարական օրաթերթը, որ հաջորդ տողովրդականութիւն ստացաւ և կայրի մինչև այսօր ալ: 1895 թւականին ընտրեցաւ Խորհրդարանի պատգամաւոր և, իրբ պերճախօս հետոր ու տաղանտաւոր խորհրդ, ձեռք բերաւ արտակարգ ազդեցութիւն թէ Խորհրդարանի ներք, թէ դուրս՝ հասարակութեան մէջ: Բացի գործնական աշխատանքէ ան հրատարակեց բազմաթիւ իրքեր ընկերվարութեան տեսական և գործնական խնդիրներու մասին, տւաւ Մարքսի «Իրամազուխ»-ի առաջին հատորի սպաներէն թարգմանութիւնը, որը միակն է ամբողջ սպանախօս աշխարհին մէջ: Իրեւ ջերմ հիացողը Ժուէսի տաղանտին, Ժուան Ժուսթօ 1911 թւին կազմակերպեց մեծ թրիպոնի բարողական փառաւոր պտոյտը Արժանթինին մէջ:

Միայն իր հարեհիւրով չէր սահմանափակած Ժուան Ժուսթօի հմայքը: Ընկերվարական Միջազգայինի մէջ ալ ունէր լայն ազդեցութիւն: Ան մասնակցած է ընկերվարական բազմաթիւ Խորհրդատողութիւնու և համագումարներու և փոխ-նախագահն էր 1919թ. Պետի միջազգային համագումարին: Ժուան Ժուսթօ մահը կտրուտ մըն է ոչ միայն Արժանթինի, այլ և միջազգային ընկերվարական մեծ ընտանիքին համար:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ա Ր Ե Ի Ե Լ Ե Ա Ն Ը Ն Կ Ե Ր Վ Ա Ր Ե Կ Ա Ն Լ Ի Գ Ա Ն

15 փետր. Պրագ.

Անհրաժեշտ ենք համարում մի քանի տեղեկութիւններ հաղորդել Արեւելքի Ընկերավարական Լիգայի մասին:

Ինչպէս գիտե՞ք, սոցիալիստ-յեզափոխականները Վ. Ձերնովի թէն է միայն մտնում Լիգայի մէջ. միւսները կամ անտարբեր են, կամ, ինչպէս «Ինի»-ն ու «Վոյեա Ռոսիա»-յի խումբը, թշնամական դիրք են բռնել: Փորձեր են լինում Լիգայի մէջ մտցնելու ու որբէ ընկերավարական տարբեր: Այս նպատակով Լիգայի զարտուղարութիւնը դիմեց և ռուս սոց.-դեմոկրատներին՝ խնդրելով, որ նա թույլ տայ Պրագի իր անդամներին մտնելու Լիգայի մէջ: Արթամովիչը ի պատասխան այս դիմումի յայտնեց, որ զուտ կազմակերպական պատճառներով չին կարող համաձայնել, որ իրենց ընկերները մասնակցեն Լիգայի մէջ: Գրեթէ նոյնանման պատասխան էր տւել և Մերետելին՝ իրեն եղած դիմումի: Առհասարակ, Պրագի վրացի մենչեւիկները դէժ են Լիգային և ինչով կարող են՝ աշխատում են նրան վնասել: Դէժ են և Պրագի լեւոնականները՝ իրենց «Վոյնի Գորեց» ամսագրով:

Միւս կողմից, Լիգայի մէջ մտնում են նոր տարբեր

և աւելանում են մասնակցող կուսակցութեան անդամները: Այսպէս, Լիգայի մէջ մտաւ հրէա յայտնի սոց.-դեմ. սլոն. Գորլմանը՝ Ուկրաինայի նախկին Ռադայի անդամ և աշխատանքի նախարարի օգնականը: Համակարնելով է վերաբերում դէպի Լիգան ազգային հարցի յայտնի տեսաբան Ժիտովսկին, որ մի շարք յօւսածներ է հրատարակել ի պաշտպանութիւն Լիգայի: Լիգայի կողմնակից են և մի շարք կուսակցի գործիչներ՝ պրոֆ. Շչերբինան, Պ. Մակարենկոն ևայլն:

Լիգայի աշխատանքներն ու ծրագրերները հետեւան են: Յրաններէն դերմաներէն և անդլիերէն լեզուներով թարգմանւած է Լիգայի պլատֆորմը, որ մի յատուկ տեղեկագրի հետ պիտի ուղարկէ բոլոր ընկերավարական կուսակցութիւններին: Որոշւած է հրատարակել Լիգայի պաշտոնաթերթը՝ նւիրւած ազգային խնդրի քննութեան ու լուսաբանութեան, կազմակերպել դասախօսութիւններ ու գեկուցումներ և այլն: Առհասարակ, Լիգան ձգտում է, ըստ կարելու լայն, ժողովրդակականացնել իր ծրագրի հիմքում դրւած հարցը՝ ազգային ինքնորոշման և ազատ կենսակցութեան սկզբունքը:

Մ Օ Տ Ի Կ Ա Ն Յ Ե Ա Լ Ի Ց

Սոցիալ-Դեմոկրատ մենչեւիկները պաշտօնաթերթ «Սոց.-Վեստնիկը» իր վերջին՝ 21 փետր. համարում «Մօտիկ անցեալից» յօւսածի մէջ, տալիս է հետաձեռներ Վրաստանի Կոմունիստական Կուսակցութեան կենտր. կոմիտէի Կոմիտեի երբորդ համազումարին ներկայացրած գեկուցումից: Վերին աստիճանի հետաքրքրական կտորներ կան այդ չնաչափահի գեկուցման մէջ:

«Ընկեր Թրոցկին, որ վերջերս Թիֆլիսում էր, ասւած է այնտեղ, այսպէս էր ընտրուած կացութիւնը Վրաստանում. «1922 թւին Ստալինը ինձ ասում էր, թէ՛ պէտք է վերահսկել Վրաստանը լայնքով ու երկայնքով, որպէսզի նրա մէջ վերջ տրի մենչեւիկները աղբեղութեան ու զօրութեան»: Եւ, իրօք, բուլչեւիկները լաւ «վերահսկեցին»:

«Վրաստանի Կոմունիստական Կուսակցութեան երկրորդ համազումարի օրերին (1922թ. աշնանը), ասումով է գեկուցումը, մենչեւիկեան կուսակցութիւնը ներկայացնում էր մի ոյժ, որի տեսակարար կշիռը, Վրաստանի աշխատաւորների լայն զանգւածներին մէջ, յամենայն դէպս, եթէ ոչ աւելի, պակաս էլ չէր մեր կուսակցութեան տեսակարար կշիռն ու դե-

րից, ունէր կարգապահ, փորձւած աշխատաւորների աւագին մի բանակ... մենչեւիկ կուսակցութիւնը հեշտութեամբ կարողացաւ փոխարինել ուրիշներով ձերբակալւած մի քանի տասնեակ ղեկավարներին... Մեր կուսակցութեան կենտր. կոմիտէի հին կազմը նոյնիսկ հարց չի դրել, որ որեւէ բեկում ու փոփոխութիւն առաջ բերէ մենչեւիկներին հետեւող քանուրների ու գեկուցացիների գանգաձածի մէջ: Բովանդակ այդ գանգաձածը, կարծես, մենչեւիկների անկապտելի աւարն էր հաշւուում: Մենչեւիկ կուսակցութիւնը ապրում էր կէս-բաց, կէս-ծածուկ կեանքով և ամենալաւրած աշխատանք էր կատարում թէ՛ սեփական կուսակցական շարքերում և թէ՛ անկուսակցական աշխատաւորական զանգւածների մէջ»:

Այս գեկուցումը լայն տեղ է տալիս այն պայթեարին, որ մէկ ու կէս տարի շարունակ մղւել է կենտրոնի՝ Մոսկւայի և Թիֆլիսի միջև: Կենտրոնի պահանջները համարեա միտ անտես էին արւում Թիֆլիսում, մինչեւ որ Անդրկովկասի Կոմկուսի կենտր. կոմիտէն չհեռացրեց Վրաստանի Կոմկուսի կենտր. կոմիտէն և տեղը նոր կոմիտէ չնշանակեց: «Եւ միայն դրանից

յետոյ կարելի եղաւ եռանդուն ու վճռական պայքար մղել մենչեւիկներէ դէմ»:

«Այդ պայքարը, շարունակում է զեկուցումը, պէտք եղաւ առջը տանել երկու ձեռով. մի կողմից ամենախիտա, անխնայ ահաբեկչական միջոցների կիրառումով... միւս կողմից՝ մենչեւիկներին հետևող բանուորների ու գիւղացիների լայն խաւերի հետ կապեր հաստատելով: Այս երկու միացումով է, որ կարելի եղաւ յաջողութեամբ գլուխ բերել մենչեւիկ կուսակցութեան հաշտարդութիւնը»:

Ու այս պարծենկոտ յայտարարութիւնից յետոյ, զեկուցումը շարունակում է. «Ե՛րեւ 1923 թւի սկզբին կենտր. կոմիտէն հաստատեց պատժի բարձրագոյն տեսակի (մահաւան պատժի) կիրառումը մի շարք մենչեւիկների վերաբերմամբ: Ի պատասխան Օրլամէի սպանութեան, Ձէկան զնդակահարեց հարիւրից աւելի աւազակախմբեր, որոնց մէջ և մի քանի մենչեւիկներ: Յունւար ու փետրար ամիսներին Վրաստանից արտաքուստի մի քանի տասնեակ մենչեւիկ ղեկավարներ: Մայիսին արտաքուստի 80 մենչեւիկներ: Եւ նոյն մայիսին Ձէկան յաջողեց բռնուտել զինուորական կենտրոնի բոլոր գործիչներին. գինուրական կենտրոնի 15 գործօն աշխատողներ ու ղեկավարներ զնդակահարեցին: Յունւարին, ապա մարտին ու ապրիլին, յետոյ նաեւ մայիսին ու յունիսին Ձէկան գլուխ բերեց մենչեւիկ

կուսակցութեան գաղտնի գործիչների զանգւածային ձերբակալութիւններ ու բանտարկութիւններ: Վերջին զանգւածային ձերբակալութիւնները տեղի ունեցան յունիս ամսին»:

Ձերբակալածների ու զնդակահարածների իրական թւի մասին զեկուցումը տեղեկութիւններ, ի հարկէ, չի տալիս. համեստորէն լուսթեամբ է անցնում այդ հարցի վրայից:

Իբրեւ հետևանք ծմամ գործեւակերպի, նկատում է զեկուցումը, «բանուորների առջև հարցը դրեց հետեւալ կերպով. կա՞մ շարունակել պայքարը խորհրդային իշխանութեան դէմ, մասնակցել գաղտնի կազմակերպութիւններին, և այս դէպքում, կրե՞լ այդ պայքարի բոլոր հետևանքները, այսինքն՝ բանտ, աքաղաղ, զնդակահարութիւն, կամ գէնջը վար դնել»: Եւ «մեր հերոսական պայքարը մենչեւիկ կուսակցութեան դէմ պակասեց յաջողութեամբ. Ձէկան կարողացաւ ջարդ ու փշուր անել մենչեւիկ կուսակցութեան բոլոր կենտրոնները ո՛չ միայն Թիֆլիսում, այլ և դաւառներում»:

Իայց շանցաւ մի տարի, և ահա «Ջարդ ու փշուր» եղած մենչեւիկ կուսակցութիւնը ապստամբութեան դուռ բարձրացրեց խորհրդային իշխանութեան դէմ: Ու նորից պէտք եղաւ «վերահերկելու» Վրաստանը յայնքով ու երկայնքով: Եւ այս անգամ աւելի անողոք ու դժաման...

Չ Է . Կ Ի Մ Տ Ի Յ Ի Շ Ո Ղ Ո Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

Ստորև բերւած պատմութիւնը առնւած է Ռուսաստանի Կօմունիստական երիտասարդական Միութեան կենտրոնաֆոնիք «Կօմունիստիկայա Պրաւդա»-յի այս տարւայ փետր. 19 համարից: Հեղինակը նոյն Միութեան անդամ չէկիտա Ակսենով-Իսաղինն է: Անկարգի է աւանց յուզումի ու նուրբ կարգալ այդ պատմութիւնը, որ մեկի խոստովանութիւն է այն սպայախեղեան միջոցների, որին դիմում էր Ձէկան իր գաղբիլի նպատակներին հասնելու համար: Պատմութեան հիմնականին են յայտնի միւսը Աթարբեգեանը և հին կօմունիստ Կամօ — Տէր Պետրոսեանը: ԽՄԲ.

Սկստ. 4-ին Կամօն մտաւ մեզ մօտ: Եկել էր յայտնելու, որ առաւօտեան ժամը 11-ին պատրաստ լինենք, որովհետեւ շտապ հրաման է ստացւած հաշտարդարի ենթարկելու 30-40 հոգիներ շատ լաւ գինւած մի հրոսախումբ, որը դառնում է մի նախկին զնդակատի հրամանատարութեան տակ:

Ժամը 11-ին Եկան երկու պարունքատար ինքնաշարժներ: Առնելով հրացաններ, զանազան ձեռի ատրճարճանակներ ու փամփուշտի լեցուն արկղեր՝ ճանապարհ ընկանք:

Պետրոզդարի խնուղով մօտ 30 վերստ անցնելուց յետոյ, դուրս եկանք ճանապարհից և կանոյ առինք 5 վերստի վրա, անտառում: Մեքենավարները մնացին ինքնաշարժների մօտ, իսկ Կամօն մեզ առաջնորդեց անտառի խորք: Նա բացարկեց մեզ գործուղութեան ծրարից: Ձատնելով չորս խումբ հետախույններ, իւրաքանչիւրը երեքական հոգուց, ուղարկեց զանազան

կողմեր: Երկու ժամ յետոյ Կամօն կարգադրեց բոլորին ի մի հաւաքել: Հետախույնները յայտնեցին, որ ամէն ինչ հանդիստ է: Հիտաթիւսում՝ բոլորս սպասում ենք թէ ինչ կասի Կամօն: Նա ջղային էր և հայհոյում էր՝ սակելով, թէ սխալ տեղեկութիւններ են հաղորդել և արհեստաւ էր իրուր կորած ժամանակի համար: Մենք էլ, հետևելով նրան, սկսեցինք հայհոյանքներ ուղղել տեղեկատու սպայակոյտի հասցէին: Ձնելով արքունահալը՝ Կամօն կարգադրեց, որ սկսեք նշան խիչել:

Մենք արդէն սպասել էինք մեր ունեցած բոլոր փամփուշտները, իսկ Կամօն աւելի էր զրզռում մեզ և ստիպում կրակել մինչև վերջին փամփուշտը:

Վերջապէս, փամփուշտները հատան: Մէկ էլ յետ նայեցի որ ապեղին տեսած իցս: Առջևեց, ատրճարակը ձեռքին, զորը վերարկուն հապին, ուսադիրները ուսին և գլխարկով փայլում էր մի սպայ՝ յետեկց ունենալով հրացանները պատասաւ բռնած հինգ զինուորներ:

— Ձեռներդ վէր, կարմիր սրիկաներ, տեղից չշարժել, ձե՛ր...

Իմնից դուրս եկաւ, որ մեզ չըջպատու էն ամէն կողմից: Երբ նորից պահանջեցին ձեռները բարձրացնել, Կամօն բարձրացրեց: Մենք էլ արինք նոյնը: Սկսեցին կապտուկ մեր ձեռները: Ութը զինուորներ սպայի զլխաւորութեամբ մտարին Կամօին: Ձեռներս ուրբած դէպի յետ մենք սպասում էինք մեր հերթին:

Աննկարգութիւ ծանր սրտամաղրութեան տակ էլինք: Բիչ հեռու, թուփերի յետեկց, լուսեց համազարկ: Շատերը ցնցեցին: Մեզ հակողները խնդացին շարախինգ կերպով:

Կամօին տարած կողմից երևաց և մեր կողմն էր զալիս սպան՝ մերկ սուրը ձեռքին: Երբ աւելի մօտեցաւ, կարելի եղաւ նշմարել դեռ չչորացած արիւն սրի վրա, որի հետ խաղում էր ձեռնափայտի պէս:

Սպան կանգնեց մեր առջև՝ քննելով իւրաքանչիւրիս դէմքը ինչ որ ծաղրական կիսաժպիտով:

— Ո՞վ է հետեւեալը, հետեւի՛ր ինձ:

Ու գնացին՝ սպան, փայլեցնելով ոսկեգօծ ուսադիրկերը, իսկ մեր ընկերս՝ կորազուխ: Լարած ու չաղբուծեամբ մենք բռնում էին մեր ընկերոյ և Կամօին տարած կողմից ամէն մի ծայն: Երկար չսպասեցինք: Նորից լուսեց համադարձը և նորից ամենքը ցնցեցին:

Նորից եկող մի շարքային գինւոր տարաւ ինձ: Ես գնում էի առջևից, մերթ ընդ մերթ զգալով ուսիս սահնի ծայրը, որպէսզի հարկ եղած ուղղութիւնը բռնեմ: Քայլելիս դպացի, որ ձեռներս կապած են խիստ ամուր, փորձեցի մատերս շարժել—չկարողացայ: Հասանք մի փոքրիկ, մանր թուփերով ծածկած տալամուծիւն, որի ուղիղ կենտրոնին կանգնած էր մի ծառ, նրանից մի 15 քայլ հեռու՝ մի ուրիշ ծառ: Վերջինս ճիւղերից մէկի վրա պատրաստած էր կախաղան: Մտախց ոչ հեռու անշարժ պստկած էր Կամօն՝ ձեռները տարածած, արիւնոտ դէմքով: Կրծքին ու վզին երևում էին մաի կտորներ. կարծես թէ մարմինը աքցաններով են կտրատել: Պատաստում չապիկը առատօրէն ներկւած էր արիւնով: Խոցերը ծածկւած էին: Մինչ այդ, իմ մէջ դեռ յոյս կար ազատելու, բայց պատաստուած Կամօին տեսնելուց յետոյ, իմ ուժերս վերջնականապէս ընկան: Ինձ մօտեցրին արկիւր վրա նստած սպային: Խորհրդեցին: Մօտս եղած վկայականները յանձնեցին սպային: Նա քննեց և ձեռքին պահելով կուսակցական անդամատետրս՝ հարցրեց.

— Ո՞ր կազմակերպութեանն ես պատկանում:

Ես լուռ էի:

— Ի՞նչ է ներկայացնում իրենից ձեր խումբը. ի՞նչ էր ձեր նպատակը:
Ըստ երևոյթին, իմ լուռութիւնը նրան կատաղացրեց: Նա կանգնեց՝ ուղղելով եզան ճիւղերից պատրաստած մտրակը:
— Կը պատասխանե՞ս, սրիկայ՝:
Ես շարունակում էի լուռ:
Մտրակը շտապեց մէջքին՝ ծայրով ալրելով աջ կողքս: Սպան շարունակում էր հարցեր ուղղել: Փայտացած աչքերով նայում էի նրա ուսադիրկերին ու լուում: Երկրորդ անգամ բարձրացրեց մտրակը, բայց չլսիեց:
— Դէպի՞ ծառը, կարգադրեց սպան:
Բռնեցին ձեռներիցս, բայց հէց առաջին քայլից ևս դուրս ընկայ և մեխածի պէս կանգ առի հառաչելով, որովհետև ամենաշնչին շարժումը դժուարին ցաւ էր պատճառում մէջքին:
Ինձից տանձերկու քայլ հեռու շարեցին գինւորները: Սպան մօտեցաւ ինձ:
— Կը պատասխանե՞ս:
Երբ մէջքս շփում էր ծառին, սոսկալի ցաւեր էի պղտմ:
Այն ժամանակ նա հրամայեց.
— Պատրաստ:

Ես սեղմեցի ծառին ու սոսկալի ցաւեր զգացի, բայց հրացանների խողովակներն աւելի էին սարսափելի: Աստիճանաբար գիտակցութիւնս սկսեց թողնել ինձ: Ինչպէս քնի միջից, յիշում եմ, որ կարգադրեցին. «Թողնել»: Չգիտեմ, թէ որքան ժամանակ էի ուշադրեաց պարկին: Զարթնելով՝ լսեցի դթութիւն հայցող վայրի աղաղակներ: Ես պառկած էի երեսիս վրա՝ դէմքս խոտերի մէջ: Ենչալիզձ էի լինում: Կոթներով ձեռքերիս՝ սեռայ սպային, որը ինչ որ թղթեր էր քննում: Մեր խմբից էր ընկերը, ձեռքերը յետևը կապած, հակառակ գինւորների արգելքին, աշխատում էր աւելի մօտենալ սպային:
— Պարոն սպայ, ասում էր նա համարեա լալով, ես էլ սպայ եմ, ինձ մի՛ գնդակահարէք. ես ձեռանից եմ: Ի սէր Աստույ... Ես կապացուցանեմ... Արձակէք ձեռներս...
Նրա ձեռներն արձակեցին: Դողողալով մտքով սպեց պատուել կօշիկի ճիւղը: Սպան, կարգալով այնտեղից դուրս հանւած թուղթը, կարգադրեց խոտերէն.
— Երբեք, դրա գործը յետոյ կը նայինք:
Այդքան խայտառակօրէն խոստովանող մեր ընկերով մօտեցան երկու դինւորներ. մէկի ձեռքին կար պարան: Հպարտօրէն բարձրացնելով գլուխը՝ նա հրեց պարանը ձեռքին բռնած դինւորին և պոռաց.
— Սա ստորութիւն է, դուք իբրևուէք չունէք... Ես ուղարկւած եմ լեհական սպայակոյտի կողմից:
— Վերջոր՛ւ, վերջոր՛ւ դրան, մոռնաց սպան՝ ոտքի ելնելով:
Տարին: Սպան մօտեցաւ ինձ. ևս դուրսս առի ձեռներս մէջ և փակեցի աչքերս:
— Կենդանի ե՞ս՝ հարցրեց նա ոտքով հրելով կողքս: Ես ցնցեցի:
Ա՛, կենդանի է, շարունակեց նա, սպա, սպերք, կախաղան հանէք դրան: Թող նրա վրա քիչ ճուճի, թէ չէ այստեղ տխրում է: Ինձ բարձրացրին: Հայիւ կի դիմանումս ոտքերս վրա: Մօտեցրին այն ծառին, որի վրա պարանի էր կախւած, և սկսեցին բարձրացնել արկիւր վրա: Այստեղ ևս նորից կողքի գիտակցութիւնը:
Երբ աթնացայ, ինձ հերթով համբուրում էին սպան և Կամօն: Ոչինչ չհասկանալով՝ ես աչքերս յանել էի նրանց: Կամօն հանդատացնում էր ինձ՝ սակելով, թէ սա միայն փորձ էր, որ սպան Աթարբէգեանն է, որ ամէն ինչ անցել է և վախենալու ոչինչ չկայ:
Կամաց-կամաց սկսեցի նպականալ, թէ բանն ինչումն է:
Կամօն նորից պառկեց նախկին տեղը: «Ձիւնորները» մէկը արկիւրից հանեց մի կատու և սկսելով մեխեց դեռնին, իսկ Աթարբէգեանը կատուն սրով կարատեց և արիւնոտ փորոտիքը հանելով՝ դրեց պարկած Կամօի կրծքին ու վզին:
Անտառից բերին հետևեալ ընկերոյ: Աթարբէգեանը խիստ կիցւածք ընդունելով՝ սկսեց հարց ու փորձ անել նրան՝ սպասանիլքներով ու հայհոյանքներով: Հարցաքննուողն ըկաւ Աթարբէգեանի ոտքերը և համբուրելով կօշիկները՝ խոստացաւ ամէն ինչ խոստովանել, միայն թէ ննայն իրեն:
— Տէ՛ք մէկ ուրիշին, սա շատ է թոյլ:

Բերին մեր խմբից մի ուրիշին, որը հազիւ տեսնելով Աթարբէզեանին՝ պաշտօնադէմն ձայնեց.

— Ընկե՛ր... պարո՛ն սպայ, ներէջ ինձ. ես նրանց մօտ աշխատում էի դրամի համար... Ես ոչ մի համար մունջ չունեմ... Ես ապրել եմ ուղում... Ինչ ուղում էք կանեմ, միայն թէ կենդանի թողէք... Ես...

— Բաւական է, ընդհատեց Աթարբէզեանը՝ ոտքով չընկող նրան: Ինչո՞ւ կ'ապացուցանես սասմա՞նք:

— Ինչով կ'ուզէք, սողում էր ոտքերի տակ փորձի ենթարկողը: Հրամայէ՛ք, ամէն ինչ կանեմ...

• Բիշ մտածելուց յետոյ, Աթարբէզեանը հարցրեց.

— Ընկերոջը կը զնդակահարե՞ս:

— Ուրախութեամբ... ձեզ համար...

Երևում էր, որ խօսք շէր դտնում, և նրա գէմքը ծոռուց թշուառ ժպտից:

— Սրան ճանաչում ե՞ս, ցոյց տւեց Աթարբէզեանն արդէն փորձի ենթարկւածներին մէկին:

— Այո՛, մանկութիւնից:

— Ուրեմն, պէտք է նրան զնդակահարես, շարունակեց Աթարբէզեանը՝ լեցնելով հրացանը և տալով փորձուղին: Աթարբէզեանը հինգ շայի վրա կ'ապրեցնեց ընդ զնդակահարութեան վճուածին:

— Պատրա՛տ, հրամայեց նա:

— Մի՛շա, մի՞թէ թոյլ կը տաս քեզ, աղբրսց զնդակահարողը:

— Նշան ա՛ն, շարունակեց Աթարբէզեանը:

Փորձուղը սաստիկ շտպում էր, ձեռները դողում էին: Դեռ հազիւ էր Աթարբէզեանը արտասանել «կրա՛կ», որ նա իջեցրեց բլթակը... Բայց փամփուշտը շտրաբեց: Մէկ ուրիշ փամփուշտ ուղեց: Կամօն, վայրենի հայհոյանքով ցատկեց տեղեց ու յարձակեց կրակողի վրա:

— Կը սաստկացնեմ, չո՛ւն:

Նրան բռնեցին մի քանի հողի՛ թոյլ շտալով, որ ստորձանակը հանի պատեանից:

* * *

Լուռ վերադառնում էինք Մոսկւա: 18 հոգուց փորձութեան դիմացան միայն ինը: Լեհական սպայակոյտի լրտեսը զնդակահարեց: Միւսին իր մօտ տարաւ Աթարբէզեանը... Մնացած եօթը հողին, որպէս մարտական խմբի համար անպէտքներ, յետ ուղարկւեցին:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային հարցի մասին (խմբագրական)	65
Մերձաւոր Արևելքի կենտրոնները (Վ. Փափազեան) 67	
Ընթացի (Ե. Տրանդեան)	71
Փոքր ազգերու ազատագրութեան խնդիրը և ուժերու հարստարկչառութիւնը երկ նիւստագիտութեան մէջ (Վ. Շուշանեան)	75
Էջեր իմ օրագրից (Աշոտ)	79
Կախարդական շրջան (Ս. Վերեջակ)	83
Թուրքիոյ շուրջը	86
Բուրա ազգերի աշխատանքներին	88
Ընկերավարական բրոնիզ	91
Թղթակցութիւններ	93
Մօտիկ անցեալից	93
Զեկիստի յիշողութիւնները	94

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Բաժանորդներէն և դործակալներէն կը խնդրենք՝ շտապել փակելու իրենց հաշիւները: Օր առաջ պէտք է ուղարկել ընթացիկ տարւայ բաժանեզինները:



« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2Փր. 50 սանառ.

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«ԴՐՕՇԱԿ»-ի տարեկան բաժանեզինն է Ֆրանսայի, Յունաստանի, Բուլգարիայի, Ռումանիայի, Եւրոպական այլ երկիրներէ, Սիւրիայի և Պարսկական Ատրպատականի համար՝ 25 ֆրանս. ֆրանկ:

Անգլիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Պաղեստինի, Միջագետքի, Պարսկաստանի, Հնդկաստանի և մնացած բոլոր երկիրներէ համար՝ երկու դուար:

Բաժանորդագրել կարելի է Իւրաքանչիւր ամսի սկզբից:



Մի շարք քիւրիացուքիւնների վերջ տալու համար, խնդրում ենք մեր գործակալներին և բաժանորդներին, նամակներ գրելու և, մանաւանդ, դրամական առաքումների ժամանակ (մանտա-փոստեր) հասցէն գրել լրիւ ու անպայման ամբողջութեամբ ղնել Mademoiselle բառը S. Agopian-ից առաջ:

«ԴՐՕՇԱԿ»-Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէն՝

M¹⁰ S. AGOPIAN.
5, rue des Gobelins, 5. Paris (13^e)